

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՀՈՎԻՏԱՆԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ ԿՈԼՈՂՅԱՅԻ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՈՒ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ (ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.03 - մասնավոր իրավունք (քաղաքացիական առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտություններին թեկնածուի գիտական աստիճանի համար

**Գիտական ղեկավար՝
Ի.գ.դ., պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆԸ 18

§ 1. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հասկացող թյուրևեզը և դրանց վերակազմակերպման էությունը 18

§ 2. Վերակազմակերպումը որպես իրավաբանական անձանց ստեղծման և դադարման ձև 33

ԳԼՈՒԽ2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ... 56

§ 1. Միացումը և միանձնումը որպես վերակազմակերպման համախմբող ձևեր 56

§ 2. Բաժանումն ու առանձնացումը որպես վերակազմակերպման ապախոչորացող ձևեր 94

§ 3. Վերակազմավորման իրավական կարգավորման առանձնահատկությունները 117

ԳԼՈՒԽ3. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒ ԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ 128

§ 1. Պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը վերակազմակերպման գործընթացում 128

§ 2. Վերակազմակերպվող իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը 152

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ..... 179

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ 188

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱստեՆախոսու թյան թեմայի արդիականությունը: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձինք¹, հատկապես տնտեսական ընկերությունները հանդիսանում են տնտեսական հարաբերություններ հիմնական մասնակիցները, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներին մասնակցության ներկայացված մանկություն ազգային տնտեսության զարգացման, շուկայական հարաբերությունները բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանության նպատակով ժամանակակից քաղաքացիական օրենսդրությունը պետք է միտված լինի ապահովելու նման տնտեսվարող սուբյեկտների համար գործառնական այնպիսի բարենպաստ պայմաններ, որի շնորհիվ վերջիններս կկարողանան ավելի արագ հարմարվել արտաքին և ներքին տնտեսական միջավայրի, ինչպես նաև շուկայի կառուցվածքի փոփոխություններին: Նշված իրավիճակում բիզնեսի վերականգնման արդյունավետ գործիքներից է համարվում իրավաբանական անձի վերակազմակերպումը:

Ներկայումս կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը հանդիսանում է լայնորեն տարածված կորպորատիվ գործընթաց, որի միջոցով տնտեսական ընկերությունները կարողանում են հասնել իրենց բիզնեսի ֆինանսական և կազմակերպական հիմքերի բարելավմանը: Վերակազմակերպման գործընթացի միջոցով պահպանվում է քաղաքացիական շրջանառության կայունությունը, ապահովվում է երրորդ անձանց հանդեպ ունեցած իրավունքների և պարտավորությունների ամբողջական իրավահջորդությունը, հնարավորինս երաշխավորվում են իրավաբանական անձի պարտատերերի իրավունքները, կրճատվում են ժամանակային միջոցների ծախսերը, արտադրական կապիտալը չի բաժանվում իրավաբանական անձի մասնակիցների միջև և դուրս չի գալիս քաղաքացիական շրջանառությունից: Նշվածի արդյունքում վերակազմակերպման կառուցակարգը հանգեցնում է կազմակերպական և ֆինանսական ավելի նշանակալից արդյունքների:

¹ Հետագա շարադրանքում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց նշելու նպատակով օգտագործվելու է նաև «կորպորացիա» եզրույթը:

Այդ ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը² և կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին կազմակերպարավական ձևերի վերաբերյալ հատուկ օրենքները չեն ապահովում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացի կարգավորման այնպիսի մակարդակ, որի պայմաններում վերակազմակերպման կառուցակարգի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան առավել արդյունավետ հասնելու այն նպատակներին, որոնց համար նախաձեռնել են վերակազմակերպման գործընթացը:

Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի բանաձևում վերակազմակերպման ձևերի էությունը, կարգավորում է միայն վերակազմակերպման սկզբի, վերջնարդյունքի և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարաբերությունները, ընդհանրապես չի անդրադառնում վերակազմակերպվող իրավաբանական անձի, նրա մասնակիցների իրավունքներին և դրանց պաշտպանության խնդիրներին, իսկ պարտատերերի իրավունքներին անդրադառնում է ընդհանրացված և անորոշ: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը կորպորացիայի առանձնահատկություններով պայմանավորված էականորեն տարբերվում է ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումից դրա իրականացման ընթացակարգով և կորպորացիայի ու նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, իսկ Քաղաքացիական օրենսգրքով և կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին տեսակների վերաբերյալ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգավորումները, ըստ էության, նման հնարավորություն չեն ընձեռում: Կորպորատիվ տիպի առանձին կազմակերպարավական ձևի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքները (օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները) վերակազմակերպման ընթացակարգեր չեն նախատեսում և հղում են կատարում Քաղաքացիական օրենսգրքին,

² Այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.1998թ, ուժի մեջ է մտել 01.01.1999թ: Տե՛ս ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):

որը նշված ընթացակարգերը լիարժեք կերպով չի կարգավորում: Նշվածն ընդգծում է քննարկվող խնդիրների արդիականությունը և դրանց լուծման առավել հրատապությունը:

Գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի, նրա մասնակիցների, պարտատերերի իրավունքների պաշտպանության բավարար մակարդակ, շատ դեպքերում խոչընդոտում են կազմակերպության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացմանը, իսկ որոշ դեպքերում՝ զրկում վերակազմակերպման գործընթացում իրենց իրավունքները պաշտպանելու անգամ նվազագույն հնարավորությունից:

Բացի այդ, հարկադիր վերակազմակերպմանը վերաբերող հիմնահարցերը հայրենական գրականության մեջ բավարար չափով ուսումնասիրված չեն, իսկ առկա օրենսդրական կարգավորումներն էլ դրա գործնական իրացման ընթացքում կարող են առաջացնել կորպորացիայի և նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության բազմաթիվ խնդիրներ: Անհրաժեշտ մակարդակի վրա չեն գտնվում նաև վերակազմակերպման՝ շուկայում բնականոն մրցակցության համար ունեցած հնարավոր ազդեցությունները գնահատելու և բացասական ներգործությունը կանխելու իրավական կառուցակարգերը:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման ընթացքում ծագող վերը նշված գիտական և գործնական խնդիրների կարևորությամբ և դրանց լուծման առաջնահերթությամբ էլ պայմանավորված է ատենախոսության թեմային ընտրությունը:

Յետադոտության նպատակները և խնդիրները: Յետադոտության հիմնական նպատակն է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց (տնտեսական ընկերությունների օրինակով) բնութագրական հատկանիշների հիման վրա դրանց վերակազմակերպման առանձնահատկությունների վերհանումը, վերակազմակերպման, դրա առանձին ձևերի համակարգային ուսումնասիրությունը, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց նկատմամբ վերակազմակերպման կառուցակարգի և դրա առանձին ձևերի կիրառման ընթացքում առաջացող խնդիրների վերհանումը և

օրենսդրության կատարելագործման համար առաջարկներին մշակումը:

Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել վերակազմակերպման ինստիտուտը կարգավորող իրավական նորմերը,

- վեր հանել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման առանձնահատկությունները,

- վերլուծել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման խնդիրները, բացահայտել վերակազմակերպման երկթյունը, ինչպես նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում իրավաաջորդության իրավական բնույթը, բովանդակությունն ու առանձնահատկությունները,

- վեր հանել վերակազմակերպման, ինչպես նաև դրա ձևերի հիմնական բնութագրական հատկանիշները, ձևակերպել «վերակազմակերպում» հասկացությունը և դրա առանձին ձևերի հասկացությունները,

- բնութագրել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացը, դրա փաստաթղթային ձևակերպումների առանձնահատկությունները,

- ուսումնասիրել և վերհանել հարկադիր վերակազմակերպման իրավական կարգավորման հիմնախնդիրները և դրա ազդեցությունը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, նրանց մասնակիցների և պարտատերերի իրավունքների վրա,

- դիտարկել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացի ազդեցությունը շուկաներում բնականոն մրցակցության վրա,

- քննարկել վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի, նրա մասնակիցների և պարտատերերի իրավունքների պաշտպանության խնդիրները,

- ներկայացնել և հիմնավորել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Յետազոտության օբյեկտը և առարկան: Յետազոտության օբյեկտն են հանդիսանում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերականգնման կապակցությամբ առաջացող հարաբերությունները՝ տնտեսական ընկերությունների օրինակով, իսկ առարկան՝ վերականգնման մեթոդները և դրա իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Յետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:

Ժամանակակից քաղաքացիական իրավունքի տեսությունը բավականին մեծ ուշադրություն է դարձնում վերականգնման ինստիտուտի հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Արտասահմանյան տարբեր երկրների քաղաքացիական տեսությունում առկա են վերականգնման ինստիտուտի կարգավորմանը նվիրված տարբեր աշխատություններ: Յետազոտության տեսական հիմքն են կազմել ինչպես հայրենական հեղինակների, այնպես էլ ռուս, գերմանացի, անգլիացի հեղինակների աշխատությունները: Հայաստանյան հեղինակներից ուսումնասիրվել է պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանի «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով)» դոկտորական ատենախոսությունը, քննարկվող թեմային, ինչպես նաև դրա հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ թեմաներին վերաբերող նրա տարբեր աշխատություններ և գիտական հոդվածներ, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանի «Գործարարական իրավունք» դասագիրքը և այլ աշխատություններ, ինչպես նաև այլ գիտնականների հեղինակած աշխատանքներ: Արտասահմանյան հեղինակներից ուսումնասիրվել են Յ.Կ. Տոլստոյի, Վ.Վ. Վիտրյանսկու, Ս.Ն. Բրատուսի, Վ.Ա. Բելովի, Ե.Ա. Սուխանովի, Դ.Վ. Ժդանովի, Տ.Կ. Սավինեի, Ա.Ֆ. Բրինցի, Ջ. Հիերինգի, Ռ. Սալեյլի, Բորկի, Դ. Արմենտաուի, Ջ. Աշերի, Հ. Կալմեյերի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատությունները:

Հայրենական քաղաքացիական իրավունքը հարուստ է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերականգնման վերաբերյալ տեսական ուսումնասիրություններով և գիտական մոտեցումներով: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց

վերակազմակերպման հիմնահարցերին բազմակողմանի և համընդգրկուն կերպով անդրադարձել է միայն պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը իր «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով)» մենագրությունում, որում բացահայտվել են ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ, դրանց լուծման ընդհանուր ուղղություններ և հնարավորությունները նաև համակողմանի գիտագործնական ուսումնասիրություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Քաղաքացիական օրենսգիրքը, առանձին կազմակերպարավական ձևի իրավաբանական անձանց վերաբերյալ հատուկ օրենքները, տնտեսական մրցակցության պաշտպանության և բանկային գործունեության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, դատական պրակտիկան, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի Թագավորության, Ֆրանսիայի՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:

Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել ինչպես օբյեկտիվ իրականության ընկալման համագիտական, այնպես էլ հատուկ գիտական մեթոդները՝ դիալեկտիկական, պատմական, դեդուկցիան և ինդուկցիան, համեմատական-իրավական, համակարգակառուցվածքային, վիճակագրական և այլն: Հետազոտության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդներին: Թվարկված մեթոդներն իրենց ամբողջության մեջ թույլ են տվել հնարավորինս լուծել հետազոտությամբ հետապնդվող նպատակների համար առաջադրված գիտական խնդիրները:

Արեւախոսություն գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս բազմակողմանի և համալիր քննարկել և վերլուծել կորպորատիվ տիպի իրավաբանական

անձանց վերակազմակերպման ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրները: Նշված վերլուծությունները կատարվել են Քաղաքացիական օրենսգրքի, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին կազմակերպարավանական ձևերի հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող հատուկ օրենքների, այլ իրավական ակտերի, արտասահմանյան միջառքերի կրկնների համամասն օրենսդրության համեմատարարական ուսումնասիրության, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտերի, արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի, տեսության մեջ արտահայտված կարծիքների համակարգային վերլուծության հիման վրա: Հետազոտվել են հայրենական գիտական գրականության մեջ դեռևս չուսումնասիրված կամ ոչ ամբողջովին ուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հարկադիր վերակազմակերպման ինստիտուտը, վերակազմակերպման գործընթացի՝ բնականոն մրցակցության վրա ունեցած ազդեցությունը, բանկերի միացման ոլորտում միացող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները և այլն: Նշվածի արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Առենախոսության գիտական նորույթը ակնհայտորեն դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Քաղաքացիական օրենսգրքը հստակ չի բանաձևում վերակազմակերպման ձևերի էությունը, կարգավորում է միայն վերակազմակերպման սկզբի, վերջնարդյունքի և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարաբերությունները, չի անդրադառնում վերակազմակերպվող իրավաբանական անձի և դրա մասնակիցների իրավունքների պաշտպանության հարցերին, ինչը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց և դրանց

վերակազմակերպման առանձնահատկություններով և էական տարբերություններով պայմանավորված կարող է վնասել կորպորացիայի շահերին և խախտել դրա մասնակիցների իրավունքները: Բացի այդ, առանձին կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքները (օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները) վերակազմակերպման ընթացակարգեր չեն նախատեսում և հղում են կատարում Քաղաքացիական օրենսգրքին, ինչը նման իրավական անորոշության պայմաններում կարող է հանգեցնել վերակազմակերպման այս կամ այն ձևի ոչ ճիշտ ընկալմանը և կիրառմանը դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Միաժամանակ, վերակազմակերպման ձևերի հասկացությունների բացակայության արդյունքում կորպորացիաների վերակազմակերպումը, շտաբայքերում, ըստ էության, վերածվում է բաժնետոմսերի (բաժնեմասերի) առուվաճառքի, զրկում վերակազմակերպող կորպորացիայի մասնակիցներին վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքից՝ հանգեցնելով կորպորացիայի վերակազմակերպման դեպքում դրա մասնակիցների կազմի անփոփոխելիության սկզբունքի խախտման:

Վերը նշված խնդիրները լուծելու նպատակով կատարված ուսումնասիրության արդյունքում կորպորացիաներին բնութագրական հատկանիշների հիման վրա վերհանվել են դրանց վերակազմակերպման առանձնահատկությունները և առաջարկվել է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել վերակազմակերպման ձևերի հասկացությունները (վերակազմակերպման բոլոր ձևերի հասկացությունները ներկայացված են սույն աշխատանքի եզրակացության 4-րդ կետում), որոնք կարող են հավասարապես վերաբերել ինչպես կորպորատիվ, այնպես էլ ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկադիր վերակազմակերպումը հանդիսանում է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց նկատմամբ ներգործության բացառիկ միջոց,

հանգեցնում է ոչ միայն կորսորացիայի, այլ նաև դրա մասնակիցների իրավունքների էական սահմանափակմանը, քանի որ հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ դատարանի վճռի հիման վրա կորսորացիայի մասնակիցները զրկվում են դրա կառավարմանը մասնակցելու իրավունքից, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկադիր վերակազմակերպմանը վերաբերող իրավակարգավորումները խիստ անորոշ են և ոչ ամբողջական, առաջացնում են հարկադիր վերակազմակերպման ինստիտուտի ընկալման, մեկնաբանման և կիրառման խնդիրներ՝ հարկադիր վերակազմակերպման գործնական կիրառման արդյունքում կորսորացիայի և դրա մասնակիցների իրավունքների անհամաչափ սահմանափակումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով, որ հարկադիր վերակազմակերպումը կիրառվում է մրցակցային օրենսդրության խախտումների դեպքում՝ առաջարկել ենք «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

ա) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահել տնտեսվարող սուբյեկտի հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու և լիազորություն և,

բ) սահմանել գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաչափած սուբյեկտի նկատմամբ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հարկադիր վերակազմակերպման (ապախոշորացման) վերաբերյալ որոշում ընդունելու չափորոշիչները: Որպես ընդունելի և միջազգային պրակտիկայում լայնորեն ընդունված չափորոշիչներ մենք առաջարկել ենք հետևյալ երկու չափանիշները, որոնք հարկավոր է գնահատել իրենց համակցության մեջ՝

1) գոյություն ունի կազմակերպության ենթակառուցվածքների առանձնացման իրական հնարավորություն և,

2) վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպություններն ունեն իրական հնարավորություն ինքնուրույն գործելու ապրանքային շուկայում:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորսորատիվ տիպի իրավաբանական անձիք, հատկապես տնտեսական ընկերությունները

հանդիսանում են շուկայական հարաբերությունների հիմնական մասնակիցները, ազդում են շուկայի կառուցվածքի վրա, թելադրում են դրա գործառման հիմնական կանոնները, որի արդյունքում նաև դրանց վերակազմակերպման գործընթացները ազդեցություն են ունենում բնականոն տնտեսական մրցակցության վրա՝ կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (միացումը և միաձուլումը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են համակենտրոնացման տեսակներից) համակենտրոնացման տեսակները սահմանելիս տնտեսվարող սուբյեկտների՝ որևէ ապրանքային շուկայում գործելու պարտադիր նախապայմանը հիմք ընդունելու, ինչպես նաև հայտարարագրման համար անհրաժեշտ ակտիվի կամ հասույթի շեմերը համակենտրոնացմանը նախորդող տարվա ցուցանիշների հետ պայմանավորելու արդյունքում հնարավոր չի լինում որոշել համակենտրոնացող, սակայն որևէ ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման տեսակը, իսկ համակենտրոնացման կայացման տարում ստեղծված և միացման կամ միաձուլման ձևով վերակազմակերպվող կորպորացիաները հայտարարագրման համար անհրաժեշտ ակտիվի կամ հասույթի շեմերը հաղթահարելու դեպքում դուրս են մնում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անհրաժեշտ վերահսկողության շրջանակներից՝ վերակազմակերպման կառուցակարգի կիրառման միջոցով կապիտալի կենտրոնացման և շուկայում մասնաբաժնի ավելացման արդյունքում հնարավորություն ստանալով միակողմանիորեն ազդել ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների վրա, ձեռք բերել գերիշխող դիրք՝ նպաստելով շուկաներում կենտրոնացվածության աստիճանի բարձրացմանը և շուկամուտքի խոչընդոտների առաջացմանը:

Ուստի, առաջարկվել է ապրանքային շուկայում գործելու հանգամանքը չդիտարկել պարտադիր նախապայման համակենտրոնացման տեսակը որոշելիս, իսկ որևէ ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող

սուբյեկտների համակենտրոնացումը դիտարկել խառը համակենտրոնացում և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանել, որ մեկ տարուց պակաս ժամանակահատվածով գործունեություն իրականացրած լիներու դեպքում համակենտրոնացման հայտարարագրման համար հիմք են ընդունվում համակենտրոնացմանը նախորդող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ակտիվի արժեքի կամ ստացած հասույթի չափերը:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերակազմավորման հիմքում ընկած «իրավաբանական անձի տեսակ» և «իրավաբանական անձի կազմակերպարավական ձև» իրավական եզրույթները ՀՀ օրենսդրությամբ բացահայտված չեն, իսկ տեսության մեջ չկա դրանց էություն և փոխհարաբերակցության վերաբերյալ միասնական մոտեցում, ինչպես նաև այն հանգամանքը, որ շատ դեպքերում նշված եզրույթները նույնացվում և օգտագործվում են միևնույն բովանդակությամբ՝ հանգեցնելով վերակազմավորման՝ որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի ոչ ճիշտ ընկալման՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ նշված եզրույթները հարաբերակցվում են ինչպես ընդհանուրն ու դրամասը, քանի որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մեկ տեսակի մեջ կարող են լիներ մի քանի կազմակերպարավական ձևեր: Նշվածի արդյունքում, չնայած տեսության մեջ ընդունելի այն տեսակետին, որ վերակազմավորումը միայն իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի փոփոխությունն է, որը նույն բովանդակությամբ ամրագրվել է նաև օրենսդրությամբ, առաջարկվել է վերակազմավորման իրավական բովանդակության վերաբերյալ այլ մոտեցում, որի համաձայն վերակազմավորումը ոչ միայն կազմակերպարավական ձևի, այլ նաև իրավաբանական անձի տեսակի փոփոխությունն է:

5. Վերակազմավորման որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի էություն և առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմավորման դեպքում գերակայող է

իրավաբանական բաղադրատարրը, քանի որ կորպորացիան կարող է վերակազմավորվել միայն օրենքով նախատեսված այլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, որի արդյունքում տեղի են ունենում կորպորացիայի գործառման հիմնական կանոնների զուտ իրավական փոփոխություններ, կորպորացիայի գույքի կազմը փոփոխության չի ենթարկվում, քաղաքացիաիրավական հարաբերություններում վերակազմավորման արդյունքում ստեղծված կորպորացիան հանդիսանում է իրավանախորդի բոլոր պարտավորությունների լիիրավ իրավահաջորդը, որի արդյունքում վերակազմակերպման ընթացքում կորպորացիայի պարտատերերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն, ըստ էության, չի առաջանում: Ուստի, առաջարկվել է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել, որ վերակազմավորման դեպքում պարտատերերը չեն կարող օգտվել իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված իրենց իրավունքներից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավահաջորդ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևը կամ տեսակը պարտատերերին չի տալիս այն իրավաբանական հնարավորությունները, որոնք տալիս էր իրավանախորդ կազմակերպության կազմակերպաիրավական ձևը կամ տեսակը:

6. Հարկադիր վերակազմակերպումը հետապնդում է հանրային շահերի ապահովման նպատակ, որի արդյունքում դրա անխոչընդոտ իրականացումը օբյեկտիվորեն ապահովում է Սահմանադրությամբ նախատեսված ազատ տնտեսական մրցակցության սկզբունքի և շուկայում գերիշխող դիրքը չարաչափելի արգելքի իրացումը, իսկ ՀՀ օրենսդրությամբ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերին կամավոր և հարկադիր վերակազմակերպումների դեպքում միևնույն իրավունքների շրջանակ վերապահելը կարող է եսպես խոչընդոտել վերը նշված սահմանադրական նպատակներին հասնելուն, քանի որ վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի պարտատերերն ունեն վերակազմակերպման ընթացքի վրա ազդելու իրական հնարավորություն: Մյուս կողմից, առանց անհրաժեշտ ուշադրության չի կարող մնալ նաև վերակազմակերպվող կորպորացիայի պարտատերերի իրավունքների պաշտպանության օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ սեփականության

իրավունքի պաշտպանություն և պարտավորական հարաբերություններին կայունությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի, առաջարկվել է, որ հարկադիր վերակազմակերպման դեպքում պարտատերերը վերակազմակերպմամբ պայմանավորված իրենց պահանջները ներկայացնելիս չպետք է իրավունք ստանան պահանջելու նաև վերակազմակերպման գործընթացի կասեցում կամ դադարեցում, պարտատերերի կողմից ներկայացված պահանջները մինչև հարկադիր վերակազմակերպման ավարտը չբավարարվելու դեպքում այդ պահանջներով պարտավորությունները իրավահաջորդությամբ պետք է անցնեն հարկադիր վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպություններին, իսկ որոշակի պարտավորության մասով իրավահաջորդին որոշելու անհնարինության դեպքում բոլոր իրավահաջորդները պետք է կրեն համապարտպատասխանատվություն:

7. Չափի առնելով այն հանգամանքը, որ կորպորացիաները հանդիսանում են առևտրային հարաբերություններին հիմնական մասնակիցները, որոնց շահույթաբերությունը վարչական պատասխանատվության ենթարկվելու արդյունքում էականորեն նվազում է պատասխանատվության ենթարկված սուբյեկտի ներդրումային և գործարար գրավչության անկման և օտարերկրյա ներդրումների ներգրավելու հնարավորություններին սահմանափակման արդյունքում՝ պատասխանատվության ենթարկված կորպորացիայի իրավահաջորդների ու դրանց մասնակիցների իրավունքների պաշտպանություն և նրանց նկատմամբ հնարավոր կիրառման ենթակա իրավական ակտերի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով առաջարկվել է՝

1) հստակեցնել վարչական պատասխանատվության իրավահաջորդության անցման պահը՝ վարչական պատասխանատվության իրավահաջորդ ճանաչելով ոչ միայն արդեն իսկ բացահայտված իրավախախտման համար պատասխանատու և վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդներին, այլ նաև վարչական իրավախախտում կատարած և իրավախախտում կատարելուց հետո վերակազմակերպված իրավաբանական անձի

իրավահաջորդներին այն դեպքում, երբ իրավախախտումը բացահայտվել է իրավաբանական անձի վերականգնման գործում:

2) սահմանել, որ իրավաբանական անձի բաժանման դեպքում վարչական պատասխանատվության ենթակա է այն իրավաբանական անձը, որին, ըստ բաժանիչ հաշվեկշռի, անցել է այն ապրանքներն իրացնելու, ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու իրավունքը, որոնց շրջանառության ոլորտում կատարվել է իրավախախտումը, դրան հետևող իրավաբանական անձը, որին ըստ բաժանիչ հաշվեկշռի անցել է գույքի առավել մեծ մասը՝ արժեքային արտահայտությամբ, գույքի հավասարաչափ բաժանման դեպքում՝ իրավահաջորդ բոլոր իրավաբանական անձինք, իսկ եթե հետևող չէ որոշել փոխանցված գույքի համամասնությունը, ապա իրավահաջորդները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն:

Յեռագոտության տեսական և գործնական նշանակությունը:

Յեռագոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության մեջ վերլուծված և առաջ քաշված եզրահանգումները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն քաղաքացիական իրավունքի համար, այլ նաև իրավունքի գիտության համար ընդհանրապես: Աշխատանքի արդյունքներն իրենց ամբողջության մեջ համարվում են հեղինակի ներդրումը քաղաքացիական տեսության մեջ, հատկապես վերականգնման, դրան անբակտելի հատկանիշ համարվող իրավահաջորդության ինստիտուտների իրավական էության բացահայտման, վերականգնման առանձին ձևերի իրավական կարգավորման առանձնահատկությունների և վերականգնման գործընթացում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության հարցերի խորքային ուսումնասիրության համատեքստում: Յեռագոտության արդյունքները կարող են օգտագործվել վերականգնման ինստիտուտին առնչվող խնդիրների վերաբերյալ հետազոտությունասիրությունների ընթացքում:

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության մեջ ներկայացված եզրակացությունները և դիտարկումները կարող են գործնականում իրացվել իրավաստեղծ

գործունեության ոլորտում օրենսդրության բացերը, թերությաններն ու հակասությունները վերացնելու համար, դրականորեն ազդել իրավակիրառ պրակտիկայի վրա՝ բարձրացնելով համապատասխան հասարակական հարաբերությունների սուբյեկտների մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսության

արդյունքների

փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական գեկոլյցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված ընդհանուր առմամբ յոթ պարագրաֆներից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

**ԳԼՈՒԽ 1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆԸ**

**§ 1. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հասկացությունը
և դրանց վերակազմակերպման էությունը**

Հասարակական հարաբերությունների զարգացումը և տարաբնույթ դրսևորումները ժամանակի ընթացքում ստիպեցին մարդկանց իրենց անձնական շահերի բավարարման նպատակով միավորվել խմբերի մեջ՝ ներդնելով անձնական միջոցները և ջանքերը՝ կոնկրետ նպատակի հասնելու համար: Նման միավորումների արդյունքում առաջանում են քաղաքացիաիրավական հարաբերությունների անձնական (անհատական) մասնակցությունից զատ նաև կոլեկտիվ մասնակցության ձևեր: Քաղաքացիաիրավական հարաբերություններում կոլեկտիվ մասնակցության հիմնական ձևն իրավաբանական անձն է:

Իրավաբանական անձի առաջացումը, ընդհանուր առմամբ, պայմանավորված է այն նույն հանգամանքներով, որոնք նախանշեցին նաև իրավունքի զարգացումը: Դրանք են, մասնավորապես, հասարակության սոցիալական կազմակերպման բարդացումը, հասարակական գիտակցության և տնտեսական հարաբերությունների զարգացումը: Տնտեսական զարգացման որոշակի փուլում քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորումը \$իզիկական անձանց մասնակցությամբ՝ որպես մասնավոր իրավունքի միակ սուբյեկտներ, արդեն բավարարչեր զարգացող տնտեսական հարաբերությունների համար: Հիմնականում այս հանգամանքներով կարելի է բացատրել իրավաբանական անձի՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների կոլեկտիվ մասնակցի առաջացումը³:

³ Տե՛ս Գրաքննարկը, Գրքեր, խմբագրված Ա. Ս. Սերգևա, Յ.Կ. Տոլստոյ, Մ., 2005, էջ 141:

Տեսական գրականության մեջ իրավաբանական անձանց ծագումը կապում են հռոմեական իրավունքի հետ: Յ.Կ. Տոլստոյը նշում է, որ արդեն մ.թ.ա II-ի-ին դարերում հռոմեական կայսրության իրավաբանների կողմից քննարկվում էր անբաժանելի, ընդհանուր գույք տիրապետող կազմակերպությունների գոյությունը, որոնք քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում էին իրենց անունից, և որոնց գոյությունը կախած չէր դրա մասնակիցների կազմի փոփոխություններից: Սակայն հռոմեական իրավագետներին «իրավաբանական անձ» հասկացությունը հայտնի չէր: Դրա փոխարեն լայնորեն կիրառվում էր «կորպորացիա» եզրույթը, որը ծագել է լատիներեն «corpus habere» արտահայտությունից, որը նշանակում է իրավաբանական անձի իրավունք⁴: Հռոմեացի իրավաբանները ֆիզիկական անձանց միավորումները բաժանում էին երկու խմբի`

- հանրային իրավունքի անձանց միավորումներ` մունիցիպալներ, տարածքային միավորումներ, համայնք, հանրապետական և կայսերական գանձարաններ և այլն,

- մասնավոր իրավունքի անձանց միավորումներ, որոնց շարքին էին դասվում տարատեսակ մասնագիտությունների տեր արհեստական միավորումները⁵:

Որպես անձանց միավորումներն արտահայտող եզրույթներ օգտագործվում էին *societas*, *collegia* (ընկերություն) և *universitates* (կորպորատիվ միավորում) արտահայտությունները: Ընդ որում 12 աղյուսակների օրենքով անձանց միություններին թույլատրվում էր ունենալ կանոնադրություն` պայմանով, որ դա չհակասի հանրապետական օրենքներին⁶:

Տնտեսական հարաբերությունների արագընթաց զարգացումը հանգեցրեց իրավաբանական անձանց վերաբերյալ տարաբնույթ տեսությունների ձևավորմանը: 19-րդ դարում իրավաբանական անձանց էության հիմնախնդիրներին անդրադարձել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Սավինյեն, Հիերինգը, Գիրկեն,

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Հռոմեական մասնավոր իրավունք, 2-րդ հրատ.՝ լրացումներով և փոփոխություններով, Եր.: ԵՊՀ հրատ., 2013թ., էջ 38:

⁶ Տե՛ս` **Ավետիսյան Վ.Դ.** նշված աշխատությունը, էջեր 38-39:

Դերնբորգը և ուրիշներ: «Իրավաբանական անձ» եզրույթը շրջանառության մեջ դրվեց հենց մեծապես Սավինյեի՝ գերմանացի իրավագետի ու սուլմնասիրության նեների միջոցով: Մինչև գերմանացի քաղաքացիագետների կողմից համապատասխան ու սուլմնասիրության նեների իրականացումը իրավագիտությանը հայտնի չէր «իրավաբանական անձ» եզրույթը և բոլոր կազմավորումները անվանվում էին universitas կամ կորպորացիաներ: Եվ միայն գերմանացի իրավագետների կողմից «հաստատության» եզրույթը շրջանառության մեջ դնելուց հետո «կորպորացիա» եզրույթը ձեռք բերեց ավելի ժամանակակից նշանակություն և սկսեց մեկնաբանվել որպես իրավաբանական անձ՝ հիմնված մասնակցության, անդամության վրա:

«Իրավաբանական անձ» քաղաքացիաիրավական կառուցակարգի մեկնաբանմանը, դրա էության բացահայտմանը նվիրված են տարաբնույթ տեսություններ, որոնցից շատերը լայն տարածում ունեն իրավաբանական գրականության մեջ:

Առաջին խումբ տեսությունները իրավաբանական անձը համարում են իրավակարգի արդյունք, արհեստական կառուցակարգ՝ ստեղծված օրենսդրի կողմից: Այդ տեսությունները կոչվում են «ֆիկտիվ» տեսություններ: Այդ մոտեցման հիմնադիրն է համարվում Յոհան Կապ Ինոկենտիոս IV-րդը, որը 1245 թվականին կորպորացիան եկեղեցուց անջատելու հարցի քննարկման ժամանակ նշել է, որ կորպորացիան չունի հոգի, գոյություն ունի միայն մարդկանց երևակայության մեջ: Նշված տեսությունը լայն տարածում գտավ 19-րդ դարում գերմանական քաղաքացիական իրավունքում: Այդ տեսության ականավոր ներկայացուցիչներից էր Ֆրիդրիխ Կառլ Ֆոն Սավինյեն⁷, որը իրավաբանական անձը համարում էր արհեստական սուբյեկտ, որը ստեղծվել է օրենսդրի կողմից միայն դրանց հետ սուբյեկտիվ իրավունքներ կամ պարտականություններ կապելու համար, որոնք կամ պատկանում են այդ անձանց մասնակիցներին կամ մնում են անսուբյեկտ: Սավինյեի կոնցեպցիան դարձավ իրավաբանական անձանց մասին հիմնարար տեսություններից մեկը և ստացավ «ֆիկցիայի տեսություն» անվանումը: Ֆիկցիայի

⁷ Տե՛ս **Savigny F.K.von.** System des heutigen romischen Rechts. Berlin, 1840, էջ 85:

տեսութեան կողմնակից էր նաև ռուս ակադեմիկոս իրավագետ և ցիվիլիստ Գ.Ֆ. Շերշենևիչը, որը միևնույն ժամանակ նշում էր՝ «իրավաբանական ֆիկցիաները հորինված կատեգորիաներ չեն և համարվում են ճանաչողութեան գիտական միջոցներ, իսկ իրավաբանական անձը շրջանառութեան արհեստական սուբյեկտ է, որը ստեղծվել է կոնկրետ նպատակների հասնելու համար»⁸: Ֆիկցիայի տեսութեան հետ որոշակի ընդհանուր գծեր ունենալու «անձնավորված նպատակի» տեսութեանը, որը առաջադրել է Ալոիզ ֆոն Բրինցը: Այդ տեսութեանը ժխտում էր իրավաբանական անձի իրական լինելը, համարում էր այն արհեստական կառույց, և քանի որ իրավաբանական անձի նպատակը գույքի կառավարումն է, ապա իրավաբանական անձը ոչ այլ ինչ է, քան հենց այդ անձնավորված նպատակը⁹:

Գերմանական իրավագիտութեան մեջ այդ ժամանակ գերակայող ֆիկցիայի տեսութեան կողքին առաջացավ նոր հայեցակարգ, որը իրավաբանական անձը դիտարկում էր որպէս յուրահատուկ սոցիալական օրգանիզմ սեփական կամքով, որը չէր նույնացվում դրան համարների կամքի հետ: Այդ տեսութեանը «օրգանական» տեսութեանն է, որն առաջ քաշեց Կառլ Գեորգ ֆոն Բեզլերը¹⁰: Օրգանական տեսութեանը իրավաբանական անձը բնորոշում էր որպէս հոգևոր-մարմնական օրգանիզմ: Ընդգծվում էր նաև, որ այնպիսի սոցիալական օրգանիզմների գոյութեանը, ինչպիսիք իրավաբանական անձիք են, ենթադրում է դրանց ճանաչումը օրենսդրորեն, այլ ոչ թե դրանց ստեղծումը օրենսդրի կողմից: Բեզլերի աշակերտ Օտտո Ֆրիդրիխ ֆոն Գիրկեն գտնում էր, որ իրավաբանական անձին հատուկ են իրավունքի սուբյեկտի բոլոր հատկանիշները՝ ինքնուրույն կամքը, շահերը, նպատակ սահմանելու և դրան հասնելու ունակութեանը¹¹: Օրգանական տեսութեանը իր արտացոլումը գտավ նաև ֆրանսիացի իրավագետ Պոլ Սալեյլի աշխատութեանն ենթարկում: Նա այդ տեսութեանը մաքրեց իրավաբանական անձի «կենսաբանականութեանից», որի

⁸ Տե՛ս **Шершеневич Г. Ф.** Учебник русского гражданского права, 1907, издательство “Статут”, 2005, էջեր 89-91:

⁹ Տե՛ս **Brinz A. von.** Lehrbuch der Pandekten. Erlangen, 1879, էջ 121:

¹⁰ Տե՛ս **Beseler K.G.von.** Volksrecht und Juristenrecht, 1843, էջ 148:

¹¹ Տե՛ս **Gierke O.F. von.** Deutsches Privatrecht. Berlin, 1895, էջ 132:

արդյունքում ձևավորվեց «իրատեսականություն» տեսությունը: Այդ տեսության համաձայն մարդկային հասարակությունը ամորֆ անհատականությունների միավորում է, այն կարող է գոյություն ունենալ միայն անձանց միավորումների համագործակցության, կապերի միջոցով, որոնք նույնքան իրական են, որքան դրանք կազմող մարդիկ: Այդ միավորումների շահերը չեն նույնանում դրանց մասնակիցների շահերի հետ, ինչպես կոլեկտիվի շահերը չեն նույնանում այդ կոլեկտիվի մեկ անհատի շահերի հետ: Յետևաբար, օրենքը չի ստեղծում ֆիկտիվ իրավաբանական կառուցակարգեր, այլ ճանաչում է այդ միավորումների՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ համարվելու փաստը¹²: Իրավաբանական անձանց վերաբերյալ տեսությունների շարքում ուրույն տեղն ունի Ռուդոլֆ Ֆոն Յիերինգի «շահերի տեսությունը»: Յիերինգը գտնում էր, որ իրավաբանական անձը որպես իրավունքի իրական-բնական սուբյեկտ գոյություն ունի: Ընդ որում, նա նշում էր, որ իրավունքը հանդիսանալով օրինական շահերի համակարգ, ապահովում է անձանց և նրանց կոլեկտիվների իրավունքների իրացումը և պաշտպանությունը, սակայն չի հանգեցնում նոր սուբյեկտի առաջացման¹³:

Խորհրդային ժամանակաշրջանում գերակայողը այդ ժամանակ համարվում էր կոլեկտիվի տեսությունը, որի համաձայն իրավաբանական անձը իրականում գոյություն ունեցող սուբյեկտ է, իր աշխատակիցների միավորում¹⁴: Յառորդ տեսությունը «պետության» տեսությունն է, որի համաձայն յուրաքանչյուր պետական ձեռնարկության հետևում կանգնած է նրա գույքի սեփականատերը՝ պետությունը, հետևաբար իրավաբանական անձի մարդկային սուբստրատը չպետք է նույնացնել աշխատավորների խմբերի հետ: Պետական ձեռնարկությունը ինքը պետությունն է, որը գործում է տնտեսության տարբեր ոլորտներում¹⁵: Երրորդ

¹² Տե՛ս **Salleiles R.** De la personalite juridique. Paris, 1910, էջ 225:

¹³ Տե՛ս **Jhering R.von.** Geist des romischen Rechts. Leipzig, 1865, էջ 74:

¹⁴ Տե՛ս **Венедиктов А. В.** Государственная социалистическая собственность М.-Л., 1948, **Братусь С.Н.** Юридические лица в советском гражданском праве, М., 1947, **Иоффе О. С.** Советское гражданское право. М., 1967, **Грибанов В. П.** Юридические лица. М., 1961:

¹⁵ Տե՛ս **Аскназий С.И.** Об основаниях правовых отношений между государ-ственными социалистическими организациями: Լենինգրադի իրավաբանական ինստիտուտի գիտական հոդվածներ, 4-րդ թողարկում, Մ., 1947:

տեսությունը, որն առաջ քաշեց Յ.Կ.Տոլստոյը, «դիրեկտորի» տեսությունն է, որի համաձայն՝ կազմակերպությանը իրավաբանական անձի իրավունքներով օժտելու հիմնական նպատակը քաղաքացիաիրավական հարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելն է, և քանի որ իրավաբանական անձի անունից հանդես է գալիս դրա տնօրենը, ուրեմն հենց ինքն է իրավաբանական անձի հատկանիշների կրողը¹⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ իրավաբանական անձանց վերաբերյալ այսքան տեսությունների առկայությունը կապված է իրավաբանական անձի որպես իրավական երևույթի բարդությունից: Այնուամենայնիվ, անկախ իրավաբանական անձի էության վերաբերյալ տարբեր տեսություններում առկա մոտեցումներից և հայացքներից, բոլոր տեսություններն էլ ընդունում են իրավաբանական անձի գոյության անհրաժեշտությունը, դրա դերը և նշանակությունը հասարակական հարաբերությունների կարգավորվածության և սոցիալական կապերի ներդաշնակ զարգացման, մարդկային տարաբնույթ ապահանջմունքների բավարարման գործում:

«Իրավաբանական անձ» իրավական կատեգորիան տարբեր երկրների օրենսդրությամբ տարբեր անվանումներ ունի: Գերմանական օրենսդրության մեջ այն անվանվում է «իրավաբանական անձ», ֆրանսիական օրենսդրությամբ՝ «բարոյական անձ», անգլո-ամերիկյան իրավունքում՝ «կորպորացիա»¹⁷:

Իրավաբանական անձը, հանդիսանալով հասարակական հարաբերությունների ակտիվ մասնակից, կատարում է հետևյալ ֆունկցիաները՝

- կոլեկտիվ շահերի ձևավորում. իրավաբանական անձի ինստիտուտը որոշակիորեն կարգավորում, կանոնակարգում է մասնակիցների հարաբերությունները միմյանց միջև, տրանսֆորմացիոնում է նրանց կամքը իրավաբանական անձի կամքի՝

¹⁶ Տե՛ս **Толстой Ю.К.** Содержание и гражданско-правовая защита правособственности в СССР. Л., 1955. էջ 75:

¹⁷ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Բաժնետիրական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2005, էջ 9:

դրանով իսկ ապահովելով վերջինիս մասնակցությունը իրավահարաբերություններին սեփական անունից:

- կապիտալի միավորում. իրավաբանական անձը, հատկապես դրա տարատեսակ համարվող բաժնետիրական ընկերությունը, համարվում է կապիտալի երկարաժամկետ կենտրոնացման օպտիմալ ձև, առանց որի անիմաստ է լայնածավալ ձեռնարկատիրական գործունեությունը:

- ձեռնարկատիրական ռիսկի նվազեցում. իրավաբանական անձի կառուցակարգը հնարավորություն է տալիս սահմանափակել մասնակցի գույքային ռիսկը կազմակերպության կապիտալում ներդրած գույքի շրջանակներում:

- կապիտալի կառավարում. իրավաբանական անձի ինստիտուտը նպաստավոր պայմաններ է ստեղծում մեկ անձին պատկանող կապիտալը գործարարության տարբեր ոլորտներում արդյունավետորեն օգտագործելու համար¹⁸:

Քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Իրավաբանական անձի օրենսդրական սահմանումից հետևում է, որ կազմակերպության իրավաբանական անձ ճանաչվելու համար այն պետք է օժտված լինի որոշակի հատկանիշերով, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին բավարար՝ այդ կազմակերպությունը իրավաբանական անձ դիտարկելու համար: Տեսական գրականության մեջ առանձնացվում են իրավաբանական անձի չորս հիմնական հատկանիշ գործառնական հատկանիշը, որը դրսևորվում է իրավաբանական անձի կազմակերպական միասնության մեջ, տնտեսական հատկանիշը դրսևորվում է իրավաբանական անձի գույքային առանձնացվածությունամբ, ինքնուրույն գույքային

¹⁸ Տե՛ս Гражданское право, Учебник, под редакцией А. П. Сергеева, Ю.К. Толстого, М., 2005, էջեր 141-142:

պատասխանատվություն. Իրավաբանական անձի այս հատկանիշն անմիջականորեն կապված է նրա գույքային առանձնացվածության հետ: Նյութաիրավական հատկանիշն արտահայտվում է իրավաբանական անձի կողմից քաղաքացիաիրավական հարաբերություններում իր անունից ինքնուրույն հանդես գալու և իր անունից իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու և իրականացնելու ունակությամբ և դատավարական հատկանիշը, որն արտահայտվում է դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող ինքնուրույն հանդես գալու հնարավորությամբ¹⁹:

Տեսություն մեջ իրավաբանական անձի բաժանում են տեսակների էլեմենտով մի շարք չափանիշներից: Ըստ հետապնդած նպատակի իրավաբանական անձի բաժանվում են առևտրայինի և ոչ առևտրայինի: Առևտրային իրավաբանական անձանց հիմնական նպատակը շահույթ ստանալը և այդ շահույթը մասնակիցների միջև բաշխելն է: Ոչ առևտրային իրավաբանական անձի, ընդհակառակը, նման նպատակ չեն հետապնդում և առևտրային գործունեություն կարող են իրականացնել միայն իրենց կանոնադրական նպատակներին հասնելու համար, ընդ որում՝ այդ գործունեության արդյունքում ստացված շահույթը ենթակա է բաշխման մասնակիցների միջև: Ըստ գույքի նկատմամբ մասնակիցների ունեցած իրավունքների իրավաբանական անձի բաժանվում են հինգ խմբի՝ իրավաբանական անձի, որոնց մասնակիցները իրավաբանական անձին գույք հանձնելուց հետո ամբողջովին կամ մասնակիորեն կորցնում են այդ գույքի նկատմամբ իրային իրավունքները (տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ), իրավաբանական անձի, որոնց մասնակիցները գույքը հանձնելով իրավաբանական անձին կորցնում են դրա նկատմամբ իրային իրավունքները՝ ձեռք բերելով պարտավորական իրավունքներ, իրավաբանական անձի, որոնց մասնակիցները իրենց գույքը հանձնում են իրավաբանական անձին ի սեփականությունը և որևէ իրավունք ձեռք չեն բերում: Ըստ հիմնադիրների շրջանակի տարբերում են իրավաբանական անձանց, որոնց հիմնադիր կարող են լինել միայն իրավաբանական

¹⁹ Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնահարցերը Չայաստանի Չանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՅ հրատ., Եր, 2013, էջեր՝ 39-41:

անձիք և իրավաբանական անձանց, որոնք կարող են հիմնադրվել իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից: Իրավաբանական անձանց դասակարգում են տեսակների նաև ելնելով սեփականության ձևից: Այս չափանիշից ելնելով տարբերում են պետական (հանրային) և մասնավոր (ոչ պետական) կազմակերպություններ²⁰:

Քաղաքացիական օրենսգիրքը իրավաբանական անձանց դասակարգում է միայն երկու տեսակի՝ առևտրային և ոչ առևտրային: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Առևտրային իրավաբանական անձիք կարող են ստեղծվել տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների տեսքով, ինչպես նաև առևտրային կոոպերատիվի տեսքով: Ոչ առևտրային իրավաբանական անձիք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ:

Քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև քաղաքացիաիրավական նորմեր պարունակող այլ իրավական ակտերի վերլուծությունը

²⁰ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.** Քաղաքացիական իրավունք, 4-րդ հրատարակություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2014, Առաջին մաս, Էջեր՝ 124-126

թույլ է տալ իս ենթադրել, որ Քաղաքացիական օրենսգրքի հիշյալ հոդվածով ամբողջությամբ ամրագրված չեն կարգավորման ենթակա հարաբերությունները:

Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգիրքը և դրա հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ իրավական ակտերը կարգավորում են քաղաքացիական իրավական հարաբերությունների ինքնուրույն խումբ, որոնք տեսության մեջ և աշխարհի տարբեր երկրների օրենսդրությամբ բնորոշվում են որպես «կորպորատիվ իրավահարաբերություններ»: Այդպիսի իրավահարաբերությունները նդունված է համարել կազմակերպությունում մասնակցության կամ դրա կառավարման հետ կապված հարաբերությունները: Կորպորատիվ իրավահարաբերությունները չնայած ուղղակիորեն որպես կարգավորման առարկա Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չեն, այնուամենայնիվ կարգավորվում են թե Քաղաքացիական օրենսգրքով, թե իրավաբանական անձանց առանձին տեսակները կարգավորող օրենքներով: Կորպորատիվ իրավահարաբերությունները որպես քաղաքացիական օրենսդրության կարգավորման ինքնուրույն առարկա նախատեսված են տարբեր երկրների օրենսդրությամբ: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քաղաքացիական օրենսդրությունը, ի թիվս այլ իրավահարաբերությունների, կարգավորում է նաև կորպորատիվ կազմակերպություններում մասնակցության կամ դրանց կառավարման հետ կապված հարաբերությունները (կորպորատիվ իրավահարաբերություններ): «Չայաստանի Չանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Չայաստանի Չանրապետության օրենքի նախագծով²¹ ևս առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքով հստակ սահմանել, որ քաղաքացիական իրավական կարգավորման են ենթարկվում նաև կորպորատիվ իրավահարաբերությունները, քանի որ դրանք ամեն դեպքում անխուսափելիորեն կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով և քաղաքացիական իրավունքի նորմեր

21

Այսուհետ՝ http://justice.am/storage/files/legal_acts/legal_acts_3463498407311_qax_or_popox-1.pdf, նախագիծ, հասանելի է 26.05.2017թվականի դրությամբ:

պարունակող այլ իրավական ակտերով: Նման պայմաններում, հաշվի առնելով կորպորատիվ իրավահարաբերությունների ինքնուրույն բնույթը, անհրաժեշտություն է առաջանում Քաղաքացիական օրենսգրքով սահմանված առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձանց կողքին որպես իրավաբանական անձանց տեսակներ նախատեսել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց և ոչ կորպորատիվ իրավաբանական անձանց: Ընդ որում կորպորատիվ տիպի պետք է համարել այն իրավաբանական անձանց, որոնց մասնակիցները (հիմնադիրները, անդամները) ունեն դրանց գործունեության կառավարմանը մասնակցելու իրավունք (տնտեսական ընկերություններ, ընկերակցություններ, արտադրական և սպառողական կոոպերատիվներ, հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ): Համապատասխանաբար ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք են այն կազմակերպությունները, որոնց մասնակիցները դրանց գործերի կառավարմանը մասնակցելու իրավունք չունեն (հիմնադրամներ, կրոնական կազմակերպություններ)²²:

Պետք է նշել, որ իրավաբանական անձանց կորպորատիվի և ոչ կորպորատիվի դասակարգելը նորություն է միայն հետխորհրդային իրականությունում, իսկ աշխարհի բազմաթիվ երկրներում արդեն իրավաբանական անձիք նման դասակարգման ենթարկվում են: Այս մոտեցումն առկա է նաև մի շարք հայտնի իրավագետ-տեսաբանների՝ Սալինյեի, Գիրկեի, Բերանացկու և այլոց աշխատություններում:

Հայաստանի Հանրապետությունում նման դասակարգում սահմանելու առաջարկն առաջին անգամ իր աշխատություններում ներկայացրել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը²³: Այս հայեցակարգային մոտեցումն արտացոլվել է նաև Նախագծում:

Մասնավորապես, Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ կետով,

²² Կորպորատիվ իրավահարաբերությունների էություն վերաբերյալ ավելի մանրամաս տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջեր՝ 9-37:

²³ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք, Դատական իշխանություն, հոկտեմբեր 2013, 7 (168), էջեր 54-65:

որով սահմանվում է «կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք» հասկացությունը և դրատեսակները:

Մասնավորապես, այն իրավաբանական անձիք, որոնց հիմնադիրները (մասնակիցները) նրանցում ունեն մասնակցության իրավունք և հանդիսանում են բարձրագույն կառավարման մարմնի անդամներ, Նախագծի իմաստով համարվում են կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք: Դրանց թվին են դասվում տնտեսական ընկերությունները և ընկերակցությունները, հասարակական միավորումները, իրավաբանական անձանց միությունները, կոոպերատիվները: Ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց թվին են դասվում արդեն կրոնական կազմակերպությունները և հիմնադրամները:

Ընդհանրապես, որպեսզի կազմակերպությունը դիտվի որպես կորպորատիվ տիպի կազմակերպություն, այն պետք է օժտված լինի հետևյալ բնութագրական հատկանիշների միաժամանակյա առկայությամբ՝

- կազմակերպությունը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ,
- կորպորացիան իրենից ներկայացնում է իրավունքի սուբյեկտ համարվող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միություն կամ միավորում, որոնք արդյունքում ձեռք են բերում կորպորացիայի մասնակցի (անդամի) կարգավիճակ,
- կորպորացիան բնութագրվում է որպես կամային կազմակերպություն, որը կոչված է իրագործելու կորպորացիայի և դրամասնակիցների հավաքական շահերը,
- կորպորացիան որպես իրավաբանական անձ շարունակում է գոյություն ունենալ անկախ մասնակիցների կազմի փոփոխությունից,
- կորպորացիան ոչ միայն մասնակիցների միություն է, այլ նաև նրանց գույքի միավորում,
- կորպորացիայի մասնակիցները, որպես կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտներ, հանդիսանում են ինչպես միմյանց, այնպես էլ կորպորացիայի հանդեպ ունեցած սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրողներ,

• Կորպորացիան իրենից ներկայացնում է մի կազմակերպական միասնություն, որն արտահայտվում է կառավարման մարմինների առկայությամբ, այդ թվում՝ բարձրագույն կառավարման մարմնի՝ մասնակիցների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի առկայություն²⁴:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց բնութագրական են իրավաբանական անձանց վերակազմակերպման հատուկ ընդհանուր հատկանիշները: Միաժամանակ, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հատուկ բնութագրական հատկանիշները պայմանավորում են նաև դրանց վերակազմակերպման որոշակի առանձնահատկություններ:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում տեղի է ունենում գույքի փոխանցում վերակազմակերպման արդյունքում ստեղծված սուբյեկտին կամ սուբյեկտներին: Վերակազմակերպման ձևից կախված վերակազմակերպվող իրավաբանական անձի գույքը կարող է փոխանցվել տարբեր համամասնությամբ. միացման դեպքում, օրինակ, միացող կազմակերպության ամբողջ գույքն անցնում է այն իրավաբանական անձին, որին միացել է նշված կազմակերպությունը, միանում է միացում՝ երկու կամ ավելի կազմակերպությունների գույքը ևս միավորվում է և անցնում միանում է արդյունքում ստեղծված կազմակերպությանը, բաժանման և առանձնացման դեպքում տեղի է ունենում տրամագծորեն հակառակը՝ վերակազմակերպվող կազմակերպության գույքը բաժանման դեպքում անցնում է կազմակերպության ապախոչորացման արդյունքում ստեղծված կազմակերպություններին, իսկ առանձնացման դեպքում իրավաբանական անձի գույքի մի մասն անցնում է առանձնացած իրավաբանական անձին: Քանի որ կորպորացիան բացի գուտանձանց միավորում լինելուց համարվում է նաև գույքի միավորում, ապա վերակազմակերպման ձևից կախված առաջ է գալիս այդ գույքի բաշխման իրավաչափությունն ու համաչափությունը, դրա

²⁴ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնարկները Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ատենախոսություն դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2014, էջեր 24-25:

արդյունքում նաև իրավահաջորդներին որոշելու անհրաժեշտություները: Միացման և միաձուլման դեպքում, որպես կանոն, նման խնդիր չի առաջանում, քանի որ նշված ձևերի պարագայում տեղի է ունենում գույքի միավորում, որի արդյունքում մեկ կամ մի քանի կազմակերպությունների գույքն անցնում է մեկ սուբյեկտի: Բաժանման և առանձնացման դեպքում, արդեն, կարող են ի հայտ գալ որոշակի խնդիրներ՝ կապված գույքի բաշխման և դրա արդյունքում նաև այդ գույքի հետ կապված իրավունքների և պարտավորությունների փոխանցման հետ: Այսինքն, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց՝ նաև գույքի միավորում հանդիսանալու հանգամանքը, առաջ է բերում այդ տեսակի իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում իրավահաջորդներին հստակ հատկորոշելու անհրաժեշտություն, որը ոչ միայն ապահովում է կորպորացիայի և նրա մասնակիցների, այլ նաև՝ կորպորացիայի և այլ անձանց միջև հարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը:

Ինչպես արդեն նշվեց, կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մասնակիցները հանդիսանում են կորպորացիայի հանդեպ ունեցած սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրողներ: Կորպորացիայի մասնակիցները ունեն կազմակերպության կառավարմանը մասնակցելու, շահույթից բաժին ստանալու և կորպորատիվ տիպի իրավաբանական անձի կազմակերպարավական ձևից կախված այլ իրավունքներ: Վերակազմակերպման ընթացքում և դրա արդյունքում կարող են փոխվել այդ իրավունքների բովանդակությունը և դրանց իրականացման ձևերը: Վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպության մասնակիցներ դառնալով վերջիններս կամ պահպանում են իրավունքների նույն ծավալը կամ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևով պայմանավորված ձեռք են բերում այլ իրավունքներ և պարտականություններ: Միևնույն ժամանակ, վերակազմակերպման որոշմանը դեմ քվեարկած կազմակերպության մասնակիցները ձեռք են բերում կազմակերպության նկատմամբ պահանջի իրավունք:

Բացի այդ, կարգավորվող ոլորտներում (օրինակ՝ ֆինանսական շուկաներ) գործող կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր) վերակազմակերպման գործընթացը ենթարկվում է հատուկ կարգավորումների՝ հաշվի առնելով այդ ոլորտների առանձնահատկությունները:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացն առանձնանում է բարդ փաստակազմով և տարբերվում է ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացից նաև դրա փուլերով: Բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձև ունեցող կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, ինչպես նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձ համարվող բանկերի միացման և միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ կնքվում են միացման կամ միաձուլման պայմանագրեր, որոնք կարգավորում են նշված կազմակերպությունների վերակազմակերպման հետ կապված էական նյութական և ընթացակարգային հարցեր և կազմում են վերակազմակերպման գործընթացի անբաժան մասը:

Տնտեսական ընկերությունների մասնակիցների կազմակերպության նկատմամբ ունեցած իրավունքները կախված կազմակերպարավական ձևից հավաստվում են բաժնետոմսերով (այլ արժեթղթերով) կամ կազմակերպությունում ունեցած համապատասխան չափով բաժնեմասով: Նշվածի արդյունքում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին կազմակերպարավական ձևերի վերակազմակերպման դեպքում անհրաժեշտություն է առաջանում ապահովել բաժնետոմսերի (այլ արժեթղթերի) փոխարկման օրենքով սահմանված կարգը, ինչը հանդիսանում է էական երաշխիք կազմակերպության վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող ընկերության մասնակիցների իրավունքների շարունակականությունն ապահովելու համար:

Օրենքով սահմանված փոխարկման կարգը երաշխավորում է նաև վերակազմակերպվող կազմակերպության մասնակիցների իրավունքը դառնալու վերակազմակերպման արդյունքում ստեղծված

կազմակերպության ներքին մասնակիցներ՝ ապահովելով կորպորացիայի վերակազմակերպման դեպքում դրա մասնակիցների կազմի անփոփոխելի ու թյան սկզբունքը:

Որոշակի առանձնահատկություններ ունի նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմավորման գործընթացը, քանի որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք կարող են վերակազմավորվել միայն օրենքով նախատեսված այլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձի:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացին բնութագրական են որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են այդ տեսակի իրավաբանական անձանց բնույթով և դրանց բնորոշ հատկանիշներով²⁵:

§ 2. Վերակազմակերպումը որպես իրավաբանական անձանց ստեղծման և դադարման ձև

Իրավաբանական անձիք եղել և մնում են ժամանակակից աշխարհի տնտեսական շրջանառության հիմնական մասնակիցները: Եվ, ինչպես պատկերավոր նշում է Օ.Ա. Սերովան՝ իրավաբանական անձը սպունգի նման ներծծում է սոցիալ-տնտեսական իրականության երևույթները²⁶:

Տնտեսական հարաբերությունների զարգացման տեմպերի աճը, \$ֆինանսական շուկաներում տիրող անկայուն իրավիճակները և դրանց կարգավորմանը միտված օրենսդրական բազմաթիվ փոփոխություններն իրենց ազդեցությունն են գործում նաև իրավաբանական անձանց վրա՝ ստիպելով վերջիններիս կամ դրանց հիմնադիրներին (մասնակիցներին) որոշելու թե ինչ ձևով ավելի արդյունավետ կլինի տնտեսության հետագա վարումը: Եվ տնտեսական շրջանառության բազմաթիվ մասնակիցներ որպես

²⁵ Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման առանձնահատկություններն առավել մանրամասն վերլուծված են սույն աշխատանքի հետագա պարագրաֆներում:

²⁶ Տե՛ս **Серова О.А.** Юридические лица в гражданском праве. Монография.-Самара: Изд-во Самар. гуманитар. акад., 2005. Էջ 6:

օպտիմալ լուծում նախընտրում են վերակազմակերպելու գործընթաց սկսելը: Մի մասը միանում է մեկ այլ իրավաբանական անձի հետ, մյուսները փոխում են կազմակերպարարական ձևը և այլն: Նման որոշումների ընդունումը պայմանավորված է ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ տարբեր հանգամանքներով: Այսպես, վերակազմակերպման գործընթաց կարող է սկսվել ինչպես շուկայում կազմակերպության հետագա գոյությունն ապահովելու համար, այնպես էլ կազմակերպության մասնակիցների միջև առկա տարածայնությունների արդյունքում: Վերջին դեպքում, որպես կանոն, ամենաարդյունավետ տարբերակը բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպումն է:

Ինչպես հայտնի է հասարակական հարաբերությունների բարդացմամբ պայմանավորված առաջանում է դրանց ավելի մանրակրկիտ կարգավորման անհրաժեշտություն: Կոնկրետ հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմատիվ ակտերի մշակումն ու ընդունումը նպաստում է այդ հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև վերացնում է բացասական և հնացած կապերն ու հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիարարական օրենսդրությունը չի բանաձևում «վերակազմակերպում» հասկացությունը, Քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը²⁷ և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը²⁸ բանաձևում են միայն վերակազմակերպման տեսակները՝ միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում²⁹:

Բազմաթիվ տեսաբաններ անդրադարձել են «վերակազմակերպում» հասկացության օրենսդրական ամրագրման խնդրին: Մասնավորապես,

²⁷ Այսուհետ՝ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենք: Ընդունվել է 25.09.2001թ., ուժի մեջ է մտել 27.10.2001թ.: Տե՛ս՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166)

²⁸ Այսուհետ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենք: Ընդունվել է 24.10.2001թ., ուժի մեջ մտել 07.12.2001թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.07/38(170)

²⁹ Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնարկները Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջ 114:

Վիտրյանսկին նշում է, որ վերականգնման օրենսդրական կարգավորումը միշտ էլ աչքի է ընկել թերություններով և անհամակարգայնացվածությամբ³⁰: Յ.Ա. Ակսյոնովան ընդգծում է, որ ներկայումս ոչ միայն չկա վերականգնման հասկացության բնորոշումը, այլ նաև բացակայում է այդ ինստիտուտի վերաբերյալ միասնական մոտեցում³¹:

1964 թվականի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն օգտագործում էր «վերականգնում» տերմինը, որի ներքո հասկացվում էին միաձուլումը, բաժանումը և միացումը: Առանձնացումն ու վերականգնումը որպես վերականգնման տեսակներ չէին դիտարկվում, իսկ միացումը որպես վերականգնման առանձին ձև դիտարկվեց հենց 1964 թվականի օրենսգրքով, մինչև այդ միացումը համարվում էր միաձուլման դրսևորում³²:

Ինչպես նշում է Յու.Ս. Պովարովան՝ օրենսգիրքը պարտավոր է պահպանել իրավաստեղծագործության հիմնական կանոնները տերմինաբանական շփոթից խուսափելու նպատակով, քանի որ օրենսդրական տերմինների ճշտությունից է կախված նաև իրավունքի տեսության խնդիրների ձևակերպումը, ինչպես նաև օրենքի կիրարկումը³³:

Այսպիսով, «վերականգնման» հասկացության միասնական տարբերակ առաջադրելու, դրա էությունը հասկանալու համար անհրաժեշտ է անդրադարձնալ այն տեսություններին, որոնք նվիրված են վերականգնման իրավական բնույթի բացահայտմանը:

Այսպես, վերականգնման էության վերաբերյալ տեսություններից պատմականորեն ձևավորված առաջինը վերականգնման համարում է իրավաբանական անձի դադարման ձև, որն ուղղորդվում է իրավունքների և պարտականությունների

³⁰ Տե՛ս **Витрянский В.В.** Реорганизация и ликвидация юридических лиц: забота об интересах кредиторов // Закон. 2010. №3. Էջ 65:

³¹ Տե՛ս **Аксенова Е.В.** Реорганизация юридических лиц по законодательству Российской Федерации: проблемы теории и практики: дис., канд. юрид. наук. - М., 2006. Էջ 24:

³² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 04.06.1964թ. ու ժը կորցրած է ճանաչվել 17.06.1998թ. ՀՕ-229, ՀՍՄԳՍ 1964/17:

³³ Տե՛ս **Поваров Ю.С.** Предприятие как объект гражданских прав.- Самара: Самарский университет, 2002. Էջ 6.

իրավահաջորդության: Այդ տեսության կողմնակիցներն էին Բրազինսկին, Բրատուսը, Սուխանովը և այլոք: Պրոֆեսոր Բրատուսը քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ իրավաբանական անձի դադարման հիմնական և գլխավոր ձևը վերակազմակերպումն է՝ իրավաբանական անձի դադարումը առանց գործերի և գույքի փոխադրման: Վերջինս ընդգծում էր այն հանգամանքը, որ այս դեպքում տեղի չէր ունենում այն գործունեության դադարեցում, որի համար տվյալ իրավաբանական անձը ստեղծվել է, այլ տեղի է ունենում միայն սուբյեկտների փոփոխություն, որի արդյունքում գույքի նկատմամբ առկա, ինչպես նաև որոշակի գործունեության մեջ զբաղվելու իրավունքներն անցնում են այլ սուբյեկտի՝ իրավահաջորդին³⁴: Կ.Տ. Տրաֆիմովը ևս վերակազմակերպումը համարում է իրավաբանական անձի դադարման ձև, միայն այն տարբերությամբ, որ իրավաբանական անձի դադարումը կապում էր գույքային համալիրի կամ իրավաբանական անձի կազմակերպչական ձևի փոփոխության հետ³⁵: Մ.Բ. Տելյուկինը նշում է, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իրավաբանական անձի դադարման փաստի վրա, քանի որ դրա արդյունքում առաջանում է այն պարտավորական հարաբերությունների հետագա գոյության հարցը, որոնց մասնակիցն էր դադարող իրավաբանական անձը: Տելյուկինը առանձնացնում էր իրավաբանական անձի դադարման երկու ձև՝ վերակազմակերպում և լուծարում: Ընդ որում, վերակազմակերպումը իրավագետը դիտարկում է որպես իրավաբանական անձի դադարում, որը զուգորդվում է համապարփակ իրավահաջորդությամբ: Ըստ վերջինիս՝ վերակազմակերպման արդյունքում ստեղծվում են մեկ կամ մի քանի իրավաբանական անձիք, որոնք համարվում են դադարած իրավաբանական անձի իրավահաջորդները պարտավորական հարաբերություններում³⁶:

³⁴ Տե՛ս **Братусь С.Н.** Субъекты гражданского права. Курс советского гражданского права / Братусь С.Н. - М.: Госюридиздат, 1950. Էջ 221:

³⁵ Տե՛ս **Трофимов К.Т.** Реорганизация и ликвидация коммерческих организаций: автореф. дис. ... канд. юрид. наук. -М., 1995, Էջ 19:

³⁶Տե՛ս **Телюкина М.В.** Реорганизация как способ прекращения деятельности юридических лиц // Законодательство. 2000, № 1, Էջ 3:

Պրոֆեսոր Վ.Վ. Դոլինսկայան առանձնացնում է իրավաբանական անձի դադարման երկու տեսակ՝ հարաբերական և բացարձակ: Առաջին դեպքում նա հասկանում էր վերակազմակերպումը, որի արդյունքում պահպանվում էր քաղաքացիական շրջանառությունում գործելու համար անհրաժեշտ գույքային բազան և տեղի է ունենում իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդություն: Որպես իրավաբանական անձի դադարման բացարձակ տեսակ Դոլինսկայան նշում է իրավաբանական անձի լուծարումը³⁷:

Ե. Ա. Սուխանովը ևս վերակազմակերպումը համարում է իրավաբանական անձի դադարում, որը հանգեցնում է իրավահաջորդության³⁸: Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել վերակազմակերպման նման ձևակերպման շատ տարբերակներ: Օրինակ, Յու. Ա. Տիխոմիրովը վերակազմակերպումը բնութագրում է որպես իրավաբանական անձի դադարում իրավահաջորդությամբ. իրավունքների և պարտավորությունների անցում այլ իրավաբանական անձանց իրավաբանական անձի իրավական կարգավիճակը փոխելու նպատակով³⁹: Մ.Գ. Պանովան ևս վերակազմակերպումը համարում է իրավաբանական անձի դադարում նրա իրավունքների և պարտավորությունների այլ անձանց փոխանցմամբ⁴⁰:

Մեր կարծիքով այն իրավագետների տեսակետները, որոնք վերակազմակերպումը համարում են միայն իրավաբանական անձի դադարում, միակողմանի է և չի արտացոլում այդ իրավական երևույթի բոլոր էական հատկանիշները և իրական նշանակությունը: Այս համատեքտում արդարացի է համարվում Ե.Վ. Ակսյոնովայի տեսակետն առ այն, որ վերակազմակերպումը չի կարող համարվել լուրջ իրավաբանական անձի դադարում, քանի որ այս դեպքում առանց անհրաժեշտ ուղղորդության են մնում վերակազմակերպման այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են

³⁷ Տե՛ս **Долинская В.В.** Реорганизация юридических лиц // Законы России: опыт, анализ, практика. 2006. № 8, էջ 5:

³⁸ Տե՛ս **Суханов Е.А.** Реорганизация акционерных обществ и других юридических лиц // Хозяйство и право. 1996. № 1, էջ 148:

³⁹ Տե՛ս Правовое положение коммерческих организаций. Учебное и научно-практическое пособие / **Айзин С.М., Анисимова Н.Н., Вельская Е.В., Братко А.Г.**, и др.; Под. ред.: Ю.А. Тихомирова. - М.: Юрид.дом «Юстицинформ», 2001, էջ 53:

⁴⁰ Տե՛ս **Панова М.Г.** Актуальные вопросы реорганизации предприятий // Право и экономика. 1999. № 1, էջ 5:

մասնակիցների սուբյեկտային կազմի և գույքային բազայի փոփոխությունները⁴¹:

Վերակազմակերպման եռթյան վերաբերյալ այլ մոտեցում է ցուցաբերում պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը, որը վերակազմակերպումը դիտարկում է երկու ասպեկտով՝ ստեղծման և դադարման տեսանկյունից և բնութագրում է վերակազմակերպումը հետևյալ կերպ. «վերակազմակերպումը գոյություն ունեցող իրավաբանական անձի նյութական հենքի վրա իրավունքի նոր սուբյեկտի ստեղծումն է՝ գոյություն ունեցող իրավունքի սուբյեկտի գոյության դադարմամբ կամ նյութական հենքի ընդլայնմամբ կամ նվազմամբ»⁴²:

Գործող քաղաքացիաիրավական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերակազմակերպման արդյունքում իրոք կարող է տեղի ունենալ ինչպես իրավաբանական անձի դադարում, այնպես էլ նոր իրավաբանական անձի ստեղծում:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

Այսպիսով, Յայաստանի Յանրապետության քաղաքացիական օրենսդրությունը «վերակազմակերպում» իրավական կատեգորիան դիտարկում է և որպես իրավաբանական անձի ստեղծման և որպես դադարման ձև:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ իրավաբանական անձի ստեղծումն ու դադարումը չի կարելի է համարել անհրաժեշտ և բավարար

⁴¹ Տե՛ս **Аксенова** Е.В. նշված աշխատությունը, էջ 27:

⁴² Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավաբանությունը իրավաբանության ոլորտի արդի հիմնահարցերը Յայաստանի Յանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ատենախոսություն դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2014, էջ 102:

հատկանիշներ «վերակազմակերպում» իրավական երևույթի օրենսդրական սահմանումը բանաձևելու համար:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անկախ նրանից թե տեսաբանները վերակազմակերպումը համարում են իրավաբանական անձի դադարում, թե ստեղծում, նրանք բոլորն էլ ընդունում են վերակազմակերպման արդյունքում իրավաբանական անձի իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդությամբ անցման փաստը: Ավելին, որոշ տեսաբաններ հենց իրավահաջորդությունն են համարում վերակազմակերպման և լուծարման առանցքային տարբերությունը:

Այսպիսով, քանի որ իրավահաջորդությունը համարվում է վերակազմակերպման էական հատկանիշ, անդրադառնանք «իրավահաջորդություն» եզրույթի բովանդակության բացահայտմանը:

Քաղաքացիական իրավունքում ձևավորվել են հիշյալ իրավական երևույթի էության վերաբերյալ երկու հիմնական ուղղություններ: Դրանցից առաջինը այսպես կոչված «տրանզիտային» տեսությունն է: Այս տեսությունն առաջ քաշեցին Դ.Մ. Գենկինը⁴³, Դ. Ի. Մայերը⁴⁴, Վ.Վ. Դոլինսկայան: Վերջինս մասնավորապես, նշում էր, որ իրավահաջորդությունը որպես իրավունքների ձեռք բերման ածանցյալ եղանակ չի համարվում իրավունքների պարզ փոխանցում մի սուբյեկտից մյուսին, այլ ապահովում է իրավահարաբերության էական հատկությունների և իրավատեր-սուբյեկտների միջև կապը քաղաքացիական շրջանառությունում՝ նպաստելով քաղաքացիական իրավական հարաբերությունների դինամիկային⁴⁵: Տրանզիտային տեսության կողմնակիցների շարքում կարելի է առանձնացնել Դ.Ի. Մայերին, ով ուշադրություն էր հրավիրում այն փաստի վրա, որ իրավանախորդի և իրավահաջորդի միջև հարաբերությունները բնորոշվում են պարտավորությունների փոխանցման էությանը համապատասխան: Այդ կապակցությամբ վերջինս հստակ սահման է

⁴³ Տե՛ս Գենкин Д.М. Право собственности в СССР. - М.: Госюриздат., 1961, էջ 126:

⁴⁴ Տե՛ս Мейер Д.И. Русское гражданское право. В 2-х частях: По исправленному и дополненному 8-у изд., 1902г. 4.2. - М.: Статут, 1997., էջ 114:

⁴⁵ Տե՛ս Долинская В.В. Наследование акций // Наследственное право. 2006. № 1, էջ 45

գծում այն դեպքերի միջև, երբ անձանց փոփոխությունն տեղի չի ունենում, քանի որ մեկ պարտավորությունը փոխարինվում է մեկ այլնով և այն դեպքերի միջև, երբ տեղի է ունենում անձանց փոփոխություն: Ընդ որում, գիտնականի կարծիքով պարտավորության մեջ անձանց փոփոխության մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ պարտավորությունը մնում է նույնը և փոխվում է դրամասնակիցներից թեկուզ մեկը⁴⁶: Վ.Վ. Չերեպախինը, իր աշխատություններում անդրադառնալով իրավահաջորդության հիմնախնդրներին, նշում է, որ իրավահաջորդությունը իրավունքների և պարտավորությունների ածանցյալ փոխանցումն է իրավանախորդից իրավահաջորդ սուբյեկտին⁴⁷: Գոյություն ունի նաև իրավահաջորդության վերաբերյալ այլ տեսակետ, որը հիմնվելով դիսկրետային տեսության վրա, պնդում է, որ իրավունքներն ու պարտավորությունները գաղափարական հասկացություններ են և չեն կարող տեղաշարժվել ժամանակի և տարածության մեջ, հետևաբար նաև փոխանցվել մեկ անձից մյուսին⁴⁸:

Այլ մոտեցման համաձայն, որը ստացել է «դիսկրետային» տեսությունն անվանումը, իրավահաջորդությունը համարվում է իրավունքների և պարտավորությունների ածանցյալ փոխանցում մի սուբյեկտից մյուսին, սակայն այս գործընթացը ուղեկցվում է մի սուբյեկտի մոտ իրավունքների դադարման և միաժամանակ այլ սուբյեկտի մոտայդ իրավունքների ծագման գործընթացներով⁴⁹:

Վ.Ա. Բելովը իր աշխատություններում իրավահաջորդությունը նկարագրում է այլ կերպ՝ համարելով, որ այն ոչ թե իրավունքների փոխանցում է մեկ անձից մյուսին, այլ իրավահարաբերության սուբյեկտների փոփոխություն: Յեղիևակը պնդում է, որ

⁴⁶ Տե՛ս **Мейер Д.И.** նշված աշխատությունը, էջ 114:

⁴⁷ Տե՛ս **Черепяхин Б.Б.** Правопреемство по советскому гражданскому праву,- М.: Госюриздат, 1962, էջ 6:

⁴⁸ Տե՛ս Советское гражданское право: Учебник. В 2т. 2-е изд. Т.1 / **Н.А. Безрук, О.В. Бойков, М.И. Брагинский** и др; Отв. ред. проф. **В.А. Рясенцев.** - М.: Юридическая литература, 1986:

⁴⁹ Տե՛ս **Белов В.А.** Сингулярное правопреемство в обязательстве: Опыт ист. исследования, теорет. и догмат, конструкции и обобщения рос. суд. практики / В.А. Белов.- М.: Учебно - консультационный центр «ЮрИнфоР», 2000, **Грибанов В.П.** Осуществление и защита гражданских прав,- М.: Статут, 2000. էջ էր 384 - 390, **Ломакин Д.В.** Доли участия в уставных капиталах хозяйственных обществ как особые объекты гражданского оборота // Хозяйство и право. 2008. № 2, էջ էր 44-57; Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах / Д.В. Ломакин - М.: Статут, 2008, էջ էր՝ 174-175, **Муромцев С.А.** Избранные труды по римскому и гражданскому праву. - М.: Центр ЮрИнфоР, 2004. էջ էր 562, 601 -602:

իրավահաջորդության դեպքում իրավունքների և պարտավորությունների փոխանցում չի կատարվում, այլ մեկ իրավահարաբերությունն ղ դադարում է և առաջանում է այլ իրավահարաբերություն: Այս կոնցեպցիայի հիմքում դրված է հեղինակի այն գաղափարը, որ սուբյեկտիվ իրավունքներն ու պարտավորությունները չեն կարող վերաբերել քաղաքացիական իրավունքի օբյեկտներին, չեն համարվում քաղաքացիական շրջանառության առարկա⁵⁰:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ պետք է փաստել, որ ներկայացված տեսությունները ոչ թե բացառում են միմյանց, այլ, ընդհակառակը, լրացնում են՝ հնարավորություն տալով տեսնել իրավահաջորդության իրավական երևույթի ամբողջական պատկերը:

Սույն աշխատանքում մենք իրավահաջորդությունը կդիտարկենք որպես իրավահարաբերության սուբյեկտների փոփոխություն, որը գուցորդվում է իրավունքների և պարտավորությունների մեկ անձից մյուսին փոխանցմամբ:

Վերակազմակերպումը, ինչպես արդեն նշվեց, միշտ գուցորդվում է իրավահաջորդությամբ, որի արդյունքում առաջինս ան է մղվում իրավահաջորդին փոխանցվող իրավունքների և պարտավորությունների ծավալի պարզումը: Քաղաքացիական ղոկտրինայում ավանդաբար տարբերում են իրավահաջորդության երկու տեսակ՝ համապարփակ (ուսիվերսալ) և լրացուցիչ կամ սուբսիդիար⁵¹:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ չկա միասնական մոտեցում վերակազմակերպման արդյունքում տեղի ունեցող իրավահաջորդության բնույթի վերաբերյալ: Այսպես, տեսաբանների մի մասը գտնում է, որ վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդությունը միշտ համապարփակ է: Նրանք այդ տեսակետը հիմնավորում են հետևյալ կերպ. վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդին են անցնում իրավանախորդի բոլոր իրավունքներն

⁵⁰ Տե՛ս **Белов В.А.** Правопреемство в связи с законодательной концепцией квалификации имущественных прав как объектов гражданских прав // Законодательство. 1998. № 6, էջ 85:

⁵¹ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.** Քաղաքացիական իրավունք, 4-րդ հրատարակություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2014, Առաջին մաս, էջ 112:

ու պարտավորությունները, և իրավահաջորդը իրավունք չունի հրաժարվել դրանք ամբողջությամբ կամ մասամբ ընդունելուց⁵²:

Որոշ տեսաբաններ առաջարկում են իրավահաջորդության տեսակները տարբերակել ելնելով վերակազմակերպման ձևից: Այսպես, Մ.Ն. Իլյուշինան գտնում է, որ ունիվերսալ իրավահաջորդությունն առկա է վերակազմակերպման բոլոր ձևերի դեպքում բացի առանձնացումից⁵³: Յու.Ս. Պովարովը, անդրադառնալով նշված հարցին, կարծիք է հայտնում առ այն, որ միաձուլման, միացման, վերակազմավորման և բաժանման դեպքում տեղի է ունենում ունիվերսալ, իսկ առանձնացման դեպքում՝ սինգուլյար իրավահաջորդություն⁵⁴: Այս հայեցակարգի հիմքում դրված են հետևյալ հանգամանքները՝ վերակազմակերպման արդյունքում տեղի է ունենում սուբյեկտների փոփոխություն՝ մի սուբյեկտը դադարում է գոյություն ունենալ և նրա իրավունքներն ու պարտականություններն ամբողջ ծավալով անցնում են նոր ստեղծված սուբյեկտին: Եվ քանի որ առանձնացման դեպքում իրավանախորդ կազմակերպությունը չի դադարում գոյություն ունենալուց, նրա իրավունքներն ու պարտավորությունները առանձնացած սուբյեկտին են անցնում ոչ ամբողջ ծավալով:

Այդ կապակցությամբ բավականին հետաքրքիր մոտեցում է ցուցաբերում Դ.Վ. Ժդանովը: Նա գտնում է, որ սինգուլյար իրավահաջորդությունն առկա է ոչ միայն առանձնացման, այլ նաև բաժանման ձևով վերակազմակերպման ժամանակ: Իր այդ տեսակետը գիտնականը հիմնավորում է հետևյալ կերպ. բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում իրավանախորդի իրավունքներն ու պարտավորությունները իրավահաջորդներին անցնում են ոչ թե որպես մեկ միասնական միավոր, ինչպես միացման կամ միաձուլման դեպքում, այլ առանձին մասերով՝ մի քանի

⁵² Տե՛ս **Тевряев А.А.** Некоторые вопросы преемства при реорганизации юридического лица // Банковское право. 2008. № 2, էջ 7:

⁵³ Տե՛ս **Илюшина М.Н.** Проблемы преемства при реорганизации юридических лиц // Закон. 2006. № 9, էջ 80:

⁵⁴ Տե՛ս **Акционерное право России: Учебник / Ю.С. Поваров** - 2-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт; ИД Юрайт, 2011, էջ 260-261:

իրավահաջորդների բաժանման դեպքում և իրավահաջորդին ու իրավանախորդին՝ առանձնացման դեպքում⁵⁵:

Առավել հիմնավոր է թվում իրավահաջորդության մասին այն տեսությունը, որի համաձայն սինգուլյար իրավահաջորդությունը տեղի ունենում այն դեպքում, երբ իրահաջորդին անցնում է որոշակի իրավունք կամ որոշակի պարտականություն, իսկ ունիվերսալ իրավահաջորդությունն առկա է այն ժամանակ, երբ իրավահաջորդին անցնում են իրավանախորդի իրավունքներն ու պարտականությունները միաժամանակ ամբողջ ծավալով կամ մի մասով⁵⁶:

Մասնավորապես, սինգուլյար իրավահաջորդությունն տեղի է ունենում պահանջի գիշման կամ պարտքի փոխանցման ժամանակ, երբ փոխանցվում է կոնկրետ պարտավորությունից բխող իրավունք կամ պարտականություն: Իսկ, օրինակ, ժառանգման դեպքում, իրավահաջորդությունը միշտ համապարփակ բնույթ է կրում, քանի որ անգամ մի քանի ժառանգների առկայության դեպքում ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի փոխանցման դեպքում փոխանցվում է այդ գույքի հետ կապված իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, այլ ոչ թե միայն իրավունք կամ միայն պարտականություն:

Վերակազմակերպման դեպքում ևս իրավահաջորդին են փոխանցվում իրավանախորդի իրավունքներն ու պարտականությունները միասին ամբողջությամբ կամ մի մասով: Ընդ որում, վերակազմակերպման դեպքում իրավահաջորդին չի կարող փոխանցվել միայն իրավունք կամ միայն պարտականություն, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքի և պարտավորությունների անհամամասնական բաշխումը հիմք է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումների մերժման համար:

Քաղաքացիական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտները կարող են

⁵⁵ Տե՛ս **Жданов Д.В.** Реорганизация акционерных обществ в Российской Федерации. Изд. 2-е, перераб. и доп. - М.: «Лекс-Книга», 2002., էջ 40:

⁵⁶ Տե՛ս **Гражданское право. Том 1. Учебник. Издание шестое, переработанное и дополненное / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого.** – М.: ООО «ТК Велби», 2002. էջեր՝ 162, 415 – 416:

ազատորեն օտարվել կամ անցնել մեկ անձից մյուսին *համապարփակ իրավահաջորդության* կարգով (ժառանգում, *իրավաբանական անձի վերակազմակերպում*), կամ այլ եղանակով, եթե դրանք հանված չեն շրջանառության նից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված չէ: Քաղաքացիական օրենսգրքը առանձնացնում է համապարփակ իրավահաջորդության երկու դեպք՝ ժառանգում և իրավաբանական անձի վերակազմակերպում: Նշվածը փաստում է այն մասին, որ օրենսդրական մակարդակով ևս շեշտվում է այն հանգամանքը, որ վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդությունը կրում է համապարփակ բնույթ:

Այս տեսությունների համադրությունը, ինչպես նաև քաղաքացիական օրենսդրության համակարգային վերլուծությունը թույլ են տալիս պնդել, որ վերակազմակերպման արդյունքում տեղի է ունենում համապարփակ իրավահաջորդություն: Ընդ որում, պետք է նշել, որ համապարփակ իրավահաջորդությունն առկա է վերակազմակերպման բոլոր ձևերի, այդ թվում՝ առանձնացման դեպքում, քանի որ առանձնացած իրավաբանական անձին փոխանցվում են վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքների և պարտականությունների մի մասը, այլ ոչ թե միայն իրավունք կամ միայն պարտավորություն:

Քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն վերակազմակերպման բոլոր ձևերի դեպքում իրավունքներն ու պարտավորություններն անցնում են նոր ստեղծված իրավաբանական անձին կամ անձանց: Ընդ որում, այդ փոխանցումը կախված վերակազմակերպման ձևից իրականացվում է փոխանցման ակտով կամ բաժանիչ հաշվեկշռով:

Բացի այդ, Քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրոյթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները: Ընդ որում նշված հոդվածները որևէ դրոյթ չեն պարունակում վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդության տեսակի մասին, ինչի արդյունքում

անհրաժեշտություն է առաջանում հղում կատարելու քաղաքացիական օրենսգրքի 133-րդ հոդվածին:

Վերականգնման գործընթացում կարևորվում է ոչ միայն իրավաբանական անձի իրավունքների և պարտավորությունների, այլև նաև իրավաբանական անձի պատասխանատվության (քաղաքացիական և վարչական) իրավահաջորդության հարցի պարզումը: Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված իրավահարաբերությունները իրենց բնույթով հանրային-իրավական են, այնուամենայնիվ դրանք էական ազդեցություն են ունենում նաև քաղաքացիական հարաբերությունների կայունության և դրանց բնականոն ընթացքի վրա: Վարչական, հատկապես ֆինանսական պատասխանատվության ենթարկված կորպորատիվ տիպի իրավաբանական անձը շատ դեպքերում ստիպված է կատարել իր ֆինանսական միջոցների, այդ թվում՝ շրջանառության մեջ գտնվող, վերաբաշխում պետության առջև ունեցած պարտավորությունները կատարելու նպատակով: Այդ վերաբաշխումը կարող է կատարվել ընթացիկ պայմանագրերը խզելու, դրա պայմանները փոխելու, նոր գործարար կապերից հրաժարվելու, ներդրումները կրճատելու և այլ եղանակներով: Մյուս կողմից, կազմակերպությունը վարչական պատասխանատվության ենթարկվելու արդյունքում կարող է կորցնել իր գործարար գրավչությունը, ներդրումային վստահությունը, որի արդյունքում կորպորացիան էականորեն կզրկվի նրանից, ինչ կարող էր ակնկալել վարչական պատասխանատվության ենթարկված չլինելու դեպքում: Այս ամենի արդյունքում վարչական պատասխանատվության իրավահաջորդանը վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը ձեռք է բերում մեծ կարևորություն քաղաքացիական հարաբերությունների կայունության և կանխատեսելիությունն ապահովելու, ինչպես նաև կորպորացիայի իրավահաջորդների և դրանց մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց, վերականգնման ձևից կախված իրավահաջորդությունը ձևակերպվում է փոխանցման ակտով

(միացում, միանում, վերակազմավորում) կամ բաժանիչ հաշվեկշռով (բաժանում, առանձնացում), որոնք համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները: Այսինքն, փոխանցման ակտով (բաժանիչ հաշվեկշռով) պետք է սահմանվեն իրավահաջորդ իրավաբանական անձանց անցնող վերակազմակերպման պահի դրությամբ առկա գույքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև վերակազմակերպման պահի դրությամբ առկա պարտավորությունների (այդ թվում՝ վիճարկվող) մասին տեղեկություններ: Այլ կերպ ասած վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդությամբ անցնում են այն գույքը կամ պարտավորությունները, որոնք տվյալ պահին հայտնի են, այդ թվում նրանք, որոնք վիճարկվում են:

Քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները: Այսինքն, իրավահաջորդը կկրի վնասի հատուցման պարտականություն միայն այն դեպքում, երբ իրավանախորդը արդեն իսկ ճանաչվել է պատասխանատու պատճառված վնասի համար:

Նմանապես, «Չարկերի մասին» ՀՀ օրենքի⁵⁷ 16-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության վերակազմավորման (վերակառուցման) դեպքում չկատարված հարկային պարտավորությունը կրում է նրանց իրավահաջորդը (իրավահաջորդները): Նույն հոդվածի համաձայն հարկային պարտավորությունը ներառում է նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը

⁵⁷ Տե՛ս ՀՀ օրենքը «Չարկերի մասին»՝ ընդունված 14.04.1997, ՀՀՊՏ 1997.05.20/11:

խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի⁵⁸ (ուժի մեջ է մտնելու 01.01.2018թ.) 49-րդ հոդվածը սահմանում է վերականգնարարական արդյունքում հարկային պարտավորության իրավահաջորդության կարգը: Մասնավորապես, նշվում է, որ կազմակերպությունների միանույն դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպությունների միացման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այն կազմակերպությունը, որին միացել է կազմակերպությունը, կազմակերպության բաժանման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ են համարվում այդ բաժանումից առաջացած կազմակերպությունները՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, կազմակերպության կազմից մեկ կամ մի քանի կազմակերպության առանձնացման դեպքում վերականգնարարական անձի հարկային պարտավորությունները առանձնացված կազմակերպություններից յուրաքանչյուրին են անցնում բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, կազմակերպության վերականգնարարական դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպության վերականգնարարական արդյունքում առաջացած կազմակերպությունը:

Նշված ձևակերպումները թույլ են տալիս ենթադրել, որ եթե անգամ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար պատասխանատվության կամ հարկային պարտավորության իրավահաջորդության վերաբերյալ համապատասխան նշում չկա փոխանցման ակտում, ապա միևնույն է այդ պարտավորությունն անցնում է իրավահաջորդ իրավաբանական անձին, քանի որ դա ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Ընդհանրապես, ինչպես իրավացիորեն նշում է Վ.Դ. Ավետիսյանը, փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը լիարժեք

⁵⁸ Ընդունվել է 04.10.2016թ., ուժի մեջ է մտնելու 01.01.2018թ., ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038:

կերպով չեն ծառայում այն նպատակին, որի ապահովման համար ստեղծվել են այդ հասկացությունները: Մասնավորապես, փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը հաստատում են միայն դրանց կազմման օրվա դրությամբ գոյություն ունեցող գույքի կամ պարտավորությունների իրավահաջորդության մասին տեղեկություններ: Նշված իրավակարգավորումը թույլ չի տալիս պարզել այդ փաստաթղթերի հաստատումից հետո գույքի կամ պարտավորությունների փոփոխության փաստը բացահայտելու հնարավորությունը: Բացի այդ, օրենսդիրը հստակ չի կարգավորում այն դեպքերը, երբ փոխանցման ակտով պարտավորությունների վերաբերյալ չեն նշվում ամբողջական տեղեկություններ: Նման դեպքերի համար առաջարկվում է սահմանել իրավահաջորդների համար համապարտապատասխանատվություն⁵⁹:

Պատասխանատվության իրավահաջորդության խնդիրը պետք է քննարկել երկու տեսանկյունից: Առաջին հերթին քննարկենք այն դեպքը, երբ իրավաբանական անձը կատարել է իրավախախտում կամ թույլ է տվել պարտավորության կատարման կետանց կամ վնաս է պատճառել, որը վարչական իրավախախտման դեպքում հաստատվել է վարչական ակտով (ներառյալ այն դեպքերը, երբ իրավաբանական անձի նկատմամբ կա ենթադրյալ վարչական իրավախախտման կապակցությամբ հարուցված վարչական վարույթ և իրավաբանական անձը վերակազմակերպվում է), իսկ պարտավորության կետանցի դեպքում այդ մասին հայտնի է դարձել պարտապանին և պարտատիրոջը (նույնը նաև վնաս պատճառելու դեպքերում): Իրավահաջորդության օրենսդրական ներկա կարգավորումը թույլ է տալիս լուծել այս խնդիրը: Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է, իրավահաջորդության պահին հայտնի իրավանախորդի գույքը կամ պարտավորությունները (այդ թվում՝ վիճարկվող)⁶⁰ և իրավունքները անցնում են իրավահաջորդին (այս պարագայում հիմք ընդունենք նաև տեսության մեջ արտահայտված իրավացի տեսակետն առ այն, որ

⁵⁹ Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջեր 126-127:

⁶⁰ Վերակազմակերպվող իրավաբանական անձի նկատմամբ ենթադրյալ իրավախախտման կապակցությամբ հարուցված վարչական վարույթը դիտարկենք որպես վիճարկվող հնարավոր պարտավորություն, որի հաստատման դեպքում իրավահաջորդը կկրի համապատասխան բացասական ռիսկերը՝ պատասխանատվության միջոցների տեսքով:

նման պարտավորություններն անցնում են իրավահաջորդին անկախ փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում դրանց մասին նշելու)⁶¹:

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ կորպորացիան կատարում է վարչական իրավախախտում կամ քաղաքացիաիրավական զանցանք (օրինակ՝ կյանքին կամ առողջությանը վնասի պատճառում) և մինչև այդ իրավախախտման բացահայտումը կամ դրա բացահայտման նպատակով վարչական վարույթ հարուցելը (ըստ էության մինչև իրավախախտման փաստի կամ հնարավոր իրավախախտման մասին հայտնի դառնալը) վերականգնակերպում է: Արդյոք նման դեպքերում հնարավոր է պատասխանատվության փոխանցումը իրավահաջորդության:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ գործող օրենսդրությամբ կարգավորվում են միայն իրավահաջորդության պահին առկա իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդությամբ փոխանցվելու հետկապված հարաբերությունները:

Վերը նշված խնդրին փորձ է արվել լուծում տալ Վարչական իրավախախտումների մասին նոր օրենսգրքի նախագծով⁶²: Մասնավորապես, նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի վերականգնակերպման դեպքում վարչական պատասխանատվության ենթակա է իրավահաջորդ իրավաբանական անձը, իսկ իրավաբանական անձի բաժանման դեպքում՝ այն իրավաբանական անձը, որին, ըստ բաժանիչ հաշվեկշռի, անցել է գույքի առավել մեծ մասը, իսկ գույքի հավասարաչափ բաժանման դեպքում՝ իրավահաջորդ բոլոր իրավաբանական անձինք:

Նախագծով տրված կարգավորումը ևս սակայն ամբողջությամբ չի ապահովում բարձրացված խնդրի լուծումը: Նախ վերը նշված դրույթից միանշանակ պարզ չէ վարչական պատասխանատվության իրավահաջորդության անցման պահը: Մասնավորապես, եթե իրավաբանական անձը կատարում է իրավախախտում և վերականգնակերպում է, արդյոք վերականգնակերպման պահից իրավահաջորդ իրավաբանական

⁶¹ Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, նշված աշխատությունը, էջ 127:

⁶² Տե՛ս՝ «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագիծը, http://justice.am/storage/files/legal_acts/legal_acts_7256154733152_yndhanur-mas-naxagic-2.pdf: Հասանելի է 04.05.2017թ. դրությամբ:

անձը կրում է իրավանախորդի կողմից կատարված վարչական իրավախախտման համար հետագայում վարչական պատասխանատվության ենթարկվելու ռիսկը, թե իրավահաջորդ իրավաբանական անձը վարչական պատասխանատվության ենթարկվում իրավանախորդ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումից հետո կամ հարուցված վարչական վարույթի ընթացքում տեղի ունեցած վերակազմակերպման արդյունքում:

Պետք է նշել, որ եթե վարչական պատասխանատվությունն իրավահաջորդությունում անցնում է վարչական իրավախախտման կատարման պահից հետո վերակազմակերպվելու փաստի ուժով, ապա առաջանում է իրավախախտ իրավաբանական անձին և դրա իրավահաջորդին նույնականացնելու խնդիրը: Մասնավորապես, իրավախախտում կատարելուց հետո իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավախախտումը բացահայտելուց հետո վարչական մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի գտնելու իրավախախտ իրավաբանական անձի իրավահաջորդներին, որը որոշ դեպքերում անհնար կլինի, մասնավորապես, եթե իրավահաջորդ իրավաբանական անձինք ևս դադարեցնեն իրենց գործունեությունը կամ վերակազմակերպվեն:

Բացի այդ, նախազօժվ սահմանվում են միայն բաժանման ձևով վերակազմակերպվելու դեպքում վարչական պատասխանատվության իրավահաջորդության առանձնահատկությունները, մինչդեռ անհրաժեշտ է վերակազմակերպման յուրաքանչյուր ձևի համար նախատեսել առանձին կարգավորումներ: Խնդիրը կայանում է նրանում, որ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում ևս ըստ էության տեղի է ունենում իրավահաջորդություն, մասնավորապես՝ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնանալու դեպքում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքները և պարտականությունները նրանցից յուրաքանչյուրին են անցնում՝ բաժանիչ հաշվեկշիռն համապատասխան:

Նախազօժվ սահմանված կարգավորման դեպքում ստացվում է, որ իրավաբանական անձի՝ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել

միայն առանձնացած իրավաբանական անձը, իսկ այն իրավաբանական անձը, որը կատարել է իրավախախտում և շարունակում է գոյություն ունենալ ենթակա չի լինի վարչական պատասխանատվության: Բացի այդ, հստակեցման կարիք ունի նաև իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի չափի կամ արժեքի որոշումը: Մասնավորապես, եթե բաժանման դեպքում իրավահաջորդ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հանգամանքը կապվում է նրանց անցած գույքի հետ, ապա անհրաժեշտություն է առաջանում նաև սահմանելու, թե ինչ չափանիշով է որոշվում իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի քանակը կամ չափը՝ գույքի արժեքային արտահայտությամբ, թե գույքի միավորների քանակով: Վերջին դրույթի հստակեցումը կարևոր է նաև այն առումով, որ ապահովվի կատարված իրավախախտման և կիրառվող պատասխանատվության համաչափությունը վերակազմակերպման տեսանկյունից: Մասնավորապես, իրավախախտում կատարած իրավաբանական անձի բաժանման դեպքում, օրինակ, նոր ստեղծված իրավաբանական անձանց կարող է անցնել տարբեր քանակի, տարբեր արժեքով գույք, որի դեպքում կառաջանա իրավահաջորդին որոշելու համար գույքի արժեքի կամ քանակի կամ նշանակության որոշման անհրաժեշտությունը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք հստակեցնել վարչական պատասխանատվության դեպքում իրավահաջորդությանը վերաբերող դրույթները, մասնավորապես՝ հստակեցնել իրավահաջորդության պահը, հստակեցնել իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի քանակի կամ արժեքի որոշման չափանիշները:

Ուսումնասիրելով օտարերկրյա փորձը⁶³ առաջարկում ենք մանրամասն սահմանել վերակազմակերպման յուրաքանչյուր ձևի դեպքում պատասխանատվության իրավահաջորդության կարգը,

⁶³ Տե՛ս "Кодекс Российской Федерации об административных правонарушениях" от 30.12.2001 N 195-ФЗ, http://www.consultant.ru/popular/koap/13_2.html#p350, **Банчук А.** Право об административных нарушениях: опыт стран Западной и Восточной Европы, требования Европейского Суда по правам человека и стандарты Совета Европы, http://pravo.org.ua/files/administr/covv/banchuk_pravo_adm_porush_rus.pdf:

ինչպես նաև բաժանման և առանձնացման դեպքում իրավահաջորդին որոշելու պայմանները⁶⁴:

Պատասխանատվության իրավահաջորդության մանրամասն կարգավորումները կնպաստեն պրակտիկայում առաջացող հնարավոր խնդիրների լուծմանը: Մասնավորապես, այդպիսի խնդիրներ են առաջանում այն դեպքում, երբ իրավաբանական անձը կատարում է վարչական իրավախախտում (թույլ է տալիս գերիշխող դիրքի չարաչափում) և վերակազմակերպում է (նրանից բաժանվում են երկու ընկերություններ), իսկ իրավախախտ գործողությունը դրսևորվել է որոշակի ապրանքների իրացման գները չհիմնավորված բարձրացնելով կամ շուկայում ապրանքի պակասորդ ստեղծելով, և իրավախախտումը բացահայտվել է վերակազմակերպման գործընթացի ավարտից հետո:

Մեր կարծիքով նմանատիպ դեպքերում պատասխանատվության իրավահաջորդությունը պետք է որոշել ելնելով հետևյալ չափանիշներից: Առաջին հերթին, պատասխանատվության պետք է ենթարկվի այն իրավաբանական անձը, որին անցել է այն ապրանքներն իրացնելու իրավունքը, որոնց շրջանառության ապրանքային շուկայում տեղի է ունեցել իրավախախտում: Այն դեպքում, երբ այդ ապրանքներն իրացնելու իրավունքը փոխանցվել է բոլոր իրավահաջորդներին, ապա պատասխանատվության պետք է ենթարկվի այն իրավաբանական անձը, որին անցել է գույքի առավել մեծ մասը՝ արժեքային արտահայտությամբ: Այն դեպքում, երբ գույքն իրավահաջորդներին փոխանցվել է համամասնորեն, ապա ֆինանսական պատասխանատվության պետք է ենթարկվեն բոլոր իրավահաջորդները՝ իրենց անցած գույքի արժեքին համապատասխան, իսկ եթե հնարավոր չէ որոշել փոխանցված գույքի համամասնությունը, ապա իրավահաջորդները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն:

Ինչ վերաբերում է քաղաքացիաիրավական պատասխանատվության իրավահաջորդությանը այն դեպքերի համար, երբ իրավախախտման

⁶⁴ Օրինակ՝ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.10-րդ հոդվածի համաձայն իրավախախտ իրավաբանական անձի բաժանման կամ վերջինից այլ իրավաբանական անձի առանձնացման դեպքում պատասխանատվության է ենթակա այն իրավաբանական անձը, որին անցել է գույքի այն գնագվածը կամ այն գործարքներից ծագած իրավունքներն ու պարտականությունները, որոնց հետ կապված տեղի է ունեցել վարչական իրավախախտումը,

փաստը հայտնի է դառնում վերակազմակերպվելուց հետո, ապա պետք է նշել, այդ հարցերը որոշակի առումով լուծվում են Նախագծով: Մասնավորապես, նախագծի 15-րդ հոդվածով սահմանվում է, որ փոխանցման ակտը պետք է դրույթներ պարունակի ոչ միայն դրական կազմման պահին առկա պարտավորությունների վերաբերյալ, այլ նաև փոխանցման ակտը կազմելու ամսաթվից հետո վերակազմակերպվող իրավաբանական անձի իրավունքների և պարտավորությունների առաջացման, փոփոխման և դադարման հետ կապված գույքի տեսակի, կազմի, արժեքի հնարավոր փոփոխման դեպքում դրանց իրավահաջորդության որոշման կարգը:

Վերակազմակերպման իրավական կարգավորման ոլորտում առկա հաջորդ եական հարցը կապված է այն հանգամանքի պարզման հետ, թե արդյոք վերակազմակերպումը կարելի է համարել քաղաքացիաիրավական գործարք, թե՛ ոչ: Այս հարցի պարզումը, բացի գուտ տեսական նպատակներից, հետապնդում է նաև գործնական խնդիրների լուծման նպատակ, այն է՝ պարզել, թե արդյոք կարելի է վերակազմակերպման գործընթացի նկատմամբ կիրառել գործարքների (մասնավորապես՝ դրանց անվավերությանը) վերաբերող քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները:

Այս խնդրի կապակցությամբ, օրինակ, Բ.Պ. Արխիպովը նշում է, որ վերակազմակերպումը պետք է համարել է գործարք՝ իր այդ տեսակետն հիմնավորելով նրանով, որ վերակազմակերպման ընթացքում կնքվում են բազմաթիվ գործարքներ, ինչի արդյունքում վերակազմակերպումը ևս ձեռք է բերում քաղաքացիաիրավական գործարքի ձև⁶⁵: Արխիպովի այս հայեցակարգը հանգեցրեց իրավագետների շրջանում տարաբնույթ քննարկումների: Բազմաթիվ իրավագետներ փորձեցին հերքել այս տեսակետը: Մասնավորապես, Դ.Ի. Ստեպանովը, ի ժխտումն այս մոտեցման, առաջ է քաշում հետևյալ հարցադրումը. «Ինչպես կարող է վերակազմակերպումը համարվել գործարք, եթե դրա արդյունքում կամահայտնության ցուցաբերած սուբյեկտը, այսինքն՝ անձը, ով

⁶⁵ Տե՛ս **Архипов Б.П.** Реорганизационные договоры о слиянии и поглощении акционерных обществ // Законодательство. 2002. № 10., էջ 42:

սեփական կամքով կնքում է գործարքը, դուրս է գալիս քաղաքացիական շրջանառությանը»⁶⁶:

Իհարկե, կարելի է համաձայնել այն մտքի հետ, որ վերակազմակերպման ընթացքում կնքվում են տարաբնույթ գործարքներ (օրինակ՝ միաձուլման կամ միացման պայմանագրերը), բայց, միևնույն ժամանակ, վերակազմակերպումն ուղեկցվում է նաև այլ գործողությունների իրականացմամբ, որոնք իրենց էությունով չեն կարող համարվել գործարք: Դրանք են մասնավորապես՝

- կազմակերպչական-վարչական գործառնությունների իրականացումը,

- վարչական ակտերի ընդունում: Քաղաքացիական օրենսգրքի համաձայն իրավաբանական անձանց վերակազմակերպումն ավարտվում է համապատասխան պետական գրանցման պահից, իսկ այդ պետական գրանցումը ամրագրվում է պետական իրավասու մարմնի անհատական ակտով, որը իր էությունով չի կարող համարվել գործարք:

Հարկ է նշել, որ օրինակ, Ռուսաստանի Դաշնությունն \$եդերալ արբիտրաժային դատարանն իր 14.12.2006թ. թիվ Փ 04-7825/2006 (28620-A70-30) գործով կայացրած որոշմամբ արձանագրել է հետևյալը. «քանի որ վերակազմակերպման մասին որոշումը և վերակազմակերպումն ինքնին համարվում են որոշակի իրավական արդյունքին ուղղված կամավոր գործողություններ և այդ իրավական արդյունքները և իրավունքներն ու պարտականությունները առաջանում են այլ հիմքով, քան ՌԴ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերն են, հետևաբար վերակազմակերպումը չի կարող համարվել գործարք և դրա նկատմամբ կիրառելի չեն գործարքի անվավերության վերաբերյալ ՌԴ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված նորմերը»⁶⁷:

Վերը ներկայացվածի հիման վրա կարելի է անել միանշանակ եզրակացությունն այն, որ վերակազմակերպումը ոչ թե անանձին գործարք է, այլ իրենից ներկայացնում է իրավաբանական փաստերի բարդ համախումբ, որի ընթացքում կնքվում են ինչպես գործարքներ,

⁶⁶ Տե՛ս **Степанов Д.И.** Аннулирование реорганизации: повод задуматься над концептуальными подходами в области создания юридических лиц // Закон. 2007. № 3, էջ 62:

⁶⁷ Տե՛ս Постановление Федерального арбитражного суда Западно-Сибирского округа от 14 декабря 2006 г. N Ф04-7825/2006(28620-A70-30), <http://www.garant.ru/products/ipo/prime/doc/34012093/>:

այնպես էլ կատարվում են իրենց բովանդակությամբ գործարք չհամարվող գործողություններ:

Վերակազմակերպումը կարգավորող քաղաքացիաիրավական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել վերակազմակերպման երկու տեսակ՝ կամավոր և հարկադիր: Կամավոր վերակազմակերպումն իրականացվում է կազմակերպության կողմից կամավոր կերպով, սեփական կամքով, որը կարող է կապված լինել տարաբնույթ տնտեսական հանգամանքների հետ կամ լինել կազմակերպության մասնակիցների միջև առկա տարածայնությունների արդյունք: Կարևորն այն է, որ վերակազմակերպման որոշումն ընդունում է կազմակերպությունն ինքը՝ անկախ այլ անձանց կամ մարմինների կամքից:

Ինչ վերաբերում է հարկադիր վերակազմակերպմանը, ապա Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն այն իրականացվում է դատարանի վճռի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով:

Իրականացված ուսումնասիրության ամբողջական ընդհանրացման արդյունքում վերակազմակերպումը կարելի է բնորոշել հետևյալ կերպ՝ *վերակազմակերպումը օրենքով սահմանված իրավաբանական անձի ստեղծման և (կամ) դադարման ընթացակարգ է, որի արդյունքում իրավանախորդ իրավաբանական անձի իրավունքներն ու պարտավորությունները համապարփակ իրավաճորդությամբ անցնում են վերակազմակերպման արդյունքում ստեղծված (պահպանված) իրավաբանական անձին և (կամ) անձանց:*

**ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**§ 1. Միացու մը և միաձուլու մը որպէս վերակազմակերպման
համախմբող ձևեր**

Գիտատեխնիկական զարգացման արագընթաց տեմպերի պայմաններում տնտեսության առաջընթացի կարևոր պայման են համարվում տնտեսական գլոբալիզացիոն գործընթացները: Արտադրության գլոբալիզացիան, մասնավորապես, հանգեցրեց ինտեգրացիոն գործընթացների աճի, որի պայմաններում կազմակերպությունները ոչ միայն կարողացան պահպանել իրենց գոյությունը, այլ նաև ապահովեցին իրենց տնտեսական գործունեության հնարավորինս կայունությունը շուկաներում անընդհատ փոփոխվող պայմանների պարագայում:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ միաձուլումն ու միացումը որպէս տնտեսավարող սուբյեկտների խոշորացման ձևեր համարվում են իրավաբանական անձանց կապիտալիզացիայի մակարդակի բարձրացման առավել տարածված հնարքներ: Մ.Ի. Կուլագինը գրում է՝ «զարգացած տնտեսությունն ունեցող երկրներում միացումն ու միաձուլումը համարվում են արտադրության և կապիտալի կոնցենտրացիայի կարևորագույն գործիքներ»⁶⁸:

Ներկա պայմաններում, տնտեսության առաջատար ճյուղերում տեղի է ունենում մասնագիտացված մասնակիցների կոնսոլիդացիա: Ինչպէս նշում է Վ.Ե. Էտնյուկովան՝ վերջին տարիների տնտեսության զարգացումը հանգեցրել է փոքր կազմակերպությունների անմրցունակությանը խոշոր կորպորացիաների նկատմամբ, ինչի հետևանքով կազմակերպությունները ստիպված են եղել վերանայել իրենց զարգացման ռազմավարական ուղղությունները: Տնտեսավարող

⁶⁸ Տե՛ս Գосударственно - монополистический капитализм и юридическое лицо / М.И. Кулагин; М-во высш. и сред. спец. образования СССР. - М.: Изд-во Ун-та дружбы народов, 1987. Էջ 131:

սուբյեկտը, որն իրականացնում է գործունեության տնտեսության մեկ կամ մի քանի ճյուղերում միաժամանակ, փորձում է իրակտիվները այլ կազմակերպությանների ակտիվների հետ միացման միջոցով ամրապնդվել համապատասխան շուկայում և ընդարձակել իր գործունեության ուղղությունները: Միաժամանակ միացման ձևով վերակազմակերպման մեխանիզմը նպաստում է կազմակերպության տնտեսական աճին, բարձրացնում է դրանց մրցունակությունը, արագացնում է ներդրումային գործընթացները, ապահովում է կայուն տնտեսական հարաբերություններ⁶⁹:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ կազմակերպությանները միացման գործընթացներ կարող են սկսել ոչ միայն շուկայում տիրող իրավիճակի թելադրանքով, այլ նաև պետության կողմից սահմանվող կարգավորումների արդյունքում:

Այսպես, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունեց որոշում, որով բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմը 5 մլդ դրամից բարձրացվեց և հավասարվեց 30 մլդ դրամի, որպիսի պահանջը գործում է 2017 թվականի հունվարի 1-ից⁷⁰: Նշված պարտադիր պահանջը հանգեցրեց նրան, որ այն բանկերը, որոնք չունեն բավարար միջոցներ և հնարավորություն իրենց ընդհանուր կապիտալը մինչև 2017 թվականի հունվարի 1-ը հասցնել 30 մլդ դրամի շեմին, ստիպված սկսեցին ձեռնարկել վերակազմակերպման գործընթացներ: Կենտրոնական բանկը այս որոշումը պայմանավորել է բանկերի միաձուլումների խթանման և խոշորացման անհրաժեշտությամբ և նշել, որ այն կհանգեցնի բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շուկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև կնպաստի բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի

⁶⁹ Տե՛ս **Этнюков В.Е.** Реорганизация акционерных обществ в форме присоединения и слияния // Закон и право. 2010. № 8., էջեր՝ 30-32.

⁷⁰ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 376-Ն որոշումը, ՀՀԳՏ 2015.02.16/5(517).1 Հոդ.23.16:

բանկային ծառայությունների մատուցմանը⁷¹: Նշված որոշման արդյունքում հայաստանյան շատ բանկեր, չկարողանալով համարել իրենց կապիտալը ապահովելու համար նվազագույն 30 մլդ դրամի շեմը, նախընտրեցին միանալ այլ բանկերի: Դրա հետևանքով, Հայաստանի Հանրապետություն գործող 21 առևտրային բանկերից 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացել են 18-ը⁷²:

Պատմականորեն առաջին միաձուլումները (միացումները) կատարվել են 1897-1904թթ., երբ մեծացավ արդյունավետության բարձրացման պահանջը, առաջացան բարդություններ Շերմանի օրենքի կիրառման կապակցությամբ, սկսեցին աճել դեպի Արևմուտք միգրացիայի տեմպերը, տեխնիկական առաջընթացը թևակոխեց զարգացման նոր փուլ: Այդ ժամանակահատվածը բնութագրվում է խոշոր կորպորացիաների կողմից մանր ընկերությունների «կլանմամբ»: Այսպես, 1901 թվականին Ջոն Պեմպրտ Մորգանը ստեղծեց US Steel առաջին գերխոշոր ռազմարտադրող ընկերությունը՝ միավորելով 785 մանր կոմպանիաներ, որոնցից ամենահայտնին և խոշորն է Carnegie Steel կազմակերպությունը: Այդ ժամանակ էլ առաջացան այնպիսի գիգանտներ, ինչպիսիք են Standard Oil, Eastman Kodak, American Tobacco, General Electric և այլոք: Միաձուլումների առաջին ալիքն ընդունված է համարել հորիզոնական միաձուլումների ժամանակաշրջան: Այդ ժամանակահատվածում հորիզոնական միաձուլումները կազմում էին ընդհանուր միաձուլումների 78 տոկոսը, ուղղահայացները՝ 12 տոկոսը, իսկ խառը՝ ընդամենը 10 տոկոսը⁷³:

Միաձուլումների երկրորդ ալիքը սկսվեց 1916 թվականին, երբ ԱՄՆ-ը մտավ առաջին համաշխարհային պատերազմ և սկսվեց հետագա տնտեսական ցայտնոտը: Երկրորդ փուլն ավարտվեց 1929 թվականին ֆոնդային բորսաների անկմամբ և Կլեյտոնի ակտի ընդունմամբ: Առավել շատ միաձուլումներ տեղի ունեցան 1926-1929թթ., երբ միաձուլումների միջոցով կլանվեցին շուրջ 13 միլիարդ դոլար

⁷¹ Տե՛ս <http://www.banks.am/am/news/newsfeed/10357/>:

⁷² Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջը՝ www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx: ՀՀ գործող երեք առևտրային բանկեր միացել են այլ բանկերի և դադարեցրել գործունեությունը:

⁷³ Տե՛ս **Баранов А.В.** Содержание и значение процессов слияния и поглощений в США в условиях глобализации. Дисс...к.э.н., М., 2005, էջ 31:

արժողու թյամբ ակտիվներ, որոնք կազմում էին այդ ժամանակ ԱՄՆ-ում առկա արտադրական ակտիվների 17,5 տոկոսը⁷⁴:

Միաձուլումների երրորդ փուլը (1965-1969 թթ.) բնութագրվում էր ֆինանսական ինժինեռիայի և կոնգլոմերատների առաջացմամբ: Գին-եկամուտ առավել մեծ հարաբերակցությունն ունեցող կորպորացիաները սկսում են ավելացնել իրենց եկամուտները ոչ թե նոր ներդրումների հաշվին, այլ «կլանումների» միջոցով: Այդ կլանումների արդյունքում աճում էր նաև միավորված կոմպանիաների արժեթղթերի գինը: 1981-1989թթ. կարելի է համարել թշնամական կլանումների ժամանակաշրջան, երբ գերխոշոր կորպորացիաները արագընթաց տեմպերով և ամենատարբեր միջոցներով կլանում էին ավելի փոքր կազմակերպություններին: 1990-2000թթ. միաձուլումների ալիքը համեմատաբար հանդարտացավ: Նախորդ տարիների համեմատ միաձուլումներն ընդհանուր արժեքային արտահայտությամբ էականորեն զիջում էին: Այսպես, Թոմպսոն Ֆայնենշըլ Թայմսի տվյալների համաձայն 2000 թվականի դրությամբ միաձուլումների ծավալը արժեքային արտահայտությամբ նվազել է 49 տոկոսով և նախորդ 3,31 տրիլիոն դոլարի համեմատ կազմել է 1,7 տրիլիոն⁷⁵: Իսկ ահա 2007 թվականին և տնտեսական ճգնաժամի տարիներին (2008-2009թթ.) այդ ցուցանիշը միջինում հավասարվում է շուրջ 125 միլիարդ ամերիկյան դոլարի, ինչն էականորեն զիջում է 21-րդ դարասկզբի ցուցանիշին⁷⁶: Այդ հանգամանքը պայմանավորված է ոչ միայն տնտեսական ճգնաժամով, այլ նաև նրանով, որ ներկայիս տնտեսական առաջընթացը հիմնականում ապահովում են միաձուլման կամ միացման արդյունքում արդեն իսկ խոշորացած կորպորացիաները, ոչ թե նոր շուկամտնող կազմակերպությունները:

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում տնտեսվարող սուբյեկտները ավելի շատ են օգտագործում միաձուլումների և միացումների գործիքակազմը սեփական զարգացման և տնտեսական աճի համար: 20-րդ դարի սկզբում անցնելով

⁷⁴ Տե՛ս Слияния, поглощения и реструктуризация компаний/ Патрик А. Гохан. Пер. с англ. - М.: Альпина Бизнес Букс, 2004., էջ 50:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

⁷⁶ Տե՛ս <http://www.rating.rbc.ru/article.shtml>

միաձուլումների և կլանումների 4 փուլ՝ երկրորդ հազարամյակի վերջին համաշխարհային տնտեսությունը մտավ զարգացման լիովին նոր փուլ՝ գլոբալիզացիա: Համաշխարհային տնտեսության առաջատարների՝ ավիատրանսպորտի Բոինգի (Boing) և Սքոնալդ Դուգլասի (McDonald Douglas), ավտոտրանսպորտի ԲՄՎ-ի (BMW) և Ռովեր Գրուպի (Rover Group), Դայմլեր Բենցի (Daimler-Benz) և Քրայսլերի (Chrysler), նավթային գերխոշոր կորպորացիաներ Բրիտիշ Պետրոլիումի (British Petroleum) և Ամոկոյի (Amoco), Տեքսակոյի (Texaco) և Մոբայլի (Mobil) և շատ այլ խոշորագույն տնտեսվարողների միջև կնքված գործարքները հավաստում են այդ փաստը: Ընդհանրապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միաձուլումների (կլանումների) գործընթացը իրականացվում է տնտեսության առանցքային բոլոր ոլորտներում⁷⁷: Հետևաբար, իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացները պետք է ենթարկվեն մանրակրկիտ վերլուծության: Ընդ որում, պետք է ուսումնասիրվեն ինչպես վերակազմակերպման տնտեսական գործոնները (տնտեսվարողների անհատական կամ կոլեկտիվ տնտեսական շահեր, օբյեկտիվ գործոններով պայմանավորված տնտեսական շահերի համադրման անհրաժեշտություն և այլն), այնպես էլ ոլորտը կարգավորող իրավական բազան:

Համաշխարհային պրակտիկայում միաձուլումները բնութագրվում են որպես երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտների միավորում, որի դեպքում միաձուլվող տնտեսվարող սուբյեկտները դադարում են գոյություն ունենալ, նրանց ամբողջ գույքը, իրավունքներն ու պարտականությունները անցնում են նոր ստեղծված սուբյեկտին⁷⁸: Այս գործընթացի դասական օրինակ է հանդիսանում առդիտորական-խորհրդատվական խոշորագույն ընկերությունների՝ Փրայս Ուոթերհաուսի (Price Waterhouse) և Կուպեր և Լիբրանտի (Coopers & Lybrand) միաձուլումը, որի արդյունքում ստեղծվում է Փրայս Ուոթերհաուս Կուպերս (PricewaterhouseCoopers) ընկերությունը: Միացման դեպքում միացող

⁷⁷ Տե՛ս **Базоев С.** Мировой бизнес: эпоха слияний компаний // Рынок ценных бумаг.-1999.-№4.- էջ 39:

⁷⁸ Տե՛ս **Рудык Н., Семенова Е.** Рынок корпоративного контроля: слияния, жесткие поглощения и выкупы долговым финансированием.- М.: Финансы и статистика, 2000., էջ 11:

տնտեսվարող սուբյեկտը դադարում է գոյություն ունենալ՝ միանալով այլ սուբյեկտի, որին անցնում են միավորվող սուբյեկտի բոլոր իրավունքներն ու պարտականությունները⁷⁹:

Միաձուլումների (միացումների) իրավական բնույթն հիմնախնդիրներին անդրադարձել են նաև բազմաթիվ գիտնականներ:

Այսպես, Շերշենևիչը միաձուլում և միացում տերմինները որպես այդպիսիք չէր առանձնացնում և օգտագործում էր «միաձուլում» տերմինը՝ նշելով, որ բաժնետիրական ընկերությունների միաձուլումը հնարավոր է երկու տարբերակով. մի դեպքում մեկ կազմակերպությունը միանում է մյուսին՝ դադարելով գոյություն ունենալ և իր իրավունքներն ու պարտավորությունները փոխանցելով մյուսին, իսկ երկրորդ դեպքում երկու կազմակերպություններն էլ միանում են՝ դադարելով գոյություն ունենալ՝ իրենց իրավունքներն ու պարտավորությունները փոխանցելով նոր ստեղծված իրավաբանական անձին⁸⁰:

Պրոֆեսոր Ի.Տ. Տարասովը նշում է, որ միաձուլումը իրականացվում է երկու հետևյալ միջոցներով՝

- մեկ ընկերությունը կլանում է մեկ այլ ընկերության,
- երկու ընկերություններ միաձուլվում են՝ ստեղծելով նոր

ընկերություն: Այս վերջին տարբերակն իր հերթին կարող էր իրականացվել երկու տարբերակով՝ երկու ընկերություններն էլ իրականում դադարում են գոյություն ունենալ և ստեղծվում է նոր ընկերություն կամ երկու ընկերություններն էլ իրենց հիմքում մնում են նույնը, ուղղակի փոխվում է նրանց ձևը և միաձուլվում է կառավարումը⁸¹: Անդրադառնալով միաձուլումների խնդրին՝ Ցիտովիչը նշում էր, որ այն հնարավոր չէ միայն կազմակերպությունների փոխադարձ համաձայնությամբ և կարող է իրականացվել նաև «կլանումների» և միավորումների միջոցով: Առաջին դեպքում մեկ կազմակերպություն միավորում է մյուս կազմակերպությանը բաժնետերերի, ակտիվների հետ միաժամանակ,

⁷⁹ Տե՛ս **Ляпина С.**, "Слияния и поглощения – признак развитой рыночной экономики"// "Рынок ценных бумаг", №8, 1998, էջ 6:

⁸⁰ Տե՛ս **Шершеневич Г.Ф.**, Учебник торгового права (по изданию 1914 года).- М.: Спарк, 1994, էջ 165:

⁸¹ Տե՛ս **Тарасов И.Т.**, Учение об акционерных компаниях.- М.: Статут, 2000, էջ 326:

իսկ միավորման դեպքում՝ երկու կազմակերպություններն, ըստ էության, դադարում են և ստեղծվում է նոր կազմակերպություն՝ դրանց իրավունքների և պարտավորությունների ողջ ծավալով⁸²:

Քաղաքացիական օրենսգիրքը չի պարունակում միաձուլման և միացման լեզալ բնորոշումները և միայն սահմանում է դրանց իրականացման դեպքում իրավահաջորդության առանձնահատկությունները: Այսինքն, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական և գլխավոր իրավական ակտը չի պարունակում վերակազմակերպման և դրածների իրավական բնորոշումները:

Այս իրավական բացը փորձ է արվել լրացնել Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով, որի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերությունների միաձուլում է համարվում նոր ընկերության ստեղծումը՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող ընկերությունների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող ընկերությունների դադարմամբ:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերությունների միացում է համարվում մեկ կամ մի քանի ընկերությունների դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ ընկերության:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան սահմանում է բաժնետիրական ընկերությունների իրավական վիճակը, նրանց ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման կարգը, բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապահովում է բաժնետերերի, պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Այսինքն, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը կարգավորում է բաժնետիրական ընկերությունների իրավական կարգավիճակից բխող իրավահարաբերություններ և դրանում

⁸² Տե՛ս **Цитович П.** Учебник торгового права. Вып. 1. -СПб., 1891, էջ 165:

սահմանված կատեգորիաները ոչ միշտ է հնարավոր պրոյեկտել նաև այլ կազմակերպարավական ձև ունեցող կազմակերպությունների (հատկապես՝ ոչ առևտրային) մասնակցությամբ ծագող հարաբերությունների նկատմամբ:

Այն փաստը, որ միաձուլման և միացման իրավական բնորոշումները սահմանված են հատուկ իրավական ակտում, որը կարգավորում է առևտրային կազմակերպության՝ բաժնետիրական ընկերության հետ կապված իրավահարաբերություններ, մեր կարծիքով ընդունելի է:

Քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում վերակազմակերպման ձևերի էական հատկանիշներն ընդգրկող հասկացությունները, կարգավորում է միայն վերակազմակերպման սկզբի, վերջնարդյունքի և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարաբերությունները, չի անդրադառնում վերակազմակերպող իրավաբանական անձի և դրա մասնակիցների իրավունքների պաշտպանության հարցերին, ինչը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց և դրանց վերակազմակերպման առանձնահատկություններով և էական տարբերություններով պայմանավորված կարող է վնասել կորպորացիայի շահերին և խախտել դրա մասնակիցների իրավունքները: Բացի այդ, առանձին կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքները (օրինակ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները) վերակազմակերպման ընթացակարգեր չեն նախատեսում և հղում են կատարում Քաղաքացիական օրենսգրքին, ինչը նման իրավական անորոշության պայմաններում կարող է հանգեցնել վերակազմակերպման այս կամ այն ձևի ոչ ճիշտ ընկալմանը և կիրառմանը դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Վերակազմակերպման ձևերի հասկացությունների բացակայությունը միշտ քիչ խնդիրներ է առաջացնում նաև բանկերի միացման գործընթացում միացող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության համատեքստում⁸³:

⁸³ Բանկերի միացման գործընթացում առաջացող խնդիրներին մասնաբաժնե անդրադարձ է կատարվել սույն աշխատանքի 3.2-րդ պարագրաֆում:

Ուստի, անհրաժեշտ է բանաձևել և հենց Քաղաքացիական օրենսգրքով սահմանել միաձուլման և միացման ընդհանուր հասկացողությունները⁸⁴, քանի որ իրավաբանական հասկացողությունները պետք է առավել ճիշտ և ընդգրկուն կերպով նկարագրեն այդ համախմբող գործընթացների էությունը, ընդ որում՝ անկախ այդ գործընթացների մասնակից համարվող կազմակերպությունների կազմակերպարավական ձևից: Այսինքն, Քաղաքացիական օրենսգրքով անհրաժեշտ է սահմանել միաձուլման և միացման այնպիսի հասկացողություններ, որոնք հավասարապես կվերաբերեն ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային իրավաբանական անձանց, ինչպես բաժնետիրական ընկերություններին, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին: Իհարկե, հաշվի առնելով տարբեր տեսակի և տարբերվող կազմակերպարավական ձև ունեցող իրավաբանական անձանց առանձնահատկությունները, անհրաժեշտ է մշակել այնպիսի ունիվերսալ հասկացողություններ, որոնք կվերացարկվեն առկա տարբերություններից և կկենտրոնան ընդհանուրի վրա:

Միաձուլման և միացման հասկացողությունները ձևակերպելու համար անհրաժեշտ է անդրադառնալ դրանց հատկանիշների վերլուծությանը և վերհանել ընդհանուրն ու առանձնահատուկը այդ երկու տնտեսարավական երևույթներում:

Միացումն ու միաձուլումը համարվում են վերակազմակերպման ձևեր, հետևաբար դրանց համար ընդհանուր են այն բոլոր առանձնահատկությունները, որոնք հատուկ են վերակազմակերպմանն ընդհանրապես (իրավաբանական անձանց ստեղծման և դադարման գործընթացները, բարդ իրավաբանական փաստակազմը, համապարփակ իրավահաջորդությունը և այլ հատկանիշներ): Միացումն ու միաձուլումը համարվում են վերակազմակերպման համախմբող ձևեր: Երկուսի դեպքում էլ տեղի է ունենում իրավաբանական անձանց խոշորացում, բիզնեսի

⁸⁴ Նշվածը հավասարապես վերաբերում է նաև վերակազմակերպման մյուս ձևերին, ուստի սույն պարագրաֆում ներկայացված հիմնավորումները վերաբերելի են նաև վերակազմակերպման մյուս ձևերի հասկացողությունները սահմանելու իրավական անհրաժեշտությանը, որի արդյունքում աշխատանքի հետագա շարադրանքում կներկայացվեն դրանց հասկացողությունները:

ընդլայնում, բարձրանում է կազմակերպությունների մրցունակությունը: Վերակազմակերպման երկու ձևերի արդյունքում էլ տեղի է ունենում իրավաբանական անձանց թվի կրճատում:

Այս ընդհանրություններից բացի միացման և միաձուլման միջև առկա են նաև էական տարբերություններ, որոնք ապահովում են վերակազմակերպման այս երկու ձևերի ինքնուրույն գոյությունը:

Այսպես, միաձուլման դեպքում դադարում են գոյություն ունենալ միաձուլվող բոլոր ընկերությունները, մինչդեռ միացման դեպքում դադարում է միայն միացող ընկերությունը: Միաձուլման արդյունքում ստեղծվում է նոր ընկերություն, որին անցնում են միաձուլված կազմակերպությունների բոլոր իրավունքներն ու պարտավորությունները, իսկ միացման դեպքում նոր սուբյեկտ չի առաջանում և միացող կազմակերպության իրավունքներն ու պարտավորությունները անցնում են այն իրավաբանական անձին, որին միացել է վերջինս: Դրամասին է վկայում նաև Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասում տրված ձևակերպումը, որի համաձայն՝ իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից, այլ ոչ թե նոր իրավաբանական անձի գրանցման պահից, որը հատուկ է վերակազմակերպման մնացած բոլոր ձևերին:

Վերը նշված վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց և դրանց վերակազմակերպման առանձնահատկությունները՝ կարող ենք սահմանել միաձուլման և միացման հասկացությունները, որոնք մեր կարծիքով պետք է ամրագրվեն Քաղաքացիական օրենսգրքով:

Միաձուլումը երկու կամ ավելի իրավաբանական անձանց այնպիսի միավորումն է, որի արդյունքում ստեղծված նոր իրավաբանական անձին համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են միավորված և գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, իսկ միաձուլված իրավաբանական անձանց մասնակիցները (անդամները)

պահպանում են նոր ստեղծված կազմակերպությանում մասնակցության իրավունքը:

Միացումը մեկ իրավաբանական անձի մեկ այլ իրավաբանական անձի հետ այնպիսի միավորումն է, որի արդյունքում միավորված և գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները համապարփակ իրավաճշորդությունը անցնում են մյուս իրավաբանական անձին, իսկ միացած կազմակերպության մասնակիցները (անդամները) պահպանում են այդ կազմակերպությանում մասնակցության իրավունքը:

Իրավաբանական գրականության մեջ և պրակտիկայում տարբերում են միաձուլումների և միացումների հետևյալ տեսակները՝

- հորիզոնական միաձուլում (միացում). իրականացվում է շուկայի միևնույն ոլորտում ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող ընկերությունների միջև և նպատակ է հետապնդում մեծացնել շուկայում ընկերության ունեցած բաժնեմասը, վերացնել մրցակիցներին, խոշորացնել ընկերությունը:

- ուղղահայաց միաձուլում (միացում). իրականացվում է միևնույն տեխնոլոգիական շղթայում գտնվող ընկերությունների միջև: Այն կարող է լինել վերընթաց՝ միաձուլում մատակարարների հետ և վայրընթաց՝ միաձուլում սպառողի հետ: Նման միաձուլումների նպատակն է հումք արտադրող և վերջնական արտադրանք տվող ընկերությունների միաձուլման միջոցով ծախսերի կրճատումը:

- կոնգլոմերատ (խառը) միաձուլում (միացում). իրականացվում է այնպիսի ընկերությունների միջև, որոնք գործունեություն են իրականացնում ձեռնարկատիրության տարբեր ոլորտներում: Խառը միաձուլումների նպատակը ընկերությունների գործունեության ոլորտների ընդարձակումն ու նոր շուկաների գրավումն է⁸⁵:

⁸⁵ Տե՛ս Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնարկները Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջեր՝ 116-117:

Իրավաբանական անձանց միաձուլման (միացման) իրականացման ընթացակարգը Քաղաքացիական օրենսգրքով սահմանված չէ, նախատեսված են միայն միաձուլման և միացման դեպքում իրավահաջորդության կարգը և միացման դեպքում վերականգնարարական ավարտման պահի առանձնահատկությունները: Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձնայլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերականգնարարվելիս նրանք համարվում են վերականգնարարված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքը ևս մանրակրկիտ կարգավորում չի նախատեսում վերականգնարարական այս ձևերի իրականացման համար և հղում է կատարում Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումներին:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը⁸⁶, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը⁸⁷, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը⁸⁸ նախատեսում են միաձուլման և միացման իրականացման որոշակի ընթացակարգ:

Մասնավորապես, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածների համաձայն ընկերությունների միացման և միաձուլման դեպքում կնքվում է միաձուլման (միացման) պայմանագիր: Նույն օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է միաձուլման (միացման) պայմանագիրը և դրան ներկայացվող պահանջները: Մասնավորապես, միաձուլման (միացման) պայմանագիրը կնքվում է միաձուլմանը (միացմանը) մասնակցող ընկերությունների միջև, ստորագրվում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից և ենթակա է հաստատման՝ նրանց

⁸⁶ Այսուհետ՝ Բանկերի մասին օրենք: Ընդունվել է 30.06.1996, ուժի մեջ է մտել 29.08.1996, ՀՀ ԱԺՏ 1996/12:

⁸⁷ Տե՛ս ՀՀ օրենքը «Ներդրումային ֆոնդերի մասին»՝ ընդունված՝ 22.12.2010, ուժի մեջ է մտել՝ 09.01.2011, ՀՀ ՊՏ 2010.12.30/69(803).1 Հոդ.1634.19:

⁸⁸ Տե՛ս ՀՀ օրենքը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ընդունված՝ 09.04.2007, ուժի մեջ է մտել՝ 30.09.2007, ՀՀ ՊՏ 2007.05.30/27(551) Հոդ.647:

ընդհանուր ժողովների կողմից: Միաձուլման (միացման) պայմանագիրը պետք է բովանդակի՝ մասնակից կողմերի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման տվյալները, միաձուլման (միացման) ժամկետները, կարգը և պայմանները, միաձուլվող (միացող) ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով, միաձուլվող (միացվող) ընկերության ունեների բաժնետոմսերի դիմաց շահույթաբաժիններ ստանալու կարգը և պայմանները, համատեղ ժողովում քվեարկության կարգը, միաձուլմանը (միացմանը) մասնակցող ընկերության ունեների համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը, այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգավորումը այնքան էլ հաջողված չէ:

Այսպես, հիշյալ հոդվածով նախատեսվում է տեղեկությունների այն նվազագույն ծավալը, որը պարտադիր պետք է նախատեսվի միաձուլման պայմանագրով և այդ պարտադիր պայմանների ցանկում, ի թիվս այլոց, նշված է, որ պայմանագիրը պարտադիր պետք է պարունակի այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ (միաձուլման (միացման) պայմանագիրը պետք է բովանդակի՝... «է» այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ): Նշված ձևակերպումը նախառաջ ունի ներքին իրավական հակասություն, քանի որ մի կողմից «այլ տեղեկությունները» պետք է նշվեն պայմանագրում, մյուս կողմից դրանք պետք է նշվեն միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ:

Ներկայացված իրավական հակասությունը լուծելու նպատակով առաջադրվում ենք Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «միաձուլման պայմանագիրը կարող է պարունակել նաև այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ»:»:

Պետք է նշել, որ արտասահմանյան օրենսդրությամբ միաձուլման (միացման) պայմանագրերը և դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները ստացել են այլ իրավական ամրագրում:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ Ֆեդերալ օրենքը, ի տարբերություն Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի, միաձուլման և միացման պայմանագրերը նախատեսում է առանձին հոդվածներով՝ սահմանելով յուրաքանչյուրի բովանդակության ներկայացվող պահանջները: Բացի այդ, հիշյալ Ֆեդերալ օրենքը սահմանում է, որ բացի պարտադիր համարվող տեղեկություններից միաձուլման պայմանագիրը կարող է պարունակել նաև տեղեկություններ ստեղծվող ընկերության գործադիր մարմնի մասին, աուդիտ իրականացնող անձի մասին տեղեկություններ և այլ տեղեկատվություն, որոնք չի հակասում ՌԴ Ֆեդերալ օրենքներին: Միացման պայմանագիրն, իր հերթին, կարող է պարունակել նաև տեղեկություններ կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որոնք չի հակասում ՌԴ Ֆեդերալ օրենքներին⁸⁹:

Մեր կարծիքով, չնայած այն հանգամանքին, որ միաձուլումն ու միացումը համարվում են վերակազմակերպման առանձին ձևեր, այնուամենայնիվ միաձուլման և միացման պայմանագրերի համար միևնույն բովանդակությունը սահմանելը չի կարող անդրադառնալ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպումների իրավական կարգավորման որոշակիության վրա:

Միաձուլման (միացման) պայմանագիրը համախմբող ձևերով վերակազմակերպման գործընթացում ունի կարևոր նշանակություն՝ սահմանում է վերակազմակերպման իրականացման ընթացքը, վերակազմակերպման գործընթացի մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանությունը: Եվ այդ կարևորությունը հաշվի առնելով անհրաժեշտ է անդրադառնալ նաև միաձուլման պայմանագրերի իրավական էությանը և բացահայտել դրա տեղը քաղաքացիական (կորպորատիվ) հարաբերությունների կարգավորման գործում:

⁸⁹ Ст'а Федеральный закон РФ "Об акционерных обществах" от 26.12.1995 N 208-ФЗ, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_8743/:

Միաձուլման (միացման) պայմանագրերի իրավական բնույթն անվերաբերյալ ձևավորվել են մի շարք մոտեցումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- գիտնականների մի խումբ միաձուլման պայմանագիրը համարում է համատեղ գործունեության պայմանագրի տարատեսակ⁹⁰,

- գիտնականների մեկ այլ խումբ նշված պայմանագիրը դասում է իրավաբանական անձանց հիմնադիր պայմանագրերի շարքը⁹¹,

- երրորդ մոտեցման կողմնակիցները միաձուլման պայմանագիրը ընդհանրապես չեն դիտարկում որպես քաղաքացիաիրավական գործարք⁹²,

- կան գիտնականներ, որոնք միաձուլման պայմանագիրը համարում են պայմանագիր, որն ընդհանրապես նախատեսված չէ քաղաքացիական օրենսգրքով⁹³,

- միաձուլման պայմանագիրը համարում են նաև կորպորատիվ պայմանագիր⁹⁴:

Չաշվի առնելով ներկայացված տեսակետների բազմազանությունը՝ անդրադառնանք դրանցի յուրաքանչյուրին և փորձենք գտնել այն տարբերակը, որն առավել ճիշտ է արտացոլում միաձուլման պայմանագրի էությունը:

Ինչպես արդեն նշվեց, հեղինակները մի խումբ միացման պայմանագիրը համարում է համատեղ գործունեության պայմանագրի տարատեսակ: Մասնավորապես, Ա. Ռ. Կորալայկոն գտնում է, որ միացման պայմանագիրը համարվում է համատեղ գործունեության պայմանագրի տարատեսակ, քանի որ դրամասնակիցների նպատակը նոր իրավաբանական անձի ստեղծումն ու նրան իրենց ակտիվների և

⁹⁰ Տե՛ս **Козлова Н.В.** Договор простого товарищества (Комментарий гл. 55 ГК РФ) // Законодательство. 2000. № 1. Էջեր 17-18. **Жданов Д.В.** Реорганизация акционерных обществ в Российской Федерации. Изд. 2-е, перераб. и доп. - М.: «Лекс-Книга», 2002, էջ 51:

⁹¹ Տե՛ս Реорганизация юридических лиц (правовые основы): научно-практическое пособие / **Кафтайлова Е.В., Ручкин О.Ю., Трунцевский Ю.В.** - М.: Юрист, 2010.

⁹² Տե՛ս **Карлин А.А.** Реорганизация акционерного общества: дис. канд. юрид. наук. - М., 2004, էջ 74:

⁹³ **Архипов Б.П.** Реорганизационные договоры о слиянии и поглощении акционерных обществ // Законодательство. 2002. № 10, էջ 53: **Дивер Е.П.** Правовое регулирование реорганизации коммерческих организаций: дис. ... канд. юрид. наук. - М., 2002, էջ 116: **Ломакин Д.В.** Договоры о создании и реорганизации юридических лиц // Законодательство. 2004. №2, էջ 44., **Овечкин А.П.** Создание, реорганизация и ликвидация коммерческой организации: Учебное пособие.-М.: Юридический институт МИИ'Га, 2008, էջ 134, **Тимаев Ф.И.** Защита прав кредиторов по гражданскому законодательству, регулиющему отношения с участием акционерных обществ. - СПб.: Скиф, 2005.

⁹⁴ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխատությունը, էջ 118:

պարտավորությունների փոխանցումն է: Ի ապացուցումն իրենց փաստարկների՝ այս մոտեցմանը հարողները ներկայացնում են քննարկվող երկու պայմանագրերի նմանությունները՝ մասնակիցների նպատակը, միացման և միաձուլման մասնակիցների հարաբերությունների վստահության վրա հիմնված լինելը և այլն⁹⁵:

Մեր կարծիքով միաձուլման (միացման) պայմանագիրը չի կարող համարվել համատեղ գործունեության պայմանագիր հետևյալ հանգամանքների հաշվառմամբ:

Քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

Փաստորեն, արդեն համատեղ գործունեության պայմանագրի իրավական ձևակերպումից պարզ է, որ միացման պայմանագիրը չի կարող համարվել այդպիսին, քանի որ համատեղ գործունեության պայմանագրի արդյունքում տեղի չի ունենում իրավաբանական անձի ստեղծում կամ դադարում, ավելիս համատեղ գործունեության պայմանագրի մասնակիցները պարտավորվում են ծավալել գործարարական գործունեություն առանց իրավաբանական անձ կազմավորելու:

Հաջորդ կարևորագույն առանձնահատկությունն է քննարկվող պայմանագրերի սուբյեկտային կազմն է: Եթե համատեղ գործունեության պայմանագրի կողմ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 2-րդ մասի կարող են լինել ինչպես առևտրային իրավաբանական անձիք, այնպես էլ անհատ գործարարներ և գյուղացիական կոլեկտիվներ, ապա միացման պայմանագրի կողմ կարող են լինել միայն միացող և (կամ) միաձուլվող իրավաբանական անձիք:

Բացի վերը նշվածներից, պետք է նշել նաև, որ համատեղ գործունեության պայմանագրի արդյունքում տեղի չի ունենում

⁹⁵ Տե՛ս **Коровайко А.В.** Реорганизация хозяйственных обществ: дис. канд. юрид. наук. - Ростов-на-Дону, 2000, էջ 100:

իրավահաջորդություն, ինչը վերակազմակերպման գլխավոր նպատակը և վերջնարդյունքն է:

Այսպիսով, միացման պայմանագիրը չի կարող համարվել համատեղ գործունեության պայմանագիր, քանի որ չի համապատասխանում դրա՝ իրավական ամրագրում ստացած բնույթին և բովանդակությանը:

Հաջորդ մոտեցման համաձայն միաձուլման պայմանագիրը համարվում է իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթ: Այսպես, Ի.Յու. Կոզլովան, բնութագրելով իրավաբանական անձի հիմնադրման պայմանագիրը նշում է, որ դրանով հիմնադիրները սահմանում են իրավաբանական անձի հետագա գործունեության կարգը, այդ անձին գույքի փոխանցման, իրավաբանական անձի կառավարման, շահույթի բաշխման կարգը, ինչպես նաև իրավաբանական անձից դուրս գալու կարգը և պայմանները: Այդ հանգամանքների հաշվառմամբ հեղինակը, գտնելով, որ միացման պայմանագիրը ևս իր բնույթով սահմանում է իրավաբանական անձի հետագա ճակատագիրը և այլ պայմաններ, միաձուլման պայմանագիրը դասում է իրավաբանական անձի հիմնադիր պայմանագրերի տեսակների շարքը⁹⁶:

Այս տեսակետը չի կարելի է համարել արդարացի, քանի որ իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և միաձուլման պայմանագիրը էականորեն տարբերվում են միմյանցից: Իրավաբանական անձի հիմնադրման պայմանագիրը կարգավորում է ոչ միայն իրավաբանական անձի ստեղծման ընթացքում ծագող իրավահարաբերություններ, այլ նաև իրավաբանական անձի գործունեության հետ կապված բավականին լայն հարաբերությունների շրջանակ: Մասնավորապես, իրավաբանական անձի հիմնադիրները կնքում են պայմանագիր, որով որոշում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և նրա կառավարմանն իրենց մասնակցության պայմանները: Բացի այդ, տարբեր են քննարկվող պայմանագրերի կարգավորման առարկան և կնքման նպատակը: Միացման պայմանագիրը կնքվում է վերակազմակերպման գործընթաց սկսելու նպատակով

⁹⁶ Տե՛ս **Козлова Н.В.** Учредительный договор: понятие, содержание, сущность и правовая природа (комментарий действующего законодательства) // Законодательство. 2000. № 3, էջ 6:

(նոր իրավաբանական անձի ստեղծումը ավելի շատ պետվոյն պատակ է), իսկ հիմնադրման պայմանագրի նպատակը իրավաբանական անձի հիմնադրումն է: Միացման պայմանագրի առարկան վերակազմակերպման գործընթացի կարգավորումն է, իսկ հիմնադրման պայմանագրի առարկան նոր իրավաբանական անձի ստեղծումը: Այսպիսով, միացման պայմանագիրը նաև հիմնադրման պայմանագիր համարել չի կարելի:

Ուշադրության է արժանի նաև գիտական այն մոտեցումը, որ միացման պայմանագիրը չի կարելի համարել քաղաքացիաիրավական պայմանագիր, որն առաջացնում է իրավական հետևանքներ: Նշված տեսակետն արտահայտել է Ա.Ա. Կարլինը: Վերջինիս կարծիքով միանում է ման պայմանագրերը չեն բավարարում քաղաքացիաիրավական պայմանագրերին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, ըստ գիտնականի, միացման պայմանագիրը պետք է բավարարվի միայն վերակազմակերպման ընթացակարգային հարցերի կարգավորմամբ և չանդրադարձաբանաիրավահարցորդության հարցին, քանի որ դրա համար կա առանձին իրավական-տնտեսական գործիք՝ փախսանցման ակտը: Ցիվիլիստի կարծիքով քանի որ այդ պայմանագիրը չի կարգավորում միանումը կամ միացող իրավաբանական անձանց միջև հարաբերություններ, հետևաբար չի կարող առաջացնել նրանց համար իրավունքներ և պարտավորություններ, որի ուժով չի բավարարում քաղաքացիաիրավական գործարքին ներկայացվող պահանջներին⁹⁷:

Այս տեսակետը չի դիմանում քննադատության, քանի որ միանում է ման պայմանագիրը ոչ այլ ինչ է, քանի քաղաքացիաիրավական գործարք:

Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

Միանում է ման պայմանագրի արդյունքում դադարում են գոյություն ունենալուց իրավաբանական անձիք, միևնույն

⁹⁷ Տե՛ս Карлин А.А. նշված աշխատությունը, էջ 74:

Ժամանակ այդ պայմանագրերն առաջացնում են իրավունքներ և պարտավորություններ այլ անձանց համար, որոնք չեն մասնակցում այդ պայմանագրին (հիմնադիրներ, մասնակիցներ, բաժնետերեր):

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ միաձուլման պայմանագիրը համարվում է քաղաքացիաիրավական գործարքի տարատեսակ, որին հատուկ են հետևյալ առանձնահատկությունները՝

- միացման պայմանագրի առարկան են կազմում հատուկ խումբ հարաբերություններ, որոնք կապված են իրավաբանական անձանց վերակազմակերպման հետ,

- հատուկ սուբյեկտային կազմը. միաձուլման պայմանագրի կողմեր են համարվում միայն կոնկրետ կազմակերպաիրավական ձև ունեցող առևտրային կազմակերպությունները,

- պայմանագրի մասնակիցների շահերի ընդհանրությունը,

- այս պայմանագիրն ուղղված է ինչպես իրավաբանական անձի ստեղծմանը, այնպես էլ հանգեցնում է դրանց գոյության դադարեցմանը:

Քաղաքացիաիրավական պայմանագրերը բազմաթիվ են, դրանց մի մասը սահմանված է քաղաքացիական օրենսգրքով, մի մասը՝ ոչ: Եվ այդ բազմազանության մեջ պետք է գտնել նաև միաձուլման պայմանագրի տեղը:

Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը՝ միաձուլման պայմանագիրը համարվում է կորպորատիվ պայմանագրի տեսակ, քանի որ կարգավորում է կորպորատիվ իրավահարաբերություններ, ուղղված է կորպորատիվ իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն և դադարեցնելուն⁹⁸: Համակարծիք լինելով պրոֆեսոր Ավետիսյանի հետ՝ գտնում ենք, որ միաձուլման (միացման) պայմանագիրը համարվում է քաղաքացիաիրավական պայմանագիր, իսկ մասնավորապես՝ կորպորատիվ պայմանագիր՝ վերը նշված վերլուծությունը հաշվի առնելով:

Կորպորացիաների վրակազմակերպումը իր ազդեցությունն է ունենում ոչ միայն վերակազմակերպվող սուբյեկտների, այլև

⁹⁸ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխատությունը, էջ 119:

շուկայի և դրա այլ մասնակիցների վրա: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք հանդիսանում են շուկայական հարաբերությունների հիմնական մասնակիցների, որոնց վերակազմակերպման արդյունքում շուկայում փոխվում է տնտեսվարող սուբյեկտների ունեցած բաժինը, առաջանում են սուբյեկտներ, որոնք գրավում են շուկայի առավել մեծ բաժինը (գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ), փոխվում է շուկաներում մրցակցության մակարդակը: Տնտեսվարող սուբյեկտները, օգտագործելով վերակազմակերպման իրավական գործիքակազմը, հասնում են այլ տնտեսվարող սուբյեկտների բաժանմանը, շուկայում նրանց մասնաբաժնի նվազեցմանը:

Ուստի բնականոն մրցակցության ապահովման և պաշտպանության համար պետությունը, գործադրելով որոշակի գործիքակազմ, միջամտում է շուկայական հարաբերություններին: Այդ միջամտության իրավական հիմքը սահմանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ⁹⁹ (Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը): Այդ միջամտության սահմանները և նպատակը նախատեսված են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով¹⁰⁰: Մասնավորապես, ՏՄՊ Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՏՄՊ Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Ամենաընդհանուր բնորոշմամբ մրցակցությունը կարելի է բնութագրել որպես ապրանքների արտադրության և առուվաճառքի

⁹⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2005թ. և 2015թ. փոփոխություններով) (ընդունվել է 05.07.1995թ.-ին, ուժի մեջ է 13.07.1995թ.-ից) ՀՀՊՏ 2015.12.21:

¹⁰⁰ Այսուհետ՝ ՏՄՊ Օրենք, ընդունված՝ 06.11.2000թ., ՀՕ-112, ՀՀՊՏ 2000/30 (128) 15.12.00:

լավագույն պայմանների համար շուկայական տնտեսության մասնակիցների միջև ընթացող «հակամարտություն»¹⁰¹: Մրցակցությունը շուկայական տնտեսության տնտեսական օրենքն է: Տեսական գրականության մեջ առկա են նաև մրցակցության այլ բնորոշումներ: Մասնավորապես, Ա. Մարշալը գտնում է, որ մրցակցությունը կայանում է նրանում, որ մեկը մրցակցի մյուսի հետ հատկապես ինչ-որ բանի առուվաճառքի դեպքում¹⁰²: Դ. Ռեյմերն ու Ֆ. Բայերը նշում են, որ մրցակցությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ շուկայում բախվում են մի քանի տնտեսվարողներ՝ հետապնդելով միևնույն նպատակը տնտեսության ոլորտում¹⁰³: Շերշենևիչը նշում է, որ «մրցակցության հասարակական գաղափարը կայանում է նրանում, որ սեփական գոյությունը պահպանելու յուրաքանչյուր տնտեսության ձգտումն ի վերջո հանգեցնում է հասարակության կարիքների լավագույնս բավարարման»¹⁰⁴: Մրցակցությունը բնութագրվում է որպես միմյանցից անկախ գործող երկու կամ ավելի անձանց ջանքեր, որոնք ուղղված են երրորդ անձի հաճախորդներին գրավելուն՝ ապրանքների ձեռք բերման համար առավել նպաստավոր պայմաններ առաջարկելու ճանապարհով¹⁰⁵: Մրցակցությունը լայն իմաստով տարբեր անձանց միջև մրցությունն է որոշակի նպատակի հասնելու համար, ձեռնարկատիրական գործունեության մրցակցությունը տնտեսվարող անձանց միջև մրցությունն է ապրանքների արտադրության և իրացման լավագույն պայմանների համար¹⁰⁶:

Մրցակցության իրավական ձևակերպումը տրված է ՏՄԴ Օրենքում, որի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «տնտեսական մրցակցությունը կամ մրցակցությունը ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեությունն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային

¹⁰¹ Տե՛ս **Кабисов А.Р.** Соотношение конкуренции и монополии в период перехода к рыночной экономике, М., 2001, Дисс., էջ 98:

¹⁰² Տե՛ս **Маршалл А.** Принципы экономической науки. М.: Издат. группа Прогресс, 1993, Т. I, էջ 60:

¹⁰³ Տե՛ս **Ерёмченко В.** Законодательство о пресечении недобросовестной конкуренции капиталистических стран. М., 1994, էջ 4:

¹⁰⁴ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Курс торгового права, Ч.II. СПб, 1908., էջ 109:

¹⁰⁵ Տե՛ս **Chevalier F.** Unfair Competition// Industrial property in Asia and the Pasific, 1988, N 22, էջ 41:

¹⁰⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի** և **Ա. Վաղարշյանի** խմբ., Եր.: «Իրավունք», 2010, էջ 411:

շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունը»:

Տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սկզբունքները սեփականության իրավունքի հետ մեկտեղ քաղաքացիական հասարակության կայուն գոյության նախադրյալ են, մարդու ազատության տնտեսական հիմքը: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և հանդես է գալիս որպես ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորման և զարգացման օբյեկտիվ նախադրյալ: Ուստի, մրցակցության պաշտպանության և երաշխավորման քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով ՏՄՊ Օրենքով սահմանվում է համակենտրոնացման ինստիտուտը, որը նպատակ է հետապնդում պետական կարգավորման ենթարկել տնտեսվարող սուբյեկտների որոշակի գործողություններ, որոնք ունենում կամ կարող են ունենալ մրցակցության վրա որոշակի, երբեմն էլ էական ազդեցություն:

ՏՄՊ Օրենքը չի սահմանում համակենտրոնացման հասկացությունը, այլ միայն թվարկում է դրա դրսևորման ձևերը: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ, օրինակ Ռուսաստանի Դաշնության օրենքը «Մրցակցության պաշտպանության մասին» սահմանում է համակենտրոնացման ինստիտուտի էությունը¹⁰⁷: Մասնավորապես, նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն տնտեսական կոնցենտրացիա է համարվում տնտեսվարող սուբյեկտների գործարքները, այլ գործողությունները կամ վարքագիծը, որոնք ազդեցություն են ունենում մրցակցային միջավայրի վրա¹⁰⁸:

ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝ տնտեսվարող սուբյեկտների միացումը, տնտեսվարող սուբյեկտների

¹⁰⁷ Արտասահմանյան երկրների օրենսդրությունն օգտագործում է այլ ձևակերպումներ (Ռուսաստանում համակենտրոնացումը կոչվում է տնտեսական կոնցենտրացիա, Գերմանիայում ԱՄՆ-ում և ԵՄ-ում միաձուլումներ և կլանումներ՝ mergers and acquisitions), սակայն դա չի փոխում քննարկվող տնտեսաիրավական ինստիտուտի էությունն ու դրա օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը:

¹⁰⁸ Նշվածի մասին ավելի մանրամասն տե՛ս Федеральный закон РФ "О защите конкуренции" от 26.07.2006 N 135-ФЗ, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_61763/:

միաձուլումը, տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքն ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող ակտիվների արժեքի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20 տոկոսը կամ ավելին, տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին, տնտեսվարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա:

Այսպիսով, վերակազմակերպման տեսակներից երկուսը՝ միաձուլում և միացում, մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ ենթարկվել են հատուկ կարգավորման՝ հաշվի առնելով դրանց՝ մրցակցության վրա ունեցած իրական և (կամ) հնարավոր ազդեցությունը:

Պետք է նշել, որ միաձուլման և միացման ձևով համակենտրոնացումները տեղի են ունենում ինչպես օբյեկտիվ տնտեսական գործոնների ազդեցության արդյունքում, այնպես էլ արտաքին ներգործության հետևանքով: Արտասահմանյան գրականության մեջ և մի շարք երկրների օրենսդրությամբ հարկադրական միաձուլումներն ու միացումները անվանվում են կլանումներ:

Ընդհանրապես, միաձուլումներ և կլանումներ տերմինները մեզ են հասել անգլո-ամերիկյան «mergers and acquisitions» հասկացություններից, որոնք, մասնավորապես ԱՄՆ-ում ունեն լիովին այլ նշանակություն, իսկ անգլիական իրավունքում անգամ մի քանի նշակություն միանգամից: Այսպես, «merger» նշանակում է միաձուլում և կլանում, իսկ «acquisition» նշանակում է ձեռքբերում և կլանում: Եվ, քանի որ ամերիկյան կորպորացիաների բաժնետոմսերը անընդհատ գտնվում են արժեթղթերի ազատ շուկաներում, ուստի ամերիկյան իրավունքում միաձուլում, միացում կամ կլանում է

համարվում ոչ միայն կորարացիաների ֆիզիկական միավորումը, այլ նաև բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի ձեռք բերումը, որի արդյունքում մեկ սուբյեկտ կարողանում է վերահսկողություն ձեռք բերել մեկ այլ սուբյեկտի նկատմամբ¹⁰⁹:

Ընդ որում, եթե միաձուլման տակ արևմտյան դոկտրինում հասկանում են տնտեսավարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի արդյունքում ստեղծվում է միասնական տնտեսական միավոր, ապա կլանումներ ասելով հասկանում են մի կազմակերպության կողմից մեկ այլ կազմակերպության նկատմամբ վերահսկողության սահմանում, որը տեղի է ունենում այդ կազմակերպության նկատմամբ սեփականության իրավունքի լրիվ կամ մասնակի ձեռք բերմամբ¹¹⁰: Կազմակերպությունների կլանումը տեղի է ունենում այդ կազմակերպությունների՝ ֆոնդային բորսաներում վաճառվող բոլոր բաժնետոմսերի ձեռքբերմամբ: Ամերիկյան և անգլիական իրավունքում դրա համար կիրառում են «takeover bids» տերմինը, որը մեկնաբանվում է որպես կազմակերպության բաժնետոմսերի հսկիչ փաթեթի կամ քվեարկության իրավունքի ձեռքբերման հայտ¹¹¹:

Այսպիսով, արևմտյան իրավական դոկտրինում միաձուլումները և միացումները ընկալվում են ոչ միայն որպես կազմակերպությունների ֆիզիկական միավորում, այլ նաև մեկ կազմակերպության կողմից մեկ այլ կազմակերպության բաժնետոմսերի ամբողջական կամ էական ձեռքբերում, որի արդյունքում, ըստ էության, կլանող սուբյեկտը կլանվող սուբյեկտի նկատմամբ ձեռք է բերում ուղղակի վերահսկողություն:

Նշված իրավիճակը համադրելով վերակազմակերպման իրավական էության և գիտության մեջ ու օրենսդրական մակարդակով ձևակերպված մոտեցումների հետկարելի է եզրակացնել հետևյալը:

Այն դեպքերում, երբ մեկ տնտեսավարող սուբյեկտը ձեռք է բերում մեկ այլ տնտեսավարող սուբյեկտում հարյուր տոկոս կամ

¹⁰⁹ Տե՛ս **Alexander Roberts, Peter Moles**, Mergers and Acquisitions, Edinburgh Business School, Heriot-Watt University, 2012, էջ 11-15:

¹¹⁰ Տե՛ս **John Usher**, «Plender's Cases & Materials on the Law of European Communities». Third Edition, Butterworths, 1993, էջեր 685, 689:

¹¹¹ Տե՛ս **Diego Valiante, Mirza de Manuel Aramendia**, A Legal and Economic Assessment of European Takeover Regulation, Centre for European Policy Studies, 2012, էջ 15, **Jennifer Payne** Takeovers in English and German Law, Oxford and Portland, Oregon, 2002, էջ 35:

Եսկան մասնակցություն, այդ սուբյեկտը ձեռք է բերում ոչ միայն ուղղակի վերահսկողություն կլանվող սուբյեկտի նկատմամբ, այլ նաև իրական հնարավորություն ազդելու այդ սուբյեկտի որոշումների և մրցունակության վրա: Նշվածի արդյունքում կլանվող սուբյեկտը, շարունակելով իրավաբանորեն գոյություն ունենալ, ըստ էության, կորցնում է ինքնուրույնությունը և տնտեսական գործունեության ազատությունը և ընկնում այլ ընկերության, շահահաձախ՝ մրցակից, «ազդեցության» տակ: Այլ կերպ ասած, կլանման արդյունքում փոխվում են կազմակերպության կառուցվածքը, ներքին կազմակերպական կարգը, տնտեսավարման ուղղությունները, գործարար կապերի շրջանակը և ամենակարևորը, ըստ էության, փոփոխվում են կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները:

Այսինքն, կարող ենք ասել, որ նշված դեպքում գործունենք «փաստացի միացման» հետ, քանի որ չնայած այն հանգամանքին, որ կլանված կազմակերպությունը շարունակում է իրավաբանորեն գոյություն ունենալ, այնուամենայնիվ նրա գույքը, բիզնեսն ամբողջությամբ անցնում է այլ կազմակերպության կառավարման ներքո, որի արդյունքում փաստացի սահմանափակվում է կլանված կազմակերպության տնտեսական գործունեության ազատությունը և վերջինս, ըստ էության, միանում է կլանած կազմակերպությանը:

Նշված իրավիճակում, իհարկե, խոսք չի կարող գնալ դասական իմաստով վերակազմակերպման ինստիտուտի, մասնավորապես՝ միացման կամ միաձուլման մասին, քանի որ բացակայում են դրա ամենաէական հատկանիշները: Նախ, կլանվող սուբյեկտը շարունակում է իրավաբանորեն գոյություն ունենալ և որ ամենակարևորն է՝ տեղի չի ունենում իրավահաջորդություն:

Այսպիսով, վերը նշվածն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ կլանման դեպքում տեղի է ունենում «փաստացի միացում», միաժամանակ այդ գործընթացը չի նույնանում վերակազմակերպման ձև համարվող միացման ինստիտուտի հետ: Այդ է պատճառը նաև, որ ՏՄՊ Օրենքը մեկ իրավաբանական անձի կողմից մեկ այլ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում Եսկան մասնակցություն ձեռքբերելու նկատմամբ սահմանել է որոշակի վերահսկողական

մեխանիզմներ, մասնավորապես, համակենտրոնացման (այդ թվում՝ դրահայ տարարագրման) ինստիտուտի միջոցով:

ՏՄՊ Օրենքով նախատեսվում են միաձուլումների և միացումների (համակենտրոնացում) երեք տեսակ: Այսպես, ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համակենտրոնացումը կայացվում է միևնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համակենտրոնացում), որոշակի փոխկապակցվածություներ ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներ իրացնող ու ձեռք բերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համակենտրոնացում) և տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (խառը համակենտրոնացում):

ՏՄՊ Օրենքի այս կարգավորումից պարզ է դառնում, որ միաձուլումների և միացումների՝ մրցակցության վրա ազդեցությունը հնարավոր է ինչպես միևնույն և փոխկապակցված, այնպես էլ միմյանց հետ տնտեսական որևէ շղթայով չկապված շուկաներում: Վերը նշված դասակարգման հիմքում դրված է «ապրանքային շուկա» տնտեսաիրավական կատեգորիան: ՏՄՊ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկան Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ է, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ: Ապրանքային շուկան քննթագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրասուբյեկտների կազմով և ծավալով:

ՏՄՊ Օրենքի ձևակերպումները թույլ են տալիս ենթադրել, որ մրցակցային օրենսդրության կիրառման, այդ թվում համակենտրոնացման ինստիտուտի ճիշտ իրացման համար կարևոր

նշանակություն ունի «ապրանքային շուկա» հասկացությունը¹¹², ուստի մրցակցային միջավայրի վրա վերակազմակերպումների (միաձուլումներ և միացումներ) ազդեցությունը դիտարկենք ըստ համակերտոնացումների տեսակների՝ ՏՄՊ Օրենքով սահմանված դասակարգման (համապատասխան ապրանքային շուկաներով):

Այսպես, որպես կանոն հորիզոնական համակերտոնացումների ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա ավելի մեծ է, քան համակերտոնացման մյուս տեսակների դեպքում: Միևնույն ապրանքային շուկայում գործող՝ մրցակցող սուբյեկտների միջև իրականացվող միաձուլումների կամ միացումների արդյունքում փոխվում է տվյալ շուկայում սուբյեկտների իրացման կամ ձեռքբերման ծավալը: Ընդ որում, այդ փոփոխությունների արդյունքում կարող են առաջանալ նաև գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ (օրինակ՝ երկու սուբյեկտների միաձուլման դեպքում, որոնք ունեն 25-ական տոկոս իրացման ծավալ, կառաջանա մեկ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտ՝ 50 տոկոս իրացման ընդհանուր ծավալով):

Ուղղահայաց համակերտոնացումների դեպքում որևէ ապրանքային շուկայում գործող սուբյեկտը կարող է ընդարձակել իր տնտեսական գործունեության շրջանակները՝ իրացման շուկայից անցնելով նաև ձեռքբերման շուկա և հակառակը: Մրցակցային միջավայրի վրա ազդեցությունը կդրսևորվի նրանում, որ իրացման շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտը իրեն ձեռքբերման շուկայում գործող սուբյեկտի միացման դեպքում հնարավորություն կունենա գործելու միաժամանակ միմյանց հետ կապված երկու շուկաներում էլ՝ այն շուկայում, որտեղ սուբյեկտը համարվում է իրացնող և այն շուկայում, որի համար այն համարվում էր միայն մատակարար և ուղղակի տնտեսական գործունեություն չէր իրականացնում մինչև վերակազմակերպման իրականացումը:

Խառը համակերտոնացումների դեպքում տնտեսվարող սուբյեկտները փոխում են իրենց տնտեսական գործունեության

¹¹² «Ապրանքային շուկա» հասկացության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Թավադյան ԱԱ** «Հակամրցակցային համաձայնությունների կարգավորումը ՀՀ-ում», մենագրություն, ԵՊՀ.-եր.: Հայրապետի հրատ., 2015, էջեր՝ 47-62:

ուլորտը կամ համալրում այլ ուլորտներով, որոնք տնտեսական որևէ շղթայում կապված չեն նրանց իրականացվելիք գործունեության հետ: Օրինակ, բնական հյուսիսի շուկայում գործող սուբյեկտը կարող է միացման ձևով վերակազմակերպվել շինանյութերի իրացման շուկայում գործող սուբյեկտի հետ: Նման համակենտրոնացումը մրցակցային միջավայրի վրա կազդի միայն այնքանով, որ միացման ձևով վերակազմակերպված սուբյեկտի դադարումից հետո բնական հյուսիսի շուկայում կփոխվի մնացյալ սուբյեկտների իրացման ծավալը: Սակայն, հնարավոր են դեպքեր, երբ միմյանց հետ կապ չունեցող շուկաներում գործող սուբյեկտների միացման կամ միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում որևէ սուբյեկտ ձեռք բերի արտադրական նոր հզորություններ և ընդարձակի իրացման ծավալները: Վերը նշված օրինակում բնական հյուսիսի իրացմամբ զբաղվող սուբյեկտի և շինանյութերի իրացման շուկայում գործող սուբյեկտի միաձուլման արդյունքում ստեղծված և բնական հյուսիսի իրացմամբ զբաղվող սուբյեկտը կարող է փոխանցման ակտին համապատասխան ստանալ մյուս սուբյեկտի ակտիվ համարվող շենքեր և շինություններ, որի արդյունքում կընդարձակի բնական հյուսիսի արտադրությունը և իրացման ծավալները:

Պետք է նշել, որ ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված բանաձևումները վտանգում են քննարկվող դասակարգման գործնական կիրառման արդյունավետությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ համակենտրոնացումները հորիզոնականի, ուղղահայացի և խառը տեսակների դասակարգելիս օրենսդիրն օգտագործում է «ապրանքային շուկայում գործող սուբյեկտ» հասկացությունը: Նման իրավակարգավորման պայմաններում դժվարություններ են առաջանում այն դեպքում, երբ համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտները կամ նրանցից որևէ մեկը ընդհանրապես գործունեություն չի իրականացնում որևէ ապրանքային շուկայում, սակայն որի ակտիվների արժեքը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից սահմանված ակտիվների շեմերին: Մի կողմից առկա է համակենտրոնացման հայտարարագրման հիմք, մյուս կողմից հարց է

առաջանում արդյոք նման պարագայում առկա է համակենտրոնացում, թե՛ ոչ: Միաձուլումները և միացումները համակենտրոնացում որակելիս բոլոր դեպքերում անհրաժեշտ է սահմանել նաև դրա տեսակը, իսկ վերը նկարագրված իրավիճակում հնարավոր չէ հատկորոշել սուբյեկտ(ներ)ի գործունեության ոլորտը:

Նշվածի կապակցությամբ առկա է մեկ այլ խնդիր ևս: Մասնավորապես, երկու տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից ոչ մեկն էլ չի համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, սակայն նրանցից մեկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսվարող սուբյեկտի բաժնետեր, ցանկանում են կնքել միաձուլման պայմանագիր: Նման պայմաններում առաջանում է հետևյալ հարցը. «ապրանքային շուկայում գործող» արտահայտությունը արդյոք ներառում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող օտարերկրյա կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում փայաբաժին ունենալը:

Հանձնաժողովը 2011 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 560-Ն որոշմամբ¹¹³ պաշտոնապես պարզաբանում է տվել առայն, որ ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասում նշված «ապրանքային շուկայում գործող» արտահայտությունը ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող օտարերկրյա կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում փայաբաժին ունենալը: Նշված պաշտոնական պարզաբանումը, սակայն, չի լուծում խնդիրները:

Խնդիրը կայանում է նրանում, որ եթե տնտեսվարող սուբյեկտները որևէ գործունեություն չեն իրականացնում ապրանքային շուկայում, որի արդյունքում հնարավոր չի լինում

¹¹³ Ընդունվել է 23.11.2010թ., ուժի մեջ է մտել 23.11.2010թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2011.12.15/28(411)

որոշել նման սուբյեկտների համակենտրոնացման տեսակը, առաջանում է նաև նման համակենտրոնացումը հայտարարագրելու խնդիր, քանի որ հայտարարագրման համար անհրաժեշտ հասույթի և ակտիվի շեմերը կախված են համակենտրոնացման տեսակից (հորիզոնական, ուղղահայաց, խառը): Նշվածի արդյունքում համակենտրոնացման պահին չգործող տնտեսվարող սուբյեկտները հետագայում կարող են ծավալել ակտիվ տնտեսական գործունեություն՝ ազդելով շուկայում մրցակցության մակարդակի և շուկայի կառուցվածքի վրա: Նման սուբյեկտները կարող են ձեռք բերել գերիշխող դիրք՝ հանգեցնելով տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ուստի, արակտիկայում վերը նշված հնարավոր խնդիրներից խուսափելու համար առաջարկում ենք ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումից հանել «ապրանքային շուկայում գործող» բաղադրատարրը կամ սահմանել դրույթ առայն, որ եթե համակենտրոնացման մասնակիցները գործունեություն չեն իրականացնում որևէ շուկայում, սակայն միացման կամ միաձուլման ձևով վերակազմակերպվում են, ապա նման համակենտրոնացումը պետք է դիտել խառը համակենտրոնացում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակենտրոնացման պահին որևէ գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտների միացումը կամ միաձուլումը ապրանքային շուկայի վրա չի կարող ունենալ այնպիսի ազդեցություն, ինչպիսին ունենում է հորիզոնական համակենտրոնացումը:

Հանձնաժողովի կողմից համակենտրոնացումների՝ մրցակցության վրա հնարավոր ազդեցության գնահատման նպատակով համակենտրոնացման մասնակիցները ներկայացնում են համակենտրոնացման հայտարարագիր: ՏՄՊ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում

գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը) կամ համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք:

Այսպիսով, ՏՄՊ Օրենքն, ըստ էության, առանձնացնում է երկու հիմք՝ քանակական և որակական:

Նման իրավակարգավորումը թույլ է տալիս հանգել այն փաստին, որ եթե համակենտրոնացումների մասնակիցները չեն բավարարում վերը նշված չափանիշներին, ապա նրանց գործարքները, որոնք կարող են վերաբերել միաձուլմանը կամ միացմանը, դուրս են Հանձնաժողովի վերահսկողության շրջանակներից¹¹⁴:

Հայ տարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների հասույթների և ակտիվների չափերը սահմանված են Հանձնաժողովի 2016 թվականի «Հայ տարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայ տարարագրման կարգի և հայ տարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ¹¹⁵:

ՏՄՊ Օրենքով տրված իրավակարգավորումը ենթակա է վերամշակման, քանի որ հայ տարարագրման հիմքում դրված է նախորդ տարվա հասույթի կամ ակտիվների հաշվարկման մեթոդը: Մինչդեռ, պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ համակենտրոնացման մասնակիցներից մեկը կամ բոլորն էլ ստեղծված լինեն համակենտրոնացման գործարքի կայացման տարում, ունենան ակտիվների այնպիսի քանակ կամ հասույթի այնպիսի չափ, որը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից սահմանված չափերին: Նման դեպքում, տնտեսվարող սուբյեկտները ազատ կլինեն կայացնելու համակենտրոնացումը առանց հայ տարարագրի ներկայացնելու, եթե, իհարկե, այդ սուբյեկտներից որևէ մեկը որևէ ապրանքային շուկայում չունի գերիշխող դիրք (այս դեպքում

¹¹⁴ Նման մոտեցումը կարելի է համարել արդարացված, քանի որ օրենսդիրը՝ ելնելով որոշակի չափանիշներից (հաշվի առնելով նաև միջազգային փորձը), սահմանել է այն չափորոշիչները, որոնք կարող են վկայել մրցակցության վրա համակենտրոնացումների հնարավոր կամ փաստացի ազդեցության մասին:

¹¹⁵ Ընդունվել է 16.12.2016թ, ուժի մեջ է մտել 19.01.2017թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2017.01.09/1(570) Հոդ.5:

գործում է հայ տարարագրման երկրորդ հիմքը): Վերահսկողության բացակայության արդյունքում նման սուբյեկտները կարող են կենտրոնացնել բավականին խոշոր կապիտալ՝ հնարավորությունն ստանալով էական ազդեցություն ունենալ շուկայում մրցակցության մակարդակի վրա:

Վերը նշվածը հիմք է տալիս պնդելու, որ անհրաժեշտ է վերանայել հայ տարարագրման շեմերի ժամանակագրական ասպեկտը և հայ տարարագրման համար անհրաժեշտ հասույթի և ակտիվի չափերի շեմերի առկայությունը չկապել համակենտրոնացմանը նախորդող տարվա ժամանակահատվածի հետ: Մեր կարծիքով, այս դեպքում պետք է ելնել հետևյալ չափանիշներից՝ մեկ տարուց պակաս ժամանակահատվածով գործունեությունն իրականացրած և ինքնուրույն դեպքում հիմք ընդունել համակենտրոնացմանը նախորդող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ակտիվի արժեքի կամ ստացած հասույթի չափերը: Նշվածը հնարավորություն կտա վերահսկողությունն սահմանել համակենտրոնացող սուբյեկտների հետագա գործունեության նկատմամբ՝ նվազագույնի հասցնելով տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հնարավորությունը:

Համակենտրոնացման հայ տարարագրման երկրորդ հիմքը վերաբերում է համակենտրոնացման մասնակիցների՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունենալու փաստին: Ինչպես արդեն նշվել է համակենտրոնացումների արդյունքում շուկայում կարող են առաջանալ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ, իսկ նման սուբյեկտների գործունեության նկատմամբ իրականացվում է հատուկ վերահսկողություն:

ՏՄՊ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից: Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները

սահմանելու մասին» թիվ 194-Ն որոշման¹¹⁶ հավելվածի 2-րդ կետը սահմանում է, որ ՏՄՊ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով մենաշնորհ դիրք ունեցող է համարվում այն սուբյեկտը, ով որպես իրացնող (ձեռքբերող), իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի հարյուր տոկոսը: Բացի այդ տնտեսվարող սուբյեկտը մենաշնորհ դիրք ունեցող կարող է համարվել նաև այդ դիրքի առկայության մասին վկայող՝ բացառիկ կամ փաստացի միակ լիցենզիայի հիման վրա՝ առանց ուսումնասիրության իրականացման կամ տեղեկատվության վերլուծության:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առանձնացնում է գերիշխող դիրքի որակական և քանակական չափանիշները: Այսպես, ՏՄՊ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռքբերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողություններից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսվարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկամուտք գործելուն:

Գերիշխող դիրքի որակական չափանիշը շուկայական իշխանությունն է, որի առկայության մասին կարող են վկայել տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական կարողությունը (արտադրական, գույքային, դրամական կամ այլ ռեսուրսների առկայությունը), ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի և այդ ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի բաժնի հարաբերակցությունը, մուտքի խոչընդոտների առկայությունը, շուկայի կայունությունը, տնտեսվարող սուբյեկտի ազդեցությունը տվյալ շուկային փոխկապակցված այլ

¹¹⁶ Ընդունվել է 23.05.2011 թ., ուժի մեջ է մտել 18.06.2011թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2011.06.17/14 (397):

ապրանքային շուկաների և դրանցում գործող տնտեսվարող սուբյեկտների վրա

Գերիշխող դիրքի քանակական չափանիշները կապված են շուկայում սուբյեկտների բաժինների բաշխվածության հետ: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտը կհամարվի գերիշխող դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է շուկայի առնվազն մեկ երրորդը, երկու տնտեսվարող սուբյեկտներ կհամարվեն գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը,

ՏՄՊ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն տնտեսվարող սուբյեկտը ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ: Այս իրավակարգավորումը չի նշանակում, սակայն, որ տնտեսվարող սուբյեկտը չի կարող ունենալ գերիշխող դիրք, քանի դեռ չկա դրավերաբերյալ Հանձնաժողովի որոշումը: Հանձնաժողովի որոշմամբ միայն ամրագրվում է տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունենալու հանգամանքը: Մենաշնորհի կամ գերիշխող դիրքը շուկայում սուբյեկտի օբյեկտիվ կարգավիճակն է և առկա է անկախ դրա՝ իրավական ակտով ամրագրելու հանգամանքից:

Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ մրցակցության սահմանափակման նպատակով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրույթ ունը չարաշահել չի թույլատրվում: Այս իրավակարգավորումը գործել է դեռևս մինչև ՏՄՊ Օրենքի ընդունումը և Հանձնաժողովի ստեղծումը և արգելել է գերիշխող դիրքի չարաշահումը:

Իրավակիրառ և հատկապես դատական պրակտիկան ևս զարգացել է այն ուղով, որ Հանձնաժողովի որոշումը սուբյեկտի՝ գերիշխող դիրք ունեցող համարելու հարցում ունի միայն ամրագրողական, այլ ոչ թե սահմանող բնույթ:

Այսպես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/8123/05/11 գործով 2013 թվականի մայիսի 4-ի որոշմամբ արտահայտել է հետևյալ

իրավական դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տնտեսվարողի գերիշխող դիրք ունենալու կարգավիճակը Յանձնաժողովի որոշմամբ ամրագրելու օրենսդրական պահանջն դեռևս չի ենթադրում, որ տնտեսվարողի տնտեսական ազատությանը բացարձակ էր այդ որոշմանը նախորդող ժամանակաշրջանի համար: Գերիշխող դիրքի չափանիշները սահմանված են օրենքով, իսկ օրենքով սահմանված չափանիշներով գերիշխող դիրք ունենալու հարցը որոշելու կարգը և չափանիշները սահմանելու հարցի լուծումը օրենսդիրը վերապահել է հանձնաժողովին, այսինքն Յանձնաժողովն իր իսկ կողմից սահմանված չափանիշներով որոշում է, թե տնտեսվարողն օրենքի իմաստով ունի գերիշխող դիրք, թե ոչ: Նշված ուսումնասիրությանը ներքին կանոն կատարվում են մինչև տնտեսվարողի գերիշխող դիրք ունենալու կարգավիճակի մասին Յանձնաժողովի որոշման կայացումը, ուսումնասիրությանը ներքին արդյունքներն են հիմք հանդիսանում որոշման կայացման համար, ինչից հետևում է, որ Յանձնաժողովի որոշմամբ տնտեսվարողը գերիշխող դիրք ունեցող է համարվում այն ժամանակահատվածի համար, երբ կարգավիճակն օրենքի իմաստով որակվում է գերիշխող դիրք ունեցող, իսկ տնտեսվարողը սկսած այն ժամանակահատվածից, երբ զբաղեցրել է գերիշխող դիրք՝ մինչև ապրանքային շուկայում իրավիճակի այնպիսի փոփոխությանը, որը բացառում է գերիշխող դիրք ունենալու կարգավիճակը համարվում է գերիշխող դիրք ունեցող: Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Յանձնաժողովի գերիշխող դիրք ունեցող համարելու որոշումն ամրագրում է որոշակի ժամանակահատվածում տնտեսվարողի այնպիսի կարգավիճակ ունենալու հարցը»¹¹⁷:

Յամակենտրոնացման հայտարարագիր չներկայացնելն առաջացնում է կոնկրետ իրավական հետևանքներ. մասնավորապես, ՏՄՊ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը գործողության մեջ դնելը՝ մինչև Յանձնաժողովի կողմից որոշում կայացնելը: Գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը ենթակա

¹¹⁷ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ՏՄՊ Օրենքի 4-րդ հոդված, «անձանց խումբ» հասկացություն:

Ե Լ ու ծ ար մ ան (Լ ու ծ մ ան, դ ադ ար ե գ մ ան)՝ օ Ր Ե ն ս դ ր ու թ յ ամ ք ս ա հ մ ան վ ած կ ար գ ո վ :

Հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ի թ ի վ 191-Ն ո Ր ո շ մ ան հ ամ ա ճ ա յ ն՝ տ ն տ Ե ս վ ար ո ղ ս ու Բ Յ Ե կ տ ն Ե Ր ի մ ի ա գ մ ան ձ ն ո վ ի Ր ակ ան ա գ վ ո ղ հ ամ ա կ Ե ն տ Ր ո ն ա գ ու մ ը հ ամ ար վ ու մ Ե գ ո Ր ծ ո ղ ու թ յ ան մ Ե ջ դ Ր վ ած մ ի ա գ ած տ ն տ Ե ս վ ար ո ղ ս ու Բ Յ Ե կ տ (ն Ե Ր) ի գ ո Ր ծ ու ն Ե ու թ յ ան դ ադ ար մ ան վ Ե Ր ա Բ Ե Ր յ ալ պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան կ ամ հ ա շ վ առ մ ան պ ա հ ի ց : Տ ն տ Ե ս վ ար ո ղ ս ու Բ Յ Ե կ տ ն Ե Ր ի մ ի ա ձ ու Լ մ ան ձ ն ո վ ի Ր ակ ան ա գ վ ո ղ հ ամ ա կ Ե ն տ Ր ո ն ա գ ու մ ը հ ամ ար վ ու մ Ե գ ո Ր ծ ո ղ ու թ յ ան մ Ե ջ դ Ր վ ած մ ի ա ձ ու Լ մ ան ար դ յ ու ն ք ու մ առ ա ջ ա գ ած տ ն տ Ե ս վ ար ո ղ ս ու Բ Յ Ե կ տ ի պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան կ ամ հ ա շ վ առ մ ան պ ա հ ի ց :

Մ ի ա ձ ու Լ մ ան և մ ի ա գ մ ան դ Ե պ ք ու մ ար գ Ե Լ վ ած, ս ա կ ա յ ն գ ո Ր ծ ո ղ ու թ յ ան մ Ե ջ դ Ր վ ած հ ամ ա կ Ե ն տ Ր ո ն ա գ մ ան Լ ու ծ ու մ ը կ ամ դ ադ ար ու մ ը տ Ե դ ի Ե ու ն Ե ն ու մ տ ար Բ Ե Ր Ե դ ան ա կ ն Ե Ր ո վ : Մ ա ս ն ա վ ո Ր ա պ Ե ս, մ ի ա ձ ու Լ մ ան դ Ե պ ք ու մ պ Ե տ ք Ե կ ի Ր առ վ ի վ Ե Ր ա կ ա գ մ ա կ Ե Ր պ մ ան տ Ե ս ա կ ն Ե Ր ի ց՝ Բ ա ժ ա ն մ ան գ ո Ր ծ ի ք ա կ ա գ մ ը, ի ս կ մ ի ա գ մ ան Լ ու ծ ար մ ան հ ամ ար՝ առ ան ձ ն ա գ մ ան կ առ ու ց ա կ ար գ ը : Ա յ ս ի ն ք ն, ը ս տ Ե ու թ յ ան, պ Ե տ ք Ե վ Ե Ր ա կ ան գ ն վ ի ա յ ն վ ի ճ ա կ ը, ո Ր ը Ե դ Ե Լ Ե մ ի ն չ և հ ամ ա կ Ե ն տ Ր ո ն ա գ մ ան գ ո Ր ծ ո ղ ու թ յ ան մ Ե ջ դ ն Ե Լ ը :

Պ Ե տ ք Ե ն շ Ե Լ, ո Ր «Ի Ր ա վ ա Բ ան ա կ ան ան ձ ան ց պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան, ի Ր ա վ ա Բ ան ա կ ան ան ձ ան ց առ ան ձ ն ա գ վ ած ս տ Ր ար ա Ժ ա ն ու մ ն Ե Ր ի, հ ի մ ն ար կ ն Ե Ր ի և ան հ ա տ ձ Ե ճ ն ար կ ա տ Ե Ր Ե Ր ի պ Ե տ ա կ ան հ ա շ վ առ մ ան մ ա ս ի ն» Հ ա յ ա ս տ ան ի Հ ան Ր ա պ Ե տ ու թ յ ան օ Ր Ե ն ք ի¹¹⁸ 44-ր դ հ ո ղ վ ած ը ս ա հ մ ան ու մ Ե, ո Ր մ ի ա գ մ ան կ ամ մ ի ա ձ ու Լ մ ան պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան դ ի մ ու մ ի ն կ ի ց ն Ե Ր կ ա յ ա գ վ ու մ Ե ն ա ն ի Ր ա վ ա Բ ան ա կ ան ան ձ ի գ ո Ր ծ ա դ ի Ր մ ար մ ն ի դ Ե կ ա վ ար ի գ Ր ա վ ո Ր հ ա վ ա ս տ ու մ ն ա յ ն մ ա ս ի ն, ո Ր տ վ յ ալ մ ի ա գ ու մ ը կ ամ մ ի ա ձ ու Լ ու մ ը չ ի հ ա կ ա ս ու մ Տ Մ Պ Օ Ր Ե ն ք ի ն, ի ս կ ն ու յ ն օ Ր Ե ն ք ի 14-ր դ հ ո ղ վ ած ն, ար դ Ե ն, ն շ ու մ Ե, ո Ր Ե թ Ե պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան հ ամ ար դ ի մ ո ղ տ ն տ Ե ս վ ար ո ղ ս ու Բ Յ Ե կ տ ն Ե Ր ը մ ի ն չ և պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան հ ամ ար դ ի մ Ե Լ ը Տ Մ Պ Օ Ր Ե ն ք ո վ ն ա ի ս ա տ Ե ս վ ած հ ի մ ք Ե Ր ի առ կ ա յ ու թ յ ան դ Ե պ ք ու մ պ Ե տ ք Ե դ ի մ Ե ն Հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ՝

¹¹⁸ Տ Ե՛ս Հ Հ օ Ր Ե ն ք ը «Ի Ր ա վ ա Բ ան ա կ ան ան ձ ան ց պ Ե տ ա կ ան գ Ր ան ց մ ան, ի Ր ա վ ա Բ ան ա կ ան ան ձ ան ց առ ան ձ ն ա գ վ ած ս տ Ր ար ա Ժ ա ն ու մ ն Ե Ր ի, հ ի մ ն ար կ ն Ե Ր ի և ան հ ա տ ձ Ե ճ ն ար կ ա տ Ե Ր Ե Ր ի պ Ե տ ա կ ան հ ա շ վ առ մ ան մ ա ս ի ն», Հ Հ Պ Տ 2001.05.18/14(146) Հ ո դ .331, 03.04.2001թ.:

Ներակայացնելով համակենտրոնացման հայտարարագիրը: Նշված իրավակարգավորումները, անգամ համակենտրոնացման ինստիտուտի մասին անտեղյակ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն են տալիս խուսափել իրենց գործարքի հնարավոր բացասական հետևանքներից կամ նախապես կանխել դրանք:

Միաժամանակ, Հանձնաժողովի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միացման կամ միաձուլման ձևով համակենտրոնացումներն այդքան էլ շատ չեն կամ չեն համապատասխանում համակենտրոնացման հայտարարագրման չափանիշներին, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները առանց Հանձնաժողովի դիմելու կարողանում են իրականացնել միացման գործընթացները: Իսկ հայտարարագրման ենթակա միացման կամ միաձուլման ձևով համակենտրոնացումներն էլ արգելելու կամ պայմանով թույլատրելու դեպքեր Հանձնաժողովի պրակտիկայում չեն եղել¹¹⁹: Հանձնաժողովը թույլատրել է հայտարարագրման ենթակա միացման կամ միաձուլման ձևով տեղի ունեցող համակենտրոնացումները հիմնականում մրցակցությանն էապես չխոչընդոտելու կամ տնտեսվարող սուբյեկտների մրցունակությանը նպաստելու հիմքերով¹²⁰:

ՏՄՊ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլոց, տնտեսվարող սուբյեկտ է համարվում նաև անձանց խումբ: Օրենքով նախատեսված համակենտրոնացման դեպքում տնտեսվարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

Այսպիսով, ՏՄՊ Օրենքի իմաստով անձանց խումբը համարվում է մեկ տնտեսվարող սուբյեկտ: ՏՄՊ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձանց խումբ է համարվում իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց այնպիսի խումբը, որոնք գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, և (կամ) որոնց նկատմամբ բավարարվում է որոշակի պայմաններ (օրինակ՝ կազմակերպությունը

¹¹⁹ Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների շարքում էական կշիռ ունեն ակտիվի կամ փայտաթանի ձեռքբերման միջոցով տեղի ունեցող համակենտրոնացումները:

¹²⁰ Տե՛ս օրինակ Հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 8-ի «Արմմեդայրոմ» փակ բաժնետիրական «Աստրա-Մեդ» սահմանափակ պատասխանատվությունը ընկերությունների համակենտրոնացման մասին» թիվ 41-Ա և 2016 թվականի մայիսի 2-ի «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական և «Բտաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համակենտրոնացման մասին» թիվ 175-Ա որոշումները:

և ֆիզիկական կամ իրավաբանական անձը կհամարվեն անձանց խումբ, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությանը նույնի դեր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին): Ըստ էության անձանց խումբը երկու և ավելի տնտեսվարող սուբյեկտների համախումբ է, որը ՏՄՊ Օրենքի իմաստով համարվում է մեկ տնտեսվարող սուբյեկտ:

ՏՄՊ Օրենքի իրավակարգավորումների համառոտում համակենտրոնացումների դեպքում եթե որպես մեկ սուբյեկտ դիտարկվի անձանց խումբը, ապա կարող է արդյոք այդ խումբը ընկերությանը ներքին մեկ տնտեսվարող սուբյեկտ դիտարկվել թե այլ սուբյեկտի հետ միաձուլվելիս, թե անձանց խումբ կազմող տնտեսվարող սուբյեկտների միջև միաձուլումներ կամ միացումներ իրականացվելիս: Հանձնաժողովը 2009 թվականի թիվ 91-Ն որոշմամբ¹²¹ պաշտոնապես պարզաբանել է, որ ՏՄՊ Օրենքի իմաստով անձանց խմբի մեջ մտնող սուբյեկտների միջև կատարվող ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածով թվարկված գործողությանը և (կամ) գործարքները համակենտրոնացում չեն համարվում: Փաստորեն, Հանձնաժողովը վերը նշված հարցերը, որոնք պահանջում են հստակ օրենսդրական լուծումներ, լուծել է պաշտոնական պարզաբանման միջոցով, որպիսի մոտեցումը չի կարելի համարել իրավական և արդարացի¹²²:

ՏՄՊ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց խումբը ՏՄՊ Օրենքի իմաստով անձանց խումբ է համարվում Հանձնաժողովի որոշմամբ: ՏՄՊ Օրենքով նախատեսված չափանիշներին բավարարելը դեռևս բավարար չեն տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու համար և անհրաժեշտ է

¹²¹ Ընդունվել է 11.12.2009թ. ուժի մեջ է մտել 11.12.2009թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2009.12.30/34(352)
¹²² Հանձնաժողովը, ընդունելով նման որոշում, հակասել է պաշտոնական պարզաբանման իրավական նշանակությանը և խախտել է պաշտոնական պարզաբանմանը ներկայացվող պահանջները՝ ըստ էության ստեղծելով իրավունքի նորմ:

Հանձնաժողովի որոշումը: Այսինքն, եթե օրինակ միաձուլման գործարքի կնքման պահին գործարքի կողմերը ՏՄՊ Օրենքի իմաստով համարվել են անձանց խումբ, սակայն չկա այդ մասին Հանձնաժողովի որոշում, ապա այդ սուբյեկտների գործարքը պետք է դիտարկել համակենտրոնացում: Մեր կարծիքով, այս դեպքում պետք է կիրառել միասնական մոտեցում և առաջնորդվել այն նույն տրամաբանությամբ, ինչ որ գերիշխող դիրք ունեցող համարելու դեպքում, երբ Հանձնաժողովի որոշումն ունի բացառապես ամրագրողական և ոչ թե ստեղծող բնույթ, որի միջոցով կապահովվի նաև իրավական որոշակիության, իրավական ակտի կանխատեսելիության և իրավական անվտանգության սկզբունքների անխաթար գործողությունը:

§ 2. Բաժանումն ու առանձնացումը որպես վերակազմակերպման ապփոշորացնող ձևեր

Բաժանումն ու առանձնացումը հանդես են գալիս որպես վերակազմակերպման ապփոշորացնող ձևեր, քանի որ դրանց միջոցով մեկ իրավաբանական անձի գույքային բազայի վրա ձևավորվում են մեկ կամ մի քանի այլ իրավաբանական անձիք: Եվ հենց այս հատկանիշով են վերակազմակերպման նշված երկու ձևերը տարբերվում միաձուլումից և միացումից, որոնք ուղղված են իրավաբանական անձանց խոշորացմանը, կապիտալի և տարաբնույթ գործունեությունների կենտրոնացմանը:

Ի տարբերություն միացման և միաձուլման, որոնք նպատակ են հետապնդում ավելացնելու կազմակերպության ակտիվները, ուղղված են ամրապնդելու դրատեղը կոնկրետ գործունեության ոլորտում, բաժանման և առանձնացման դեպքում կազմակերպությունները լուծում են տրամագծորեն հակառակ խնդիրներ:

Պրակտիկայում, երբ կազմակերպությունները տնտեսական գործունեություն են իրականացնում միաժամանակ գործարարության տարբեր ոլորտներում, դժվարանում է նման գործունեության համակարգումը, որի արդյունքում կազմակերպություններն ընտրում են բաժանման կամ առանձնացման

ձևով վերակազմակերպման եղանակները կազմակերպության ներքին արդյունավետ կառավարման և բիզնեսի զարգացման նպատակով:

Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման կառուցակարգերը կիրառվում են ոչ միայն ելնելով կազմակերպության տնտեսական շահերից, այլ նաև այն դեպքերում, երբ կազմակերպության մասնակիցների միջև ծագում են որոշակի տարածայնության ներքին բիզնեսավարման կապակցությամբ: Բացի այդ, օրենքով նախատեսված որոշակի դեպքերում բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ նաև հարկադիր կարգով՝ դատարանի որոշմամբ: Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով իրավաբանական անձի վերակազմակերպումն իրականացվում է դատարանի վճռով:

Բաժանումն ու առանձնացումը հիմնականում ուղղված են մեկ իրավաբանական անձի գույքային բազայի հիման վրա երկու կամ ավելի իրավաբանական անձանց ստեղծումը: Այդ կապակցությամբ պրոֆեսոր Դուլինսկայան նշում է, որ նշված ձևերով վերակազմակերպումը հանգեցնում է գույքային բազայի և շուկայում մասնաբաժնի նվազեցմանը և սուբյեկտների ավելացմանը¹²³:

Բաժանման և վերակազմակերպման հասկացությունները տրված են Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքում: Մասնավորապես, նշված օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության բաժանում է համարվում Ընկերության դադարումը՝ նրա բոլոր իրավունքների և պարտականությունների՝ նոր ստեղծվող ընկերություններին փոխանցմամբ:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության առանձնացում է համարվում նոր ընկերության (ընկերությունների) ստեղծումը՝ նրան (նրանց) վերակազմակերպվող Ընկերության իրավունքների և

¹²³ Տե՛ս **Долинская В.В.**, Реорганизация юридических лиц // Законы России: опыт, анализ, практика. 2006, № 8, էջ՝ 58:

պարտականությունների մի մասի փոխանցմամբ՝ առանց վերականգնարարական ընկերության դադարման:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը կարգավորում է բաժնետիրական ընկերությունների իրավական կարգավիճակից բխող իրավահարաբերություններ և բաժանման ու առանձնացման հասկացությունները հիմնականում վերաբերելի են բաժնետիրական ընկերություններին և չեն կարող նույնությամբ կիրառվել այլ կազմակերպարարական ձև ունեցող կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց համար: Ուստի, բաժանման և առանձնացման ընդհանուր և կորպորատիվ տիպի բոլոր իրավաբանական անձանց համար կիրառելի հասկացություններ բանաձևելու համար անհրաժեշտ է վերհանել վերականգնարարական քննարկվող ձևերին բնորոշ հատկանիշները:

Այսպես, բաժանմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- ստեղծվում են մի քանի ընկերություններ,
- նոր ընկերություններին են փոխանցվում վերականգնարարական ընկերության բոլոր իրավունքներն ու պարտականությունները,

• վերականգնարարական արդյունքում վերականգնարարական ընկերությունները դադարում են գոյություն ունենալ ու ց:

Առանձնացմանը բնորոշ են հետևյալ բնութագրական հատկանիշները՝

- ստեղծվում են մեկ կամ ավելի ընկերություններ,
- նոր ընկերությանն են փոխանցվում վերականգնարարական ընկերության իրավունքների և պարտականությունների մի մասը,
- վերականգնարարական ընկերությունը շարունակում է իր գոյությունը:

Նշված առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալի վերհանել նաև վերականգնարարական քննարկվող ձևերի տարբերակիչ հատկանիշները: Այսպես՝

- առանձնացման դեպքում կարող են ստեղծվել մեկ կամ ավելի իրավաբանական անձիք, իսկ բաժանման դեպքում երկու կամ ավելի իրավաբանական անձիք,

• առանձնացման դեպքում նոր ստեղծվող ընկերությանը անցնում են վերակազմակերպվող ընկերության իրավունքների և պարտականությունների մի մասը, իսկ բաժանման դեպքում՝ բոլոր իրավունքներն ու պարտականությունները,

• բաժանման դեպքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալ ու ց, իսկ՝ առանձնացման դեպքում՝ շարունակում է իր գոյությունը¹²⁴:

Ընդհանրացնելով բաժանմանը և առանձնացմանը բնորոշ առանձնահատկությունները՝ կարող ենք ձևակերպել դրանցից յուրաքանչյուրի հասկացությունները:

Բաժանումը մեկ իրավաբանական անձի դադարման արդյունքում երկու կամ ավելի իրավաբանական անձանց ստեղծումն է, որի արդյունքում դադարած իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են բաժանման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց, դադարած իրավաբանական անձի մասնակիցները (անդամները պահպանում են նոր ստեղծված կազմակերպության ու նույն մասնակցության իրավունքը:

Առանձնացումը վերակազմակերպման միջոցով նոր իրավաբանական անձի ստեղծումն է, որին անցնում է վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքների և պարտականությունների մի մասը՝ առանց վերակազմակերպված իրավաբանական անձի դադարման, իսկ վերակազմակերպված իրավաբանական անձի մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպության ու նույն մասնակցության իրավունքը:

Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպումը, ինչպես վերակազմակերպման բոլոր ձևերը իրականացվում են իրավաբանական անձի բարձրագույն մարմնի՝ ժողովի որոշմամբ:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 68-րդ հոդվածի համաձայն վերակազմակերպման վերաբերյալ որոշումն

¹²⁴ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ատենախոսությունն դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2014, էջեր՝ 109-110:

ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերությունը կարող է կամավոր վերակազմակերպվել ընդհանուր ժողովի որոշմամբ:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերակազմակերպման վերաբերյալ որոշումներն ընդունվում են ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ, եթե ընկերության կանոնադրությամբ տվյալ որոշման ընդունման համար նախատեսված չէ ձայների ավելի մեծ թվի անհրաժեշտություն:

Մեր կողմից ուսումնասիրվել են www.e-register.am էլեկտրոնային ռեգիստրի պաշտոնական կայքում առկամի շարք ընկերությունների կանոնադրություններ, որոնք հիմնականում վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունման համար նախատեսում են օրենքով սահմանված շեմը:

Պետք է նշել, որ 1964թ. Քաղաքացիական օրենսգիրքը առանձնացումը որպես վերակազմակերպման առանձին ձև չէր նախատեսում և ըստ էության դիտարկում էր բաժանման համատեքստում՝ սահմանելով, որ բաժանման դեպքում գույքը (իրավունքներն ու պարտականությունները) անցնում է նոր առաջացած իրավաբանական անձանց:

Ինչպես արդեն նշվեց բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպումը կարող է իրականացվել նաև հարկադիր կարգով՝ դատարանի վճռի հիման վրա: Քաղ. օր.-ի արդեն իսկ մեջբերված 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը՝

- հարկադիր վերակազմակերպումը կարող է իրականացվել միայն բաժանման կամ առանձնացման ձևով,
- այդ վերակազմակերպումը հնարավոր է միայն դատարանի վճռի հիման վրա,

• Նման վերակազմակերպման համար անհրաժեշտ են օրենքով սահմանված որոշակի հանգամանքներ:

Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպումը, ինչպես վերակազմակերպման բոլոր ձևերը իրականացվում են իրավաբանական անձի բարձրագույն մարմնի՝ ժողովի որոշմամբ: Միաժամանակ, հարկադիր վերակազմակերպման դեպքում նման «որոշում»¹²⁵ ընդունում է դատարանը: Ընդ որում, վերակազմակերպման մասին վճիռ կայացնելուց հետո դատարանը նշանակում է իրավաբանական անձի արտաքին կառավարիչ և նրան հանձնարարում է իրականացնել իրավաբանական անձի վերակազմակերպում: Նշանակման պահից իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորություններն անցնում են արտաքին կառավարչին: Արտաքին կառավարիչն իրավաբանական անձի անունից հանդես է գալիս դատարանում, կազմում է բաժանիչ հաշվեկշիռ և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձանց կանոնադրությունների հետ միասին ներկայացնում է դատարան: Դատարանի կողմից այդ փաստաթղթերը հաստատելը հիմք է նոր ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման համար (Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդված, կետ 2):

Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել բաժանման և առանձնացման, այդ թվում՝ հարկադիր վերակազմակերպման կառուցակարգերը: Այսպես, Բանկերի մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկը կարող է վերակազմակերպվել բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և բանկի վերակազմավորման միջոցով: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարիչը կարող է

¹²⁵ Հարկադիր վերակազմակերպման դեպքում որպես վերակազմակերպման գործընթացի սկիզբ հանդիսանում է դատարանի վճիռը:

վերակազմակերպվել բացառապես մեկ այլ կառավարչի միանալու կամ վերակազմավորման միջոցով:

Այսպիսով, իրավաբանական անձանց որոշ տեսակներ Չայաստանի Չանրապետության օրենսդրության համաձայն չեն կարող հարկադիր կարգով վերակազմակերպվել հետևյալ պատճառներից ելնելով`

- Քաղաքացիական օրենսգրքի համաձայն հարկադիր վերակազմակերպումը հնարավոր է միայն բաժանման և առանձնացման ձևով,

- բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և միջարքայլ կազմակերպությունների համար օրենսդրությունը չի նախատեսում բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման հնարավորություն

- օրենսդրությունը չի նախատեսում նաև հարկադիր վերակազմակերպման այլ ձևեր` միացում, միաձուլում, վերակազմավորում:

Ինչպես արդեն նշվեց, Քաղաքացիական օրենսգրքի համաձայն հարկադիր վերակազմակերպումը հնարավոր է միայն դատարանի վճռի հիման վրա, այսինքն որևէ այլ մարմին իրավասու չէ կայացնելու իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ որոշում կամ անգամ նման որոշման կայացման դեպքում, այն չի կարող կատարվել առանց դատարանի միջամտության: Միաժամանակ, Քաղաքացիական օրենսգրքը սահմանում է, որ հարկադիր վերակազմակերպումը կարող է իրականացվել միայն օրենքով նախատեսված որոշակի դեպքերում:

Չայաստանի Չանրապետության օրենսդրությամբ նախատեսված են դեպքերը, երբ իրավաբանական անձը ենթակա է վերակազմակերպման բաժանման կամ առանձնացման ձևով իր կամքին հակառակ, որը պայմանավորված է տվյալ իրավաբանական անձի կողմից իրավախախտում թույլ տալու կամ միացման և միաձուլման ձևով օրենքին հակասող վերակազմակերպում իրականացնելու հետ:

Այսպես, ՏՄՊ Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն` Չանձնաժողովն իրավասու է ընդունել որոշումներ` գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաշահող տնտեսվարող

սուբյեկտների ապախոչորացման (բաժանման, առանձնացման, փայաբաժնի կամ միջոցների օտարման) վերաբերյալ :

Նույն օրենքի 19.1¹-ին հոդվածի համաձայն՝ ապախոչորացման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը ենթակա է կատարման տնտեսվարող սուբյեկտների կողմից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում:

Միաժամանակ, ՏՄՊ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝

- 1) տնտեսվարող սուբյեկտների միացումը.
- 2) տնտեսվարող սուբյեկտների միաձուլումը:

ՏՄՊ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը ենթակա է լուծարման (լուծման, դադարեցման)՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերը նշված իրավական ձևակերպումից կարելի է կատարել եզրակացություն այն մասին, որ միացման կամ միաձուլման ձևով իրականացված համակենտրոնացումը կարող է լուծվել համապատասխանաբար առանձնացման կամ բաժանման գործընթացների իրականացնելու միջոցով: Ստացվում է, որ Հանձնաժողովը կարող է պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին իրականացնելու վերակազմակերպման գործընթացներ: Ընդ որում, պետք է նշել, որ քանի որ ՏՄՊ Օրենքը չի նախատեսում վերը նշված դեպքերում հարկադիր վերակազմակերպման իրականացման կարգ, կարելի է եզրակացնել, որ վերակազմակերպման գործընթացը պետք է սկսվի համապատասխան կազմակերպության ընդհանուր ժողովի որոշման կայացումից:

Փաստորեն, ՏՄՊ Օրենքը նախատեսում է հարկադիր վերակազմակերպման իրականացման հնարավորություն: Եվ հաշվի առնելով ՏՄՊ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ Հանձնաժողովի որոշումը տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից ենթակա է կատարման՝ որոշման մեջ նշված ժամկետում, ստացվում է, որ տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են սկսել

վերակազմակերպման գործընթաց Յանձնաժողովի որոշման հիման վրա:

Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտը Յանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում չի սկսում վերակազմակերպման գործընթաց, Յանձնաժողովն իրավասու է իր որոշման կատարման պահանջով դիմել դատարան: Այսինքն, արդյունքում Յանձնաժողովի որոշմամբ իրավաբանական անձի վերակազմակերպումը իրականացվում է դատարանական կարգով: Դա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ ըստ էության տնտեսվարող սուբյեկտները կարող են կամավոր կերպով չկատարել Յանձնաժողովի որոշումը, որի միակ բացասական հետևանքը կլինի պատասխանատվությունը տուգանքի տեսքով (ՏՄՊ Օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մաս):

Այսպիսով, ՏՄՊ Օրենքի նշված կարգավորումները թույլ են տալիս կատարել ու միշտ քի հարցադրումներ՝

1. արդյոք ՏՄՊ Օրենքով սահմանված հիմքերով Յանձնաժողովի կողմից ընդունված որոշման հիման վրա կազմակերպության կողմից իրականացվող վերակազմակերպումը կարելի է համարել հարկադիր վերակազմակերպում, թե ՏՄՊ Օրենքով նախատեսված կարգավորումները հենց պետք է համարել օրենքով նախատեսված այն հիմքերը, երբ իրավաբանական անձանց բաժանումն ու առանձնացումն իրականացվում է դատարանի վճռի հիման վրա,

2. եթե ՏՄՊ Օրենքը նախատեսում է հարկադիր վերակազմակերպման հիմքերը, ապա ովքեր կարող են դիմել դատարան իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման պահանջով:

ՏՄՊ Օրենքը, սահմանելով Յանձնաժողովի իրավասությունը ընդունելու տնտեսվարող սուբյեկտի ապախոշորացման վերաբերյալ որոշում, միաժամանակ չի նախատեսում նման վերակազմակերպման իրականացման հատուկ ընթացակարգ, ինչը ենթադրում է, որ Յանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան տնտեսվարող սուբյեկտը պետք է սկսի վերակազմակերպման գործընթաց այնպես, ինչպես կամավոր վերակազմակերպման դեպքում (ընդհանուր ժողովի գումարում, բաժնետերերի և պարտատերերի ծանուցում և այլն):

Ընդ որում, այդ գործընթացի ժամանակ, կազմակերպության մասնակիցները կամ բաժնետերերը պարտավորված չեն նախ մասնակցել ընդհանուր ժողովի նիստերին, ապա նաև քվեարկել որևէ ձևով, ինչը նշանակում է, որ Հանձնաժողովի վարչական ակտի հիման վրա վերակազմակերպումը կարող է ընդհանրապես տեղի չունենալ, այդ թվում՝ անկախ կազմակերպության կամքից, օրինակ՝ բաժնետերերի կողմից ժողովին չմասնակցելու հետևանքով:

Ինչպես արդեն նշվեց, ՏՄՊ Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն իր որոշման չկատարման դեպքում իրավասու է հայցով դիմել դատարան: Նշված ձևակերպումը նշանակում է, որ Հանձնաժողովը կարող է դատական կարգով պարտավորեցնել կազմակերպությանը կատարել ապախոշորացման վերաբերյալ որոշումը: Ընդ որում, այս դեպքում հարց է առաջանում, եթե դատարանը վճռի, որ ապախոշորացման վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման, ապա արդյոք դատարանն իրավասու կլինի սահմանելու այդ որոշման կատարման ընթացակարգ, արդյոք դատարանը կարող է կիրառել Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված հարկադիր վերակազմակերպման ընթացակարգը:

Նշված հարցին պատասխանելու համար նախ պետք է պարզել, թե Հանձնաժողովը ինչ հայցով կարող է դիմել դատարան: Եթե կազմակերպությունը չի կատարում Հանձնաժողովի որոշումը, ապա Հանձնաժողովը կարող է դիմել դատարան որոշումը կատարելուն պարտավորեցնելու պահանջով, որի արդյունքում դատարանը կարող է վճռել, որ ապախոշորացման վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման: Այսինքն, դատարանը կարող է միայն հաստատել Հանձնաժողովի որոշման իրավաչափությունը և պարտավորեցնել կազմակերպությանը կատարելու այն: Այս դեպքում էլ, եթե կազմակերպությունը չկատարի դատարանի վճիռը, ապա որևէ հետևանք չի առաջանա, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը¹²⁶ չի նախատեսում որևէ ընթացակարգ, որով կազմակերպությունը կպարտավորվի հարկադիր կարգով վերակազմակերպվել:

¹²⁶ Տե՛ս ՀՀ օրենքը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ընդունված 05.05.1998. ու ժի մեջ է մտել՝ 01.01.1999, ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

Անդրադառնանք նշված խնդրի վերաբերյալ արտասահմանյան օրենսդրական կարգավորումներին:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն հարկադիր վերակազմակերպումը կարող է իրականացվել ինչպես դատական կարգով, այնպես էլ լիազոր պետական մարմնի որոշման հիման վրա: Միևնույն ժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետներում չի իրականացնում վերակազմակերպումը, ապա այն իրականացվում է համապատասխան մարմնի հայցի հիման վրա՝ դատական կարգով:

«Մրցակցության պաշտպանության մասին» ՌԴ ֆեդերալ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց հակամենաշնորհային մարմնի թույլ տվության ստեղծված առևտրային կազմակերպությունը, կամ առանց նման թույլ տվության միացած կամ միանված կազմակերպությունները ենթակա են բաժանման կամ առանձնացման դատական կարգով հակամենաշնորհային մարմնի հայցի հիման վրա¹²⁷:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպության կողմից առևտրային գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի պարբերաբար չարաշահման դեպքում հակամենաշնորհային մարմինն իրավասու է այդ կազմակերպությունների հարկադիր բաժանման կամ առանձնացման պահանջով դիմել դատարան: Այսինսով, Ռուսաստանի Դաշնության ղեկավարող մրցակցային օրենսդրության խախտումների դեպքում բաժանման և առանձնացման դեպքում հարկադիր վերակազմակերպումը հնարավոր է միայն դատական կարգով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հարկադիր վերակազմակերպումները բաժանման և առանձնացման ձևով իրականացվում են Կլեյտոնի ակտի հիման վրա, որն ընդունվել է 1914 թվականին: Սակայն, դեռևս մինչև այդ ակտի ընդունումը ԱՄՆ-ում իրականացվել են հարկադիր վերակազմակերպումներ:

¹²⁷ Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_61763/:

Մասնավորապես, 1911 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանի որոշման հիման վրա ամերիկյան նավթային գերխոշոր կորպորացիան՝ «Ստանդարտ օյլ» -ը (Standart Oil) բաժանվեց 34 անանձին կազմակերպությունների: Նշված բաժանումից հետո «Ստանդարտ օյլ»-ի բաժինը շուկայում 1911-1920թթ. 62 տոկոսից հասավ 50 տոկոսի, ինչը կարելի է համարել ընդհանուր առմամբ ոչ էական կորուստ¹²⁸:

Կլեյտոնի ակտի համաձայն հարկադիր վերակազմակերպումներն իրականացվում էին ոչ թե մենաշնորհ կորպորացիաների կողմից խախտումներ թույլ տալու դեպքերում, այլ այն դեպքերում, երբ որոշակի կորպորացիա շուկայում ձեռք էր բերում մենաշնորհ դիրք և ԱՄՆ Գերագույն դատարանը գտնում էր, որ այդ դիրքը խաթարում է տնտեսությունը: Նման դեպքերում, դատարանի որոշման հիման վրա մենաշնորհ կազմակերպությունները բաժանվում էին մի քանի մանր ինքնուրույն կազմակերպությունների¹²⁹:

Այսպիսով, ԱՄՆ-ում ևս հարկադիր վերակազմակերպումներն իրականացվում են դատարանի որոշման հիման վրա՝ Առևտրի Դաշնային Հանձնաժողովի հայցով:

Եվրոպական Միությունում իրավաբանական անձանց վերակազմակերպումները, այդ թվում՝ հարկադիր, իրականացվում են մի շարք դիրեկտիվների հիման վրա: Այսպես,

վարկային կազմակերպությունների վերակազմակերպումներն իրականացվում են «Վերակազմակերպումների և լուծարումների մասին» թիվ 2001/24/EC դիրեկտիվի¹³⁰ հիման վրա, ապահովագրական կազմակերպությունների վերակազմակերպումն իրականացվում է «Ապահովագրական կազմակերպությունների վերակազմակերպման և գործունեության դադարեցման մասին» թիվ 2001/17/EC դիրեկտիվով¹³¹:

¹²⁸ Տե՛ս **Richard A. Epstein**. Antitrust Consent Decrees in Theory and Practice: Why Less Is more. Washington, D.C. 2007, էջեր՝ 19-20:

¹²⁹ Նման կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՄՆ-ում օրենսդրությունը և պետական քաղաքականությունը հակամենաշնորհային է. այսինքն՝ պետությունը պայքարում է մենաշնորհների դեմ: Դրավառ օրինակ է հանդիսանում 2000 թվականին Կոլումբիայի շրջանի դատարանի որոշումը, որով Microsoft-ը պետք է բաժանվեր երկու ինքնուրույն կորպորացիաների:

¹³⁰ Տե՛ս Directive 2001/24/EC of the European Parliament and of the Council, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2001:125:0015:0023:en:PDF>:

¹³¹ Տե՛ս Directive 2001/17/EC of the European Parliament and of the Council of 19 March 2001 on the reorganisation and winding-up of insurance undertakings, <http://eur-lex.europa.eu/legal-content/en/ALL/?uri=CELEX:32001L0017>:

Վերը նշված դիրեկտիվները հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը վերապահում են միության անդամ պետությունների ազգային դատական մարմիններին, իսկ վերակազմակերպման գործընթաց կարող են նախաձեռնել համապատասխան կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները:

Այսպիսով, ներպետական և արտասահմանյան օրենսդրության վերլուծությունը և համադրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հարկադիր վերակազմակերպումը իրականացվում է այն դեպքերում, երբ որևէ կազմակերպություն թույլ է տալիս օրենքի, հիմնականում մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտում: Հետևաբար, հարկադիր վերակազմակերպումը կարելի է համարել օրենքի խախտման համար իրավախախտի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոց: Ուստի, նշված հարկադրանքի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի իրավախախտ սուբյեկտը հնարավորություն չունենա ազդելու գործընթացի վրա, որոշելու դրա հետագա ընթացքը: Այդ նպատակներին հնարավոր է հասնել այն դեպքում, երբ կազմակերպության վերակազմակերպումն իրականացվում է առանց նրա մասնակցության կամ առանց նրա կողմից որոշումներ կայացնելու հնարավորության, ինչպիսի ընթացակարգ համարվում է Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը, երբ դատարանը նշանակում է իրավաբանական անձի արտաքին կառավարիչ և նրան հանձնարարում է իրականացնել իրավաբանական անձի վերակազմակերպում և նշանակման պահից իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորություններն անցնում են արտաքին կառավարչին: Հենց սա է հարկադիր վերակազմակերպման էությունը, երբ վերակազմակերպվողը չունի վերակազմակերպման գործընթացի վրա ազդելու հնարավորություն և գործիքակազմ:

Հետևաբար, ՏՄՊ Օրենքով նախատեսված Հանձնաժողովի իրավասությունն ընդունելու տնտեսվարող սուբյեկտի բաժանման կամ առանձնացման վերաբերյալ որոշում, չի կարելի համարել

Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հարկադիր վերականգնական քննարկարգից տարբերվող քննարկարգ, այլ քննիականակն, դրանք պետք է համարել հենց օրենքով նախատեսված այն հիմքերը, երբ դատական կարգով կարող է իրականացվել կազմակերպության հարկադիր վերականգնական:

Ասպիսով, հարկադիր վերականգնական օրենքով նախատեսված հիմքերը բացահայտելուց հետո փորձենք պարզել, թե ովքեր կարող են դիմել դատարան կազմակերպության հարկադիր վերականգնական պահանջով:

Ընդհանրապես, իրավական դոկտրինայում և միջառքերկրների օրենսդրությամբ շեշտվում է այն հանգամանքը, որ հարկադիր վերականգնական պահանջով կարող են դիմել հանրային իրավունքի սուբյեկտները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կազմակերպության նկատմամբ հարկադիր վերականգնական գործիքակազմ կիրառվում է հանրային իրավունքով պաշտպանվող շահերի դեմ ոտնձգելու, մասնավորապես, մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներ թույլ տալու դեպքերում:

Արգենտինայի օրենսդրությամբ, օրինակ, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարկադրանքի միջոցների, այդ թվում՝ հարկադիր վերականգնական կիրառման քննարկում օգտագործվում է «ընդհանուր տնտեսական օգուտի գաղափարը», որն արտացոլում է հասարակության տնտեսական բարեկեցությունը, այսինքն՝ կազմակերպության հարկադիր վերականգնական հնարավոր է միայն հանրային շահերի, այլ ոչ թե մասնավոր շահերի պաշտպանության նպատակով¹³²:

Մեր կողմից դիտարկված երկրներում կազմակերպության հարկադիր վերականգնական հայցով դատարան կարող են դիմել միայն հակամենաշնորհային/մրցակցության պաշտպանության մարմինները, քանի որ նման հայցով դիմելու հիմք է հանդիսանում մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտում թույլ տալը:

¹³² Տե՛ս **Беликова К.М.** Злоупотребление доминирующим положением в законодательстве, доктрине и правоприменительной практике Европейского Союза и стран Южноамериканского общего рынка — Аргентины, Бразилии и Перу // Право и политика. 2008. № 7, էջեր՝ 38-52:

Հայաստանյան օրենսդրությամբ նշված հարցը ուղղակիորեն կարգավորված չէ և պարզելու համար հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու սուբյեկտների շրջանակը պետք է կատարենք օրենսդրության համակարգային վերլուծություներ:

Այսպես, ՏՄՊ Օրենքի 19-րդ և 35-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հանձնաժողովը նման իրավասությունն պետք է ունենա՝ հաշվի առնելով նաև մեր կողմից արդեն կատարված վերլուծությունը:

ՏՄՊ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի դիմելու դատարան սույն օրենքի խախտումների վերաբերյալ, այդ թվում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած ակտերը, տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև այդ պայմանագրերի փոփոխման կամ լուծման պահանջով, իսկ նույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն իր որոշման չկատարման դեպքում իրավասու է հայցով դիմել դատարան:

Իհարկե նշված հոդվածներից միանշանակորեն չի երևում, որ Հանձնաժողովը իրավախախտ տնտեսվարող սուբյեկտի հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու իրավունք ունի, սակայն եթե մենք ուշադիր ուսումնասիրենք արդեն մեջբերված ՏՄՊ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի բանաձևումը, ապա կտեսնենք, որ Հանձնաժողովը նման իրավասությունն պետք է վերապահվի:

Այսպես, հիշյալ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է հայցով դիմել դատարան ՏՄՊ Օրենքի խախտումների վերաբերյալ, ընդ որում ոչ թե իր որոշումների կատարմանը պարտավորեցնելու պահանջով, այլ իր որոշմամբ խախտում համարվող գործողությունները վերացնելու պահանջով, քանի որ ՏՄՊ Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասն արդեն Հանձնաժողովին վերապահում է իր որոշումների կատարմանը դատական կարգով պարտավորեցնելու իրավասություն:

Հետևաբար, քանի որ տնտեսվարող սուբյեկտի ապախոչորացումը և գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը

լուծարելը վերաբերում են ՏՄՊ Օրենքի խախտումներին, դրանց հետևանք են, ուստի գտնում ենք, որ ՏՄՊ Օրենքի 19-րդ հոդվածով Յանձնաժողովին անհրաժեշտ է վերապահել հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու իրավասությունը: Եվ դա բնական է, քանի որ հարկադիր վերակազմակերպման հիմքերը սահմանված են հենց ՏՄՊ Օրենքով, և նշված օրենքը կիրառող մարմինը պետք է ունենա նման իրավասություն:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե բացի Յանձնաժողովից այլ անձիք, օրինակ՝ կազմակերպության մասնակիցները, պարտադիր կամ մրցակից կազմակերպությունները կարող են ՏՄՊ Օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում (օրինակ՝ Յանձնաժողովի կողմից համակենտրոնացումը արգելելու դեպքում) դիմել դատարան տնտեսվարող սուբյեկտի հարկադիր վերակազմակերպման պահանջով, ապա պետք է նշել, որ մասնավոր անձիք նման հնարավորություն օրենսդրությամբ չունեն և դա արդարացի է:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ իրավունքը ճանաչելով, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով, վնասներ հատուցելով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ եղանակներով:

Քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելը չի մտնում թվարկված եղանակների մեջ:

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված այլ եղանակներին, ապա պետք է նշել, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հետ կապված իրավահարաբերություններ կարգավորող օրենքներով (բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, կոոպերատիվների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և այլ տեսակների վերաբերյալ օրենքներ) կազմակերպության մասնակիցներին և պարտադիր են նման իրավունք վերապահված չէ:

Պետք է նշել, որ դատական պրակտիկան ևս զարգացել է այն ճանապարհով, որ կազմակերպության հարկադիր վերակազմակերպման պահանջով դրամասնակիցները կամ պարտատերերը դատարան դիմելու իրավունք չունեն:

Այսպես, թիվ ԵԿԴ/1597/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում մի շարք հայ ցվորներ («ԵԱ2» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերեր) հայց են ներկայացրել Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան «ԵԱ2» բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպման (բաժանման) պահանջով:

Հայ ցվորները նշել են, որ ընկերության տնօրենին ընկերության վերակազմակերպման հարցը քննարկելու նպատակով խնդրել են հրավիրել ընդհանուր ժողով, սակայն նրանց պահանջը մնացել է անպատասխան, ուստի հայ ցվորները, վկայակոչելով Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 9-րդ հոդվածը և 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, խնդրել են դատարանից բաժանման ձևով վերակազմակերպել ընկերությունը:

Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ մերժել է հայցադիմումը վարույթ ընդունելը՝ նշելով, որ տվյալ դեպքում չի պահպանվել Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, չի ներկայացվել իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշում՝ վերակազմակերպում կատարելու անհամաձայնության վերաբերյալ, ինչպես նաև չի մատնանշվել այն օրենքը, որի դեպքում կգործի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի պահանջը:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2016 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ բավարարել է հայ ցվորների վերաքննիչ բողոքը և բեկանել դատարանի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը:

Վերաքննիչ դատարանը մասնավորապես նշել է, որ օրենսդիրը նախատեսել է իրավաբանական անձի վերակազմակերպման հատուկ

կարգ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ կարգն ամենևին էլ վերացնում իրավաբանական անձի բաժնետերերի իրավունքները, այդ թվում դրանց պաշտպանության իրավունքը, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով և Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով: Հետևաբար իրավաբանական անձանց բաժնետերերի իրավունքների և դրանց իրականացման առանձնահատուկ կարգի (Ընկերության վերակազմակերպումը կատարվում է ժողովի որոշմամբ) միջև պետք է գտնվի ողջամիտ հավասարակշռվածություն՝ օրենսդրության տրամաբանությունը չխախտելու համար:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը 2016 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ բավարարել է պատասխանողի վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով Քաղաքացիական օրենսգրքի 13-րդ, 14-րդ և 63-րդ հոդվածները, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 21-րդ, 66-րդ և 67-րդ հոդվածները, մասնավորապես իր որոշման մեջ նշել է. «որպես կանոն, իրավաբանական անձի, տվյալ դեպքում բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպումը՝ այդ թվում նաև բաժանումը, կատարվում է կամավոր կարգով՝ նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա: Ընդ որում, բաժնետիրական ընկերության բաժանման մասին որոշումը ընդունելու իրավասությունը պատկանում է բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ Ընկերության ժողովին, որը հաստատում է նաև բաժանման կարգը և պայմանները: Ի տարբերություն կամավոր կարգի՝ բաժնետիրական ընկերության հարկադիր վերակազմակերպումը տեղի է ունենում դատարանի վճռով՝ բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Ընդ որում՝ դատարանի վճռով հարկադիր վերակազմակերպումն իրականացվում է բացառապես բաժանման կամ առանձնացման ձևերի դեպքում, քանի որ այդ դեպքում հնարավոր է ընկերության գույքային միջոցների նվազեցում: Բացի այդ, բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա բոլոր իրավունքները և

պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող ընկերություններին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական կարգով ընկերության բաժանման պահանջի դեպքում առկա է իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման պահանջ, որն ենթակա է դատարանի քննությանը միայն օրենքով նախատեսված դեպքերում, այսինքն՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով ուղղակիորեն և հստակ ամրագրված է համապատասխան իրավասու անձի՝ տվյալ պահանջով հայց ներկայացնելու իրավունքը կամ տվյալ պահանջը դատարանին քննության ենթակա էլիսելը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաժնետիրական ընկերության բաժնետերերն ընկերության վերակազմակերպման (տվյալ դեպքում՝ բաժանման) գործընթացի հետ կապված իրենց պահանջները կարող են ներկայացնել օրենքով սահմանված կարգով՝ իրենց իրավասությունների շրջանակում (օրինակ՝ բաժնետերն իրավունք ունի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետով սահմանված կարգով դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով և այլն): Ընդ որում, նշվածը կարող է իրականացվել միայն կամավոր կարգով բաժնետիրական ընկերության վերակազմավորման (վերակազմակերպման - ուղղումը հեղինակինն է) (տվյալ դեպքում բաժանման) դեպքերում»¹³³:

Այսպիսով, վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ կազմակերպության հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմել հնարավոր է միայն օրենքով նախատեսված հիմքերով և միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով ուղղակիորեն և հստակ ամրագրված է համապատասխան իրավասու անձի՝ տվյալ պահանջով հայց ներկայացնելու իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով վճռաբեկ դատարանի որոշման մեջ ներկայացված իրավադրույթները՝ կարելի է փաստել, որ կազմակերպության մասնակիցները, ինչպես նաև պարտատերերը,

¹³³ Տե՛ս թիվ ԵԿԴ/1597/02/15 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումը:

առավել ևս դրա մրցակիցները չեն կարող դիմել դատարան կազմակերպության հարկադիր վերակազմակերպման պահանջով, քանի որ նրանք օրենքով նման իրավասություն չունեն և նրանց հայցը ենթակաչ է դատարանում քննության:

Անդրադառնալով հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու Հանձնաժողովի իրավասությանը՝ պետք է նշել, որ գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաչափ տնտեսվարող սուբյեկտի ապախոշորացման (բաժանում, առանձնացում) պահանջով դատարան դիմելը ոչ թե Հանձնաժողովի պարտականությունն է, այլ իրավունքը, և բոլոր դեպքերում ապախոշորացման վերաբերյալ որոշումը և դրա հիման վրա դատարան ներկայացված հայցը պետք է լինեն հիմնավորված: Կազմակերպության հարկադիր վերակազմակերպումը պետք է բխի ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքի պաշտպանության բացարձակ անհրաժեշտությունից և պետք է լինի տնտեսապես և տեխնիկապես հնարավոր:

Այսինքն, ամենևին պարտադիր չէ, որ բոլոր մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտները ենթարկվեն հարկադրանքի նման միջոցի: Ինչպես նշում են ամերիկացի իրավաբանները՝ ոչ թե մենաշնորհ դիրքն է համարվում խախտում, այլ շուկայի մենաշնորհացումը, հետևաբար պետք է պայքարել ոչ թե շուկայի խոշոր խաղացողների դեմ, այլ դրանց չարաչափումների դեմ:

Հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով և պայմաններով՝

- գոյություն ունի կազմակերպության ենթակառուցվածքների առանձնացման իրական հնարավորություն, այսինքն վերակազմակերպվող կազմակերպության ենթակառուցվածքների միջև բացակայում է տեխնիկական սերտ փոխկապվածությունը (օրինակ՝ մեկ ենթակառուցվածքի կողմից օգտագործվող մեկ այլ ենթակառուցվածքի արտադրանքի, աշխատանքի, ծառայության ընդհանուր ծավալը չի գերազանցում տվյալ ենթակառուցվածքի կողմից արտադրվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության 30 տոկոսը),

- վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպություններն ունեն իրական հնարավորություն ինքնուրույն գործելու կոնկրետապրանքային շուկայում:

- Նշված պայմաններից թեկուզ մեկի բացակայությունը անհնարին է դարձնում կազմակերպության հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ որոշման ընդունումը:

1953 թվականին ԱՄՆ տարածաշրջանային դատարաններից քննելով United Shoe Machinery Co.-ի երեք առանձին կազմակերպությունների բաժանելու վերաբերյալ ամերիկյան կառավարության հայցը, համարեց այդ բաժանումն անիրատեսական: Կազմակերպությունը ապրանքի արտադրությունն իրականացնում էր մեկ արտադրամասում, որը գտնվում էր Բեվերլի քաղաքում՝ արտադրության ընթացքում օգտագործելով միևնույն գործիքները, օժանդակ տեխնիկան, բոլոր ապրանքների արտադրության ընթացքում աշխատում էին միևնույն անձնակազմը և ղեկավար կազմը: Բացի այդ, անարդարացի համարվեց կազմակերպության արտադրանքը սկզբում բաժանել երեք առանձին կատեգորիաների, այնուհետև դատարանի որոշմամբ արգելել Բեվերլիի արտադրամասին արտադրել երկու կատեգորիայի ապրանք, որպեսզի դրանք արտադրելու իրավունքը վերապահել նոր ստեղծվող մյուս երկու կազմակերպություններին: Նոր ստեղծվող կազմակերպությունների համար դա կառաջացներ արտադրության կազմակերպման հետկապված խնդիրներ: Ամերիկյան կառավարության ներկայացրած պահանջը բավարարելու դեպքում կստեղծվեին երեք առանձին կազմակերպություններ այն նույն վայրում, որտեղ արդյունավետորեն գործում էր մեկ կազմակերպություն, ինչը չի կարելի համարել ողջամիտ: Ինչպես նշել է որոշումը կայացրած դատավոր Վիզանսկին՝ չպետք է լինել Սողոմոն Իմաստունը հասկանալու համար, որ այս օրգանիզմը չի կարելի բաժանել երեք հավասարապես կենսունակ մասերի¹³⁴:

Այսպիսով, ապախոշորացման վերաբերյալ որոշումը պետք է կայացվի բացառապես տնտեսական մրցակցության պաշտպանության և մրցակցության զարգացման նպատակներից ելնելով:

¹³⁴ Տե՛ս **Dominick T. Armentano**, Antitrust and Monopoly, The independent Institute, Oakland, California, 2005, էջեր՝ 182-190:

Իհարկե, վերը նշված չափանիշները օրենքով ուղղակիորեն սահմանված չեն, ինչը մրցակցության պաշտպանության ամերիկյան մոդելի կրկնությունն է, երբ խուսափում են խիստ որոշակի ձևակերպումներից, որը հնարավորություն է տալիս դրանց մեջ ներդնել որոշակի և կոնկրետ գործի փաստական հանգամանքներին համապատասխանող բովանդակություն:

Ինչպես արդեն նշվել է ՏՄՊ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը ենթակա է լուծարման (լուծման, դադարեցման)՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն է ապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումը թույլատրվում է Յանձնաժողովի որոշման հիման վրա, որը կարող է պարունակել նաև համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ: Իսկ 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը գործողության մեջ դնելը՝ մինչև Յանձնաժողովի կողմից որոշում կայացնելը:

Նշված հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ Յանձնաժողովը կարող է արգելել այն համակենտրոնացումը, որը էապես խոչընդոտում է տնտեսական մրցակցությունը, այդ թվում՝ հանգեցնում է գերիշխող դիրքի կամ ամրապնդում է այն:

Յանակենտրոնացումը արգելելու վերաբերյալ Յանձնաժողովը կայացնում է որոշում, որտեղ պետք է հիմնավորվի այն հանգամանքը, որ տնտեսվարող սուբյեկտների միացումը կամ միաձուլումը խոչընդոտում է մրցակցությունը և այն փաստորեն ի սկզբանե չպետք է տեղի ունենար:

Նման դեպքերում, արդեն, Յանձնաժողովը, հիմք ընդունելով համակենտրոնացումը արգելելու վերաբերյալ իր որոշումը, կարող է դիմել դատարան տնտեսվարող սուբյեկտների բաժանման կամ առանձնացման պահանջով:

«Իրավաբանական անձանց գրանցման մասին» օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ բաժանման կամ առանձնացման պետական գրանցման համար ներկայացվում են՝ դիմում, պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը, իրավաբանական անձանց կանոնադրությունները և այլ փաստաթղթեր: Հարկադիր վերակազմակերպման համար արդեն պետական գնացման հիմք է համարվում դատարանի կողմից բաժանիչ հաշվեկշիռը և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելը: Չնայած այն հանգամանքին, որ հիշյալ օրենքը չի սահմանում թե հարկադիր վերակազմակերպման գրանցման համար ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի արտաքին կառավարիչը, սակայն նույն օրենքի, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից կարելի է պարզել այդ փաստաթղթերի ցանկը:

Այսպես, իրավաբանական անձանց գրանցման մասին օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե օրենսդրությամբ որևէ հաշվառում կամ գրանցում կատարելու համար նախատեսված է լիազոր կամ այլ մարմնի որոշում ներկայացնելու պահանջ, ապա այդ որոշումները կարող են ունենալ հետևյալ ձևերը՝ դատարանի որոշում կամ դատարանի վճիռ:

Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտաքին կառավարիչը կազմում է բաժանիչ հաշվեկշիռ և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների կանոնադրությունները և ներկայացնում դատարանի հաստատմանը, իսկ դատարանի կողմից այդ փաստաթղթերը հաստատելը հիմք է վերակազմակերպման պետական գրանցման համար:

Նշվածից կարելի է ենթադրել, որ արտաքին կառավարիչը պետական գրանցման իրավասու մարմին պետք է ներկայացնի հարկադիր վերակազմակերպման մասին դատարանի վճիռը, բաժանված կամ առանձնացված կազմակերպության բաժանիչ հաշվեկշիռը, նոր ստեղծվող կազմակերպությունների կանոնադրությունները և ամենակարևորը նշված փաստաթղթերը հաստատելու մասին դատարանի որոշումը:

Այս պիսով, հարկակազմակերպման իրականացման պատշաճ ընթացակարգն ապահովելու և դրա ընթացքում կորարացիայի ու նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության նպատակով առաջարկում ենք ՏՄՊ Օրենքով նախատեսել Հանձնաժողովի հստակ իրավասությունը մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտում թույլ տված կազմակերպությունների հարկադիր վերակազմակերպման պահանջով դիմելու դատարան: Այդ կապակցությամբ, առաջարկում ենք ՏՄՊ Օրենքի 19-րդ հոդվածը 1-ին մասի «դ» կետը լրացնել դրույթով, համաձայն որի՝ Հանձնաժողովը իրավասու է դիմել դատարան՝ գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ չարաշահած և արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դրած տնտեսվարող սուբյեկտների հարկադիր վերակազմակերպման պահանջով:

§ 3. Վերակազմավորման իրավական կարգավորման առանձնահատկությունները

Քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մեկ տեսակի իրավաբանական անձը մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորվելու դեպքում (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) նոր առաջացած իրավաբանական անձին են անցնում վերակազմավորված իրավաբանական անձի իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

Այս ձևակերպումը թույլ է տալիս եզրակացնել, որ վերակազմավորումը ենթադրում է իրավաբանական անձի տեսակի և կազմակերպարավական ձևի փոփոխություն: Իհարկե, բացի վերը նշված ձևակերպումից, Քաղաքացիական օրենսգրքում որևէ այլ տեղ բանաձևված չէ վերակազմավորման լեզալ բնորոշումը, որի արդյունքում միայն Քաղաքացիական օրենսգրքի առանձին հոդվածներում առկա կարգավորումների միջոցով ենք պատկերացում կազմում վերակազմակերպման այս ձևի մասին:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության վերակազմավորում է համարվում նրա կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը:

Ավելի ին վերակազմավորման իրավական բնորոշման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի պարունակում, որի արդյունքում առաջանում է վերակազմավորման որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի սահմանումը քանաձևելու անհրաժեշտությունը, տվյալ ինստիտուտի էությունը ամբողջությամբ բացահայտելու և օրենսդրության միասնական կիրարկումն ապահովելու նպատակով, քանի որ դրա բացակայությունը հանգեցրել է նրան, որ իրավական ակտերում «վերակազմավորում» տերմինը ստացել է տարբեր ձևակերպումներ: Մասնավորապես, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության վերակազմավորման (վերակառուցման) դեպքում չկատարված հարկային պարտավորությունը կրում է նրանց իրավահաջորդը (իրավահաջորդները): Փաստորեն, կազմակերպատիրական ձևի փոփոխությունը նկարագրվում է ոչ միայն վերակազմավորում, այլ նաև վերակառուցում տերմիններով: Միաժամանակ, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ փակ ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Եթե բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ապա ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով: Ստացվում է մի իրավիճակ, որ վերակազմավորում տերմինը մի շարք դեպքերում չի օգտագործվում այն նշանակությամբ, որն այն ունի որպես վերակազմակերպման ինքնուրույն ձև, ինչ արդյունքում առաջանում է վերակազմավորման միասնական հասկացությունը քանաձևելու անհրաժեշտությունը:

Վերակազմավորման միասնական հասկացությունը ձևակերպելու համար անհրաժեշտ է բացահայտել ընդհանուրը և հատուկը վերակազմավորման մեջ, բացի այդ հաշվի առնելով, որ վերակազմավորման էությունը իրավաբանական անձի տեսակի և կազմակերպատիրական ձևի փոփոխությունն է, նաև «կազմակերպատիրական ձև» իրավական եզրույթի

բովանդակությունը և դրա հարաբերակցությունը իրավաբանական անձի տեսակի հետ: Ընդ որում առաջադրվող հասկացությունը պետք է հնարավորինս ամբողջական կերպով արտացոլի վերակազմավորման ընթացքում տեղի ունեցող գործընթացների էությունը, որի միջոցով հնարավոր կլինի նաև հիմնավորել վերակազմավորման՝ որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի գոյությունը, որպիսի հանգամանքը կասկածի տակ են դնում տարբեր գիտնականներ¹³⁵:

Այսպես, վերակազմավորման ձևով վերակազմակերպում իրականացնելիս առավել ցայտուն արտահայտվում է իրավաբանական անձի կոնկրետ կազմակերպարավական ձևը: Վերակազմավորման արդյունքում ոչ միայն փոխվում է իրավաբանական անձի ֆիրմային անվանումը, նրա առանձին մարմինները կազմը և կառուցվածքը, այլ և տեղի է ունենում իրավաբանական անձի ներքին կառուցվածքի էական փոփոխություն, որի արդյունքում մեկ իրավաբանական անձը փոխարինվում է քաղաքացիական իրավահարաբերությունների նոր սուբյեկտով¹³⁶:

Եթե իրավաբանական անձը իրենից ներկայացնում է իրավական ֆիզիա, ապա նրա կազմակերպարավական ձևի և ներքին կառուցվածքի փոփոխությունները կարելի է համարել նոր սուբյեկտի ստեղծում և ճանաչել հին իրավաբանական անձի իրավունքների փոխանցումը նոր իրավաբանական անձին: Այդ դեպքում կպահպանվի վերակազմակերպման իրավաբանական և տնտեսական էությունը: Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել, որ գործնականում այդ տեսությունն այնքան էլ չի արդարացնում իրեն, քանի որ բացի կազմակերպարավական ձևի փոփոխությունից ըստ էության որևէ այլ բան չի փոխվում, հատկապես վերջինիս պատկանող գույքի կազմում, որի արդյունքում վերակազմակերպման

¹³⁵ Տե՛ս **Витушко В.** Право на собственность и новые формы хозяйствования // Хозяйство и право. 1991. № 10, էջեր՝ 64-68, Кооперативное право: Учебное пособие / **А.А. Собчак, В.Ф. Яковлева, В.С. Тимескова и др.**/ под ред. А.А. Собчака, В.Ф. Яковлевой, Н.Д. Егорова. - СПб: Издательство С.-Петербургского университета, 1992, էջեր՝ 73-74, Предпринимательское право: Курс лекций / иод ред. **И.И. Клейн.** - М.: Юридическая литература, 1993. էջ 38, Комментарий Федерального закона «Об акционерных обществах» /**Бернард Блэк, Рейнир Крэкман, Анна Тарасова.** - М.: Издательство «Лабнриш», 1999, էջ 209:

¹³⁶ Տե՛ս **Степанов Д.И.** Формы реорганизации коммерческих организаций: вопросы законодательной реформы, հղում՝ <http://www.hr-portal.ru/article/formy-reorganizatsii-kommercheskikh-organizatsii-voprosy-zakonodatelnoi-reformy>:

բոլոր հատկանիշները չեն արտացոլվում վերակազմակերպման գործընթացում: Օրինակ, երկու բաժնետիրոջից բաղկացած բաժնետիրական ընկերության վերակազմավորումը նույնքան մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության չի հանգեցնում այն հետևանքներին, որոնք մենք հետևում ենք վերակազմակերպման մյուս ձևերի դեպքում: Բացի այդ, ի տարբերություն վերակազմակերպման մյուս ձևերի վերակազմավորման դեպքում իրավաբանական անձի պարտատերերի, մասնակիցների կամ այլ անձանց իրավունքների պաշտպանությանն այդքան մեծ ուշադրություն չի դարձվում¹³⁷:

Նման պայմաններում կարելի է համաձայնվել Բելովի այն տեսակետի հետ, որ վերակազմավորումը որպես իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի փոփոխություն ենթարկվում է վերակազմակերպման մասին քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված կանոններին միայն տեխնիկապես՝ օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելու ուժով¹³⁸:

Միաժամանակ, պետք է նշել, որ որոշ կազմակերպությունների վերակազմավորման արդյունքում կարող են առաջանալ դրա պարտատերերի իրավունքների պաշտպանության միջառք խնդիրներ: Ընդ որում, մեր կարծիքով վերակազմակերպվող կորպորացիայի պարտատերերը կարող են օգտվել իրենց իրավունքներից այն դեպքում, երբ իրավահաջորդ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևը պարտատերերին չի տալիս այն իրավաբանական հնարավորությունները, որոնք տալիս էր իրավանախորդ կազմակերպության կազմակերպարավական ձևը: Քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմոծված մասի սահմաններում: Նման պայմաններում, կոոպերատիվի վերակազմավորման դեպքում պարտատերերը զրկվում

¹³⁷ Տե՛ս Կորպորատивное право: Актуальные проблемы теории и практики / под общ. ред. Белова В.А., М.: Издательство Юрайт, 2009, էջ 501:

¹³⁸ Տե՛ս նույն տեղում:

են կոռպորատիվի նրա անդամներին և բացուցիչ պատասխանատվության կանչելու հնարավորությունն է:

Քաղաքացիական օրենսգրքով տրված վերակազմավորման բնորոշումից երևում է, որ «իրավաբանական անձի տեսակ» և «իրավաբանական անձի կազմակերպարավական ձև» հասկացությունները փոխկապված են և ևրացնում են միմյանց:

«Իրավաբանական անձի տեսակ» և «կազմակերպարավական ձև» իրավական եզրույթների բովանդակությունը Քաղաքացիական օրենսգրքով կամ իրավաբանական անձանց առանձին տեսակներին նվիրված իրավական ակտերով բացահայտված չեն, ընդհակառակը, շատ դեպքերում դրանք նույնացվում են:

Տեսություն մեջ «կազմակերպարավական ձև» եզրույթը ստացել է տարբեր ձևակերպումներ: Այսպես, Վ.Վ. Չալեսկին կազմակերպարավական ձևը բնութագրում է որպես խիստ որոշակի հատկանիշների ամբողջություն, որոնք օբյեկտիվորեն տարբերվում են իրավաբանական անձի ընդհանուր հատկանիշներից և թույլ են տալիս տվյալ տեսակի իրավաբանական անձանց տարբերակել այլ տեսակի իրավաբանական անձանցից¹³⁹: Ն.Վ. Կոզլովան կազմակերպարավական ձևը ներկայացնում է որպես իրավաբանական անձի տեսակ, որը իրավաբանական անձի այլ տեսակից տարբերվում է ստեղծման ձևով, կառավարման կարգով, մասնակիցների միմյանց և կազմակերպության հանդեպ ունեցած իրավունքների և պարտավորությունների ծավալով¹⁴⁰: Կազմակերպարավական ձևը բնութագրվում է նաև որպես իրավաբանական անձի կազմակերպական միասնությունը անհատականացնող տարր, որը թույլ է տալիս մի կազմակերպությունը տարբերել մյուսից¹⁴¹:

Իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի առավել համընդգրկուն և դրա էությունն առավել ազոյնսարտահայտող հասկացությունն է առաջարկում պրոֆեսոր Ավետիսյանը: Մասնավորապես, նա նշում է, որ իրավաբանական անձի կազմակերպարավական

¹³⁹ Տե՛ս **Залесский В.В.** Создание и деятельность коммерческих организаций//Право и экономика, 1998, No 1, էջ 36:

¹⁴⁰ Տե՛ս **Козлова Н.В.** Понятие и сущность юридического лица, М., 2003, էջ 259:

¹⁴¹ Տե՛ս **Збарацкая Л.А.** Организационное единство в системе обязательных признаков юридического лица: автореф. Дисс. Канд. Юрид. Наук., Владивосток, 2003, էջ 7:

ձևը որոշակի յուրահատուկ հատկանիշների ամբողջություն է, որոնք կապված են իրավաբանական անձի գույքի, կազմակերպական կառուցվածքի, մասնակիցների (հիմնադիրների, բաժնետերերի), նրանց և կառավարման մարմինների միջև առաջացող հարաբերությունների, իրավաբանական անձի հետ մասնակիցների փոխհարաբերության, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցների և կորպորատիվ իրավաբանական հարաբերությունների այլ մասնակիցների առջև ունեցած պարտավորությունների հետ¹⁴²:

Իրավաբանական անձի տեսակն, արդեն, դասակարգող հասկացություն է, որն օգտագործվում է ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ տեսություն մեջ¹⁴³: Այն իրենից ներկայացնում է որոշակի հատկանիշների ամբողջություն, որոնք իրենց համակցության մեջ թույլ են տալիս ընդգծել այս կամ այն իրավաբանական անձի կամ իրավաբանական անձերի առանձնահատուկությունները, որոնց ուժով դրանք ենթակա են տարանջատման: Օրինակ, առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձանց դասակարգման հիմքում դրված են առևտրային գործունեություն իրականացնելու և շահույթ ստանալու ու ստացված շահույթը բաշխելու հանգամանքները, որոնց ուժով առևտրային իրավաբանական անձերը տարբերվում են ոչ առևտրայիններից:

Ինչպես արդեն նշվել է Քաղաքացիական օրենսգիրքը տարբերում է իրավաբանական անձի երկու տեսակ՝ առևտրային և ոչ առևտրային: Նշված տեսակներն իրենց հերթին կարելի է բաժանել ենթատեսակների, օրինակ տնտեսական ընկերությունը առևտրային կամ կորպորատիվ տիպի իրավաբանական անձի տեսակ է:

Իրավաբանական անձանց տեսակների մեջ, իրենց հերթին կան կազմակերպատիրակական տարբեր ձև ունեցող կազմակերպություններ: Օրինակ, տնտեսական ընկերությունները կարող են լինել սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների ձևով, որոնք համարվում են միևնույն տեսակի իրավաբանական անձի տարբեր կազմակերպատիրակական ձևեր: Հատկանշական է այն հան-

¹⁴² Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավաբանական հարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր, 2013, էջեր՝ 42-43:

¹⁴³ Տե՛ս **Серова О.А.** Классификация юридических лиц, монография, Издательская группа «Юрист», 2009, էջ՝ 26:

գամանքը, որ բաժնետիրական ընկերությունը այն միակ կազմակերպարավական ձևն է, որն ունի երկու տեսակ՝ բաց և փակ: Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Ավետիսյանը, բաց և փակ բաժնետիրական ընկերությունները պետք է համարել ոչ թե երկու տարբեր կազմակերպարավական ձևեր, այլ հենց մեկ կազմակերպարավական ձևի երկու տեսակներ¹⁴⁴, քանի որ դրանք օժտված չեն իրավաբանական անձի կազմակերպարավական ձևին բնորոշ առանձնահատկությունների այն ամբողջությամբ, որը թույլ կտա դրանց համարել առանձին կազմակերպարավական ձևեր: Յետևաբար, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով սահմանված այն դրույթը, որ փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվը 49-ից ավել լինելու դեպքում այն պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության, չի կարելի մեկնաբանել որպես իրավաբանական անձի առանձին ձև համարվող վերակազմավորման գործընթաց, քանի որ այդ դեպքում տեղի չի ունենում իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի փոփոխություն:

Ինչպես արդեն նշվեց, մի շարք դեպքերում վերակազմավորումը ենթադրում է ոչ միայն կազմակերպարավական ձևի, այլ նաև իրավաբանական անձի տեսակի փոփոխություն: Մասնավորապես, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹⁴⁵ 24-րդ հոդվածի համաձայն՝ պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Նշվածը ենթադրում է, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմավորվել նաև առևտրային կազմակերպության, ինչն արդեն իրավաբանական անձի տեսակի փոփոխություն է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «իրավաբանական անձի տեսակ» և «իրավաբանական անձի կազմակերպարավական ձև» հասկացությունները փոխհարաբերակցվում են ինչպես ընդհանուրն ու մասնավորը, քանի որ մեկ տեսակի մեջ կարող են լինել իրավաբանական անձի մի քանի կազմակերպարավական ձևեր:

¹⁴⁴ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխատությունը, էջ 46:
¹⁴⁵ Ընդունվել է 23.10.2001թ., ուժի մեջ մտել՝ 03.12.2001թ., ՀՀՊՏ 2001.12.03/37(169) Հոդ.908:

Վերակազմավորմանը, որպես վերակազմակերպման առանձին ձևի, հատուկ են հետևյալ բնութագրական հատկանիշները՝

- վերակազմակերպման գործընթացում մասնակցում է միայն մեկ սուբյեկտ (վերակազմավորվող իրավաբանական անձը), որի արդյունքում շուկայական հարաբերություններին մասնակիցների կազմը և քանակը չի փոխվում ի տարբերություն վերակազմակերպման մյուս ձևերի, որոնց արդյունքում քաղաքացիաիրավական շրջանառության սուբյեկտները կամ ավելանում են (բաժանում, առանձնացում) կամ՝ պակասում (միացում, միաձուլում),

- վերակազմավորման արդյունքում մեկ իրավաբանական անձը դադարում է և դրատեղը ստեղծվում է նոր իրավաբանական անձ՝ այլ կազմակերպարավական ձևով,

- դադարած իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են նոր ստեղծված իրավաբանական անձին,

- ի տարբերություն վերակազմակերպման մյուս ձևերի՝ վերակազմավորման արդյունքում միջոցների՝ ակտիվներ, գույք, եկամուտներ, պարտքեր, վերաբաշխում տեղի չի ունենում:

Իհարկե, վերակազմավորմանը հատուկ են նաև վերակազմակերպման ընդհանուր առանձնահատկությունները՝ իրավաբանական անձի ստեղծումն ու դադարումը, համապարփակ իրավահաջորդությունը և այլն:

Վերը նշվածն ամփոփելով կարող ենք տալ վերակազմավորման իրավական բնորոշումը:

Վերակազմավորումը իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի կամ տեսակի փոփոխությունն է, որի արդյունքում վերակազմակերպվող իրավաբանական անձի բոլոր իրավունքները և պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են նոր ստեղծված այլ տեսակի կամ այլ կազմակերպարավական ձև ունեցող իրավաբանական անձին, իսկ վերակազմավորված իրավաբանական անձի մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

Իրավաբանական անձանց կողմից վերակազմավորման իրավական կառուցակարգի ընտրությունը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Օրինակ, այն կարող է կիրառվել կազմա-

կերպու թյան կողմից իր նկատմամբ վերահսկողության մեխանիզմները և պետության կողմից դրված պարտականության ներքին շրջանակը նեղացնելու նպատակով (բաց բաժնետիրական ընկերությունը կարող է վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվության մեջ ընկերության, որի արդյունքում նա այլ ևս պարտավոր չի լինի բացահայտել իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությանը կամ վարել ռեեստր): Վերակազմավորումը կարող է կիրառվել նաև կազմակերպության մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությանը թաքցնելու նպատակով (սահմանափակ պատասխանատվության մեջ ընկերությունը կարող է վերակազմավորվել փակ բաժնետիրական ընկերության, որի արդյունքում նրա բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությանը հասանելի է դառնում խիստ սահմանափակ թվով սուբյեկտների և խիստ որոշակի դեպքերում)¹⁴⁶:

Քանի որ վերակազմավորումը ենթադրում է կազմակերպարարական ձևի փոփոխություն, ուստի Հայաստանի Հանրապետության օրենսդրության նախատեսված են սահմանափակումներ մեկ կազմակերպարարական ձև ունեցող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի այլ կազմակերպարարական ձև ունեցող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի վերակազմավորվելու համար:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվության մեջ ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության և առևտրային կոոպերատիվի:

Նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվության մեջ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի:

Բանկերի մասին օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ բանկը կարող է վերակազմակերպվել բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և բանկի վերակազմավորման միջոցով: Բանկի վերակազմավորումը

¹⁴⁶ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի համաձայն բաժնետիրական ընկերության բաժնետերերի և նրանց բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկատվությանը համարվում է ծառայողական տեղեկատվություն, որը նույն օրենքի 98-րդ հոդվածի համաձայն ենթակա է հրապարակման միայն խիստ որոշակի դեպքերում:

(կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է Յայաստանի Յանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Նույնպես կարգավորում է պարունակում նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Յայաստանի Յանրապետության օրենքը:

«Ներդրումային ֆոնդերի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 76-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձև ունեցող կառավարիչը կարող է վերակազմավորվել բացառապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպական-իրավական ձև ունեցող կառավարիչը կարող է վերակազմավորվել բացառապես բաժնետիրական ընկերության¹⁴⁷:

Այսպիսով, ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող են նշել, որ վերակազմավորումը առանձնահատուկ տեղ է գրավում վերակազմակերպման ձևերի շարքում, որը պայմանավորված է դրա բնույթով և իրավական բովանդակությամբ: Ի տարբերություն վերակազմակերպման մյուս ձևերի՝ կորպորացիայի վերակազմավորման դեպքում գերակայող է իրավաբանական բաղադրատարրը: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձի վերակազմավորման դեպքում տեղի են ունենում իրավաբանական անձի գործարման հիմնական կանոնների գուտ իրավական փոփոխություններ, այն դեպքում, երբ միացման կամ միաձուլման հիմնական նպատակը տնտեսվարող սուբյեկտի կապիտալի կոնսոլիդացումն է, իսկ բաժանման և առանձնացման դեպքում՝ բիզնեսի բաժանումը և կազմակերպության ապախոշորացումը: Վերակազմավորման գուտ իրավական բնույթը հաշվի առնելով առաջարկվում է սահմանել, որ նշված ձևով վերակազմակերպման դեպքում պարտատերերի՝ իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված իրավունքները չեն գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավահաջորդ իրավաբանական անձի կազմակերպիրավական ձևը կամ տեսակը պարտատերերին չի տալիս

¹⁴⁷ Այս օրենսդրական ձևակերպման մեջ հստակ ընդգծվում է այն իրողությունը, որը բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները համարվում են տնտեսական ընկերության կազմակերպիրավական ձևեր:

այն իրավաբանական հնարավորությունները, որոնք տալիս էր իրավանախորդ կազմակերպության կազմակերպատիրավական ձևը կամ տեսակը:

**ԳԼՈՒԽ 3. ՇԱՐՎԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ
ՇԱՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՍՏՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՄ**

**§ 1. Պարտատերերի իրավունքների և օրինական շահերի
պաշտպանությունը վերականգնելու գործընթացում**

Իրավաբանական անձի քորպես քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներ՝ մեծապես հետապնդելով նաև շահունյթ ստանալու նպատակ, կնքում են զանազան գործարքներ՝ ստանձնելով ինչպես իրավունքներ, այնպես էլ այդ գործարքներից բխող որոշակի պարտականություններ: Վերականգնելու գործընթացում, երբ վերականգնելու իրավաբանական անձը դադարեցնում է գործունեությունը կամ ակտիվների մի մասը փոխանցում է այլ իրավաբանական անձի, առաջ է գալիս վերականգնելու իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանության հարցը, քանի որ վերականգնելու արդյունքում կարող են ստեղծվել իրավիճակներ, երբ պարտատերերը չկարողանան ապահովել իրենց պահանջների պատշաճ բավարարում:

Վերականգնելու իրավաբանական անձի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի նաև իր պարտատերերի իրավունքները և օրինական շահերը չխախտելը, որովհետև ցանկացած վերականգնելու շոշափում է իրավաբանական անձի պարտատերերի շահերը, քանի որ պարտապանի դերում հայտնվում է փաստացի նոր սուբյեկտ, որի հետ պարտատերը, ընտրելու հնարավորություն ունենալու դեպքում, չէր կնքի պայմանագիր կամ կկնքեր եականորեն տարբերվող պայմաններով¹⁴⁸:

Այդ հանգամանքներն էլ հաշվի առնելով քաղաքացիական օրենսգրքով սահմանվում են իրավաբանական անձի

¹⁴⁸ Տե՛ս **Соменков С.А.** Судьба договоров при реорганизации юридических лиц // Законы России: опыт, анализ, практика. 2006. № 8, էջ 27:

վերակազմակերպման դեպքում պարտաւերերի իրավունքների պաշտպանութան երաշխիքները:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը, իսկ սույն օրենսգրքի 63 հոդվածի 2-րդ կետում նախատեսված դեպքերում՝ արտաքին կառավարիչը, պարտավոր են այդ մասին գրավոր տեղեկացնել վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտաւերերին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտաւերն իրավունք ունի պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ դադարեցնել ու վերակազմակերպումը կամ վաղաժամկետ կատարել ու պարտավորությունը, որով պարտապանը վերակազմակերպվող իրավաբանական անձն է, և հատուցել ու վնասները:

Փաստորեն, վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտաւերերի իրավունքների պաշտպանութան համար կարևոր նշանակություն է ձեռքբերում իրավաբանական անձի վերակազմակերպման մասին պարտաւերերին տեղեկացնել ու հարցը:

Ինչպես երևում է Քաղաքացիական օրենսգրքի ձևակերպումից իրավաբանական անձի հիմնադիրների կամ լիազորված այլ անձանց համար որևէ ժամկետ պարտաւերերին տեղեկացնել ու համար սահմանված չէ: Նման դեպքում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ պարտաւերերը իրավաբանական անձի վերակազմակերպման մասին կիմանան միայն վերակազմակերպման ավարտին, որի արդյունքում հնարավորություն չեն ունենա իրացնել ու իրենց իրավունքներն ամբողջ ծավալով:

Պարտաւերերին ժամանակին ծանուցել ու հանգամանքը կարևոր են ան նրանով, որ բոլոր դեպքերում իրավաբանական անձի վերակազմակերպումը պարտաւերերի համար միշտ պարունակում է որոշակի ռիսկեր, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ իրավաբանական անձը պարտաւերերի առջև ունեցած պարտավորությունները փոխանցի իր առավել քիչ «ապահովված»

իրավահաջորդին կամ միացման և միաձուլման արդյունքում պարտատերերի թիվը կարող է ավելանալ, ինչը միշտ չի ուղեկցվում նաև իրավաբանական անձի գույքի ավելացմամբ¹⁴⁹: Նման դեպքերում առաջանում է իրավաբանական անձի պարտատերերի շահերի արդյունավետ պաշտպանության խնդիրը, որի ապահովման երաշխիքներից մեկը պարտատերերին ծանուցելու համար հստակ ժամկետներ սահմանելն է:

Այդ կապակցությամբ պետք է նշել, որ Նախագծով փորձ է արվել լուծում տալ քննարկվող խնդրին: Մասնավորապես, սահմանվել է, որ իրավաբանական անձի վերակազմակերպման մասին որոշում կայացրած հիմնադիրները կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված մարմինը վերակազմակերպման մասին որոշումը կայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին և վերակազմակերպման մասին պետական գրանցամատյանում գրառում կատարելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում վերակազմակերպվող իրավաբանական անձը վերակազմակերպման մասին գրավոր ծանուցում է իրավաբանական անձի պարտատերերին, ինչպես նաև իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում վերակազմակերպման ձևի, վերակազմակերպման մասնակից, դրա արդյունքում ստեղծվող իրավաբանական անձանց, պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և պայմանների մասին: Փաստորեն, Նախագծով որոշակի առումով կարգավորվում է պարտատերերին ծանուցելու գործընթացը՝ ձեռքբերելով ավելի համակարգված և կանխատեսելի բովանդակություն տվյալ իրավական նորմի հասցեատերերի համար:

Չետաքրքիր է, որ իր տարբերությունն քաղաքացիական օրենսգրքի, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը սահմանում է ինչպես պարտատերերին ծանուցելու կոնկրետ ժամկետներ, այնպես էլ ծանուցման բովանդակությունը: Այսպես, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընկերության վերակազմակերպման մասին

¹⁴⁹ Ст'ю Гражданское право. Учебник. Т.2 Под. ред. Суханова Е.А. // М., БЕК, 1993. Стр 201:

որոշումն ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ՝ վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև Ընկերության պարտավորությունների իրավահաջորդության մասին:

Բնական է, որ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի կարգավորումները կարող են տարածվել միայն բաժնետիրական ընկերությունների մասնակցությամբ վերակազմակերպումների վրա, հետևաբար այլ կազմակերպարավական ձև ունեցող իրավաբանական անձիք առաջնորդվելով Քաղաքացիական օրենսգրքի գործող կարգավորումներով, կարող են ստեղծել պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խաթարման իրական հնարավորություն:

Մասնավորապես, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության վերակազմակերպումն իրականացվում է Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով: Այսինքն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերակազմակերպման դեպքում, ըստ էության, ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, բացակայում է պարտատերերին ծանուցելու կարգի և ժամկետների մասին որևէ կարգավորում:

Նույնպիսի իրավիճակ է առկա նաև պարտատերերի կողմից համապատասխան պահանջները ներկայացնելու ժամկետների կարգավորման տեսանկյունից: Քաղաքացիական օրենսգրքը որևէ դրույթ չի պարունակում այն մասին, թե ծանուցումը ստանալուց հետո ինչ ժամկետներում են կարող պարտատերերը ներկայացնել իրենց պահանջները: Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը սահմանում է, որ պարտատերերը վերակազմակերպող ընկերությանը պահանջներ կարող են ներկայացնել միացման և միաձուլման դեպքում ծանուցման պահից 30 օրվա ընթացքում, իսկ բաժանման դեպքում՝ 60 օրվա ընթացքում: Իհարկե, անհասկանալի է օրենսդրի նման մոտեցումը, երբ նախատեսում է պահանջների

ներկայացման տարբեր ժամկետներ, այնուամենայնիվ այդ ժամկետների առկայությունն արդեն իսկ ապահովում է պարտատերերի կողմից իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունը:

Պետք է նշել, որ Նախագծով Քաղաքացիական օրենսգրքում առկա այս իրավակարգավորման բացը ևս լրացվում է, մասնավորապես, սահմանվում է, որ պարտատերերն իրենց պահանջները կարող են ներկայացնել գրավոր ծանուցումը ստանալուց հետո 40 օրվա ընթացքում, ընդ որում՝ անկախ վերակազմակերպման ձևից:

Պարտատերերին վերակազմակերպման մասին անհրաժեշտ և բավարարող տեղեկատվության տրամադրումը ևս հանդիսանում է նրանց իրավունքների ապահովման կարևոր երաշխիք: Ինչպես նշում են քաղաքացիագետները՝ պարտատերերը պետք է պատկերացում կազմեն վերակազմակերպման ձևի, վերակազմակերպման մասնակիցների, դրանց գույքային վիճակի, ինչպես նաև վերակազմակերպման այլ պայմանների մասին և միայն նման տեղեկատվությանը տիրապետելու դեպքում պարտատերերը կարող են կողմնորոշվել իրենց հետագա վարքագիծը կառուցելու հարցում՝ պահանջել պարտավորությունների կատարում, թե շարունակել հարաբերությունները իրավահաջորդի հետ¹⁵⁰:

Այդ կապակցությամբ պետք է նշել, որ Նախագծով նախատեսվում է Քաղաքացիական օրենսգրքով հստակ սահմանել, թե ինչ պետք է պարունակի պարտատերերին ուղղված ծանուցումը: Մասնավորապես, սահմանվում է, որ վերակազմակերպման վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի տեղեկություններ վերակազմակերպման և վերակազմակերպմանը մասնակցող, դրա արդյունքում ստեղծվող յուրաքանչյուր իրավաբանական անձի, վերակազմակերպման ձևի, պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման կարգի և պայմանների մասին, ինչպես նաև այլ տեղեկություններ:

Համեմատական անցկացնելով արտասահմանյան երկրների օրենսդրության հետ պետք է նշել, որ Նախագծով սահմանվող

¹⁵⁰ Տե՛ս **Шапкина Г.С.** Новое в российском акционерном законодательстве (изменения и дополнения Федерального закона «Об акционерных обществах») // Экономика и жизнь. 2002, № 2: 188:

կարգավորումներն ավելի համահունչ են միջազգային զարգացման տենդենցներին, քան Քաղաքացիական օրենսգրքով տրված սահմանումները: Այսպես, օրինակ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով նույնպես սահմանվում է, որ իրավաբանական անձը վերակազմակերպման մասին որոշում կայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է այդ մասին հայտնի պետական գրանցում իրականացնող մարմնին, իսկ գրառումը կատարելուց հետո յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հայտարարությունն վերակազմակերպման մասին, որը պետք է պարունակի այն նույն տեղեկությունները, որոնք սահմանված են Նախագծի կարգավորումներով: Ընդ որում, պետք է նկատել, որ ռուսական օրենսդրությունը չի պարտավորեցնում իրավաբանական անձին իր վերակազմակերպման մասին գրավոր առանձին ծանուցել նաև պարտատերերին, քանի որ ըստ էության յուրաքանչյուր մասին հրապարակվող համապատասխան տեղեկություններ պարունակող հայտարարությունը (պետական ռեգիստրում ևս հրապարակվում է այդ մասին տեղեկատվություն) բավարարող բոլոր է պարտատերերի համար տեղեկանալու իրավաբանական անձի վերակազմակերպման մասին¹⁵¹:

Ինչպես արդեն նշվեց Քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման ժամկետ, իսկ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը նախատեսում է նման պահանջներ ներկայացնելու երկու տարբեր ժամկետներ՝ 60 օր միացման և միաձուլման դեպքում, 30 օր՝ բաժանման և առանձնացման դեպքում, միաժամանակ Նախագծով սահմանվում է 40 օրյա ժամկետ վերակազմակերպման բոլոր ձևերի (բացառությամբ վերակազմավորման, քանի որ Նախագծի համաձայն վերակազմավորման դեպքում պարտատերերի շահերի պաշտպանության դրույթները չեն գործում) համար:

Պարտատերերի պահանջների ներկայացման համար կոնկրետ ժամկետ սահմանելը բխում է առաջին հերթին վերակազմակերպվող իրավաբանական անձի շահերից, քանի որ հակառակ դեպքում

¹⁵¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Гражданский кодекс Российской Федерации, 30 ноября 1994 года N 51-ФЗ, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142, հոդված 60:

վերակազմակերպման գործընթացն անհարկի կկատարվի անորոշ ժամանակով, քանի որ ժամկետի բացակայության դեպքում պարտատերերը կարող են բողոքել առայն, որ վերակազմակերպումն ավարտվել է առանց իրենց պահանջեր ներկայացնելու իրավունք տրամադրելու:

Այդ կապակցությամբ պետք է նշել, որ ինչպես պարտատերերին ծանուցելու, այնպես էլ պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու համար կոնկրետ ժամկետները սահմանելը արդարացված է, իսկ Նախագծով սահմանված ժամկետներն, ըստ էության, ապահովում են քննարկվող իրավակարգավորումների որոշակիությունն ու կանխատեսելիությունը:

Մինևնույն ժամանակ, քննարկման կարիք ունեն այն դեպքերը, երբ պարտատերերը սահմանված ժամկետում չեն իրացնում այն իրավունքները, որոնք պայմանավորված են պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպմամբ:

Նախպետք է նշել, որ Քաղաքացիական օրենսգրքով պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար ժամկետներ սահմանելն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ գործող օրենսդրության, այդ թվում՝ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման ժամկետների երկարացման կամ հետաձգման հնարավորությունն չի նախատեսում, ինչպես վերակազմակերպման գործընթացում, այնպես էլ ցանկացած պարտավորության վաղաժամկետ կատարում կամ պարտավորության դադարեցում պահանջելիս: Նման ժամկետների ավարտից հետո պահանջի սուբյեկտիվ իրավունքը դադարում է ոչ թե դրա իրացմամբ կամ բավարարման անհնարինությունամբ, այլ այն պատճառով, որ օրենքը նման պահանջի իրավունքի իրացումը պայմանավորում է որոշակի ժամկետով¹⁵²: Կարելի է ենթադրել, որ եթե օրենքով նախատեսվում են որոշակի իրավունքի իրացման ժամկետներ, ընդ որում այդ իրավունքների իրացումը կապված է պարտապանի իրավունքների սահմանափակման հնարավորության հետ, ապա նշված ժամկետները

¹⁵² Տե՛ս Փридман Н.П., Сроки в гражданском праве. М., 1986, էջ 26:

բաց թողնելուց հետո պարտատերը զրկվում է նման պահանջ ներկայացնելու իրավունքից: Կարևոր է նկատել, որ պարտատերը զրկվում է ընդամենը պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված պահանջներ ներկայացնելու, այլ ոչ թե հիմնական պարտավորության կատարում պահանջելու իրավունքից:

Այլ կերպ ասած, պարտատիրոջ կողմից սահմանված ժամկետներում պահանջներ չներկայացնելու դեպքում, նրա նման վարքագիծը թույլ է տալիս ենթադրել, որ վերջինս համաձայնվել է պարտքի փոխանցմանը: Պետք է նշել, որ իրավաբանական անձի վերակազմակերպման համար որևէ պարտատիրոջ համաձայնություն չի պահանջվում, սակայն պարտքի փոխանցման համար Քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի պարտապանը անպայման պետք է ստանա պարտատիրոջ համաձայնությունը:

Վերակազմակերպման դեպքում, ըստ էության, տեղի է ունենում պարտքի փոխանցում, քանի որ պարտապանը դուրս է գալիս իրավահարաբերությանից և նրան փոխարինում է իրավահաջորդը՝ պարտատիրոջ համար այլ պարտապան: Ուստի, քաղաքացիական օրենսդրության համակարգային վերլուծության, ինչպես նաև վերակազմակերպման ինստիտուտի առանձնահատկությունների հիման վրա առաջարկում ենք սահմանել, որ բոլոր այն դեպքերում, երբ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերը սահմանված ժամկետում չեն իրացնում պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված իրավունքները, նրանք զրկվում են այդ պահանջները վերակազմակերպման գործընթացում ներկայացնելու իրավունքից, այդ թվում՝ վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդներին, և համաձայնվում են վերակազմակերպվող իրավաբանական անձի հետ ունեցած պարտավորական հարաբերությունները շարունակել վերջինիս իրավահաջորդի հետ նույն պայմաններով կամ պարտատիրոջ և նոր պարտապանի միջև համաձայնեցված այլ ձևով:

Վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանության երաշխիքների ուսումնասիրության ժամանակ չի կարելի շրջանցել նաև այն

հարցը, թե ինչ է լինում այն դեպքում, երբ պարտապանը մինչև վերականգնվելու պահին անարտոն առանց օբյեկտիվ պատճառների (օրինակ գույքի անբավարարություն) չի բավարարում պարտատերերի պահանջները: Օրենսդրությամբ նման կարգավորումներ նախատեսվել են թույլ կտա խուսափելու այնպիսի դեպքերից, երբ պարտատերերի իրավաչափ պահանջները չեն բավարարվի ինչպես վերականգնվելու ժամանակ, այնպես էլ դրանից հետո:

Քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև հատուկ իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված հարցը բավականաչափ կարգավորված չէ: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կանոնադրությունների հետ միասին փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը չներկայացնելը, ինչպես նաև դրանցում վերականգնված իրավաբանական անձի գույքի և պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը կամ գույքի և պարտավորությունների անհամասնական բաշխումը հիմք է վերականգնված պայմանավորված պետական գրանցումների մերժման համար¹⁵³:

Քաղաքացիական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բաժանիչ հաշվեկշիռը հնարավորություն չի տալիս որոշել վերականգնված իրավաբանական անձի իրավահաջորդին, ապա նոր առաջացած իրավաբանական անձինք վերականգնված իրավաբանական անձի պարտավորությունների համար նրա պարտատերերի աջակցում են համապարտպատասխանատվություն:

Նշված կարգավորումները թերի են և չեն պատասխանում այն հարցին, թե արդյոք իրավաբանական անձի վերականգնված ընթացքում պարտատիրոջ կողմից ներկայացված, սակայն չբավարարված պահանջները (օրինակ՝ պարտավորության դադարեցում կամ վաղաժամկետ կատարում և վնասների հատուցում

¹⁵³ Այս իրավակարգավորումը թերի է, որի արդյունքում կարող են լինել դեպքեր, երբ փոխանցման ակտում միտումնաբեր չնշվեն որոշակի պարտավորություններ, իսկ իրավասու գրանցող մարմինն իրավասու չէ ստուգելու բոլոր պարտավորությունների իրավահաջորդության հարցը: Ուստի Նախագծով սահմանվում է, որ փոխանցման ակտը պետք է դրույթներ պարունակի ոչ թե պարզապես վերականգնված իրավաբանական անձի գույքի և պարտավորությունների իրավահաջորդության մասին, այլ իրավաբանական անձի բոլոր պարտավորությունների մասին:

պահանջելը) իրավահաջորդությունը անցնում են նոր ստեղծված իրավաբանական անձանց, թե այդ պահանջները համարվում են վերացած և իրավահաջորդին են անցնում միայն հիմնական պարտավորությունները:

Նշված խնդիրը քննարկելն է նախադի կարգավորումների շրջանակներում: Մասնավորապես, վերջինը սահմանում է, որ փոխանցման ակտը պետք է դրույթներ պարունակի վերակազմակերպվող իրավաբանական անձի բոլոր պարտավորությունների մասին, հակառակ դեպքում վերակազմակերպման պետական գրանցումը կմերժվի:

Վերակազմակերպման գործընթացում վերակազմակերպվող իրավաբանական անձը համարվում է իրավունքի լիարժեք սուբյեկտ և կրում է այն պարտավորությունների կատարման պարտականությունը, որոնց կատարման ժամկետը լրացել է (օրինակ՝ վարկի հերթական մարումը կատարելու պարտականությունը չի կարող չկատարվել միայն անպատճառաբանությամբ, որ պարտապան իրավաբանական անձը վերակազմակերպվում է), հետևաբար մինչև վերակազմակերպման ավարտը գոյություն ունեցող, այդ թվում վերակազմակերպման ընթացքում ծագած վերակազմակերպվող իրավաբանական անձի բոլոր պարտավորությունները պետք է արտացոլվեն փոխանցման ակտում¹⁵⁴: Վերակազմակերպման ընթացքում վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի կողմից ներկայացված պահանջների բավարարումը ևս համարվում է իրավաբանական անձի պարտավորությունը, հետևաբար ստացվում է, որ չբավարարման դեպքում դրանք ևս պետք է արտացոլվեն փոխանցման ակտում:

Միաժամանակ, պարտատերերի վերակազմակերպմամբ պայմանավորված իրավունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կամ առնվազն դրանցից ոչ բոլորը կարող են իրավահաջորդության առարկա հանդիսանալ, մասնավորապես վերակազմակերպումը դադարեցնելու պահանջը բնականաբար չի

¹⁵⁴ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերություններին արդի հիմնարկները Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ատենախոսություն դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2014, էջ 112:

կարող անցնել իրավահաջորդությամբ, քանի որ վերականգնական ավարտից հետո նման պահանջ ներկայացնելն անտրամաբանական է:

Ինչ վերաբերում է մնացած պահանջներին՝ պարտավորություններին կատարման լրացուցիչ երաշխիքներ պահանջելուն, պարտավորությունը վաղաժամկետ կատարելուն և վնասները հատուցելուն, ապա պետք է նշել, որ դրանք կարող են իրավահաջորդությամբ փոխանցվել նոր ստեղծված (գործունեությունը շարունակող՝ առանձնացման դեպքում) իրավաբանական անձանց: Նշվածի արդյունքում կարելի է ենթադրել, որ այն դեպքերում, երբ բաժանիչ հաշվեկշիռը հնարավորություն է չի տալիս որոշելու իրավաբանական անձի պարտավորություններին, այդ թվում՝ վերականգնական պայմանավորված ներկայացված պահանջների բավարարման պարտավորություններին, իրավահաջորդներին, ապա նոր ստեղծված (գործունեությունը շարունակող՝ առանձնացման դեպքում) իրավաբանական անձիք այդ պարտավորություններով կրում են համապարտ պատասխանատվություն:

Քննարկվող հարցի վերաբերյալ հետաքրքիր կարգավորումներ է պարունակում ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը: Մասնավորապես, նշված օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե պարտավորությունը վաղաժամկետ կատարելուն և դրա արդյունքում առաջացած վնասները հատուցելու պարտադրոջ պահանջը չի բավարարվել, ապա պարտադրոջ առջև իրավահաջորդ իրավաբանական անձանց հետ համապարտ պատասխանատվություն են կրում նաև այն անձիք, ովքեր հնարավորություն ունեն կանխորոշելու վերականգնական իրավաբանական անձի գործողությունները և որոշումները և ում գործողությունները նպաստել են պարտատերերի պահանջները չբավարարելուն:

Ինչպես արդեն նշվեց, իրավաբանական անձի վերականգնական դեպքում վերականգնական իրավաբանական անձի պարտատերերն իրավունք ունեն պահանջելու՝

- պարտավորություններին կատարման լրացուցիչ երաշխիքներ,
- դադարեցնելու վերականգնական պայմանավորված,

• վաղաժամկետ կատարելու պարտավորությունը, որով պարտապանը վերակազմակերպվող իրավաբանական անձն է, և հատուցելու վնասները:

Նշված իրավունքներից ուշադրության արժանի են պարտավորությունը վաղաժամկետ կատարելու, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով նախատեսված` պարտավորությունը դադարեցնելու և դրանց հետկապված վնասների հատուցում պահանջելու պարտատիրոջ իրավունքները:

Քաղաքացիական օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն` պարտապանն իրավունք ունի պարտավորությունը կատարել ժամկետից շուտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ չի բխում պարտավորության էությունից: Պարտավորությունների վաղաժամկետ կատարումը` կապված դրանց կողմերի ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ պարտավորությունը ժամկետից շուտ կատարելու հնարավորությունը նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ բխում է գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Այսինքն, օրենսդիրը նախատեսել է պարտավորությունների կատարման երկու առանձին պայմաններ: Մի դեպքում, երբ խոսք է գնում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված պարտավորությունների հետ, ապա պարտավորությունը ժամկետից շուտ կատարելը թույլատրվում է, եթե դա արգելված չէ օրենքով կամ չի բխում պայմանագրից կամ պարտավորության էությունից, իսկ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությունների դեպքում գործում է հակառակ սկզբունքը: Օրենքը նախատեսում է վերակազմակերպման դեպքում պարտավորությունների վաղաժամկետ կատարման հնարավորությունը` պայմանով, որ այդ կատարումը պահանջել է հենց պարտատերը, ուստի այս կարգավորումների տեսանկյունից Քաղաքացիական օրենսգրքի 66-րդ և 353-րդ հոդվածների միջև հակասություն առկա չէ:

Քաղաքացիագետները գտնում են, որ պարտատերերի վերը նշված իրավունքները հանդիսանում են պարտատերերի իրավունքների երաշխավորման կարևոր նախապայման: Այսպես, Շերշենևիչը գտնում էր, որ միանուն վող ընկերակցությունների պարտատերերին չի կարող չտրամադրվել իրավունք պահանջելու, որպեսզի գույքը, որը նրանք վստահել են ընկերակցությանը, ծառայի իրենց շահերի բավարարմանը, մինչև կանցնի այլ անձի¹⁵⁵:

Գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող իրավունքները պարտատերերը կարող են իրացնել անկախ այն հանգամանքից, թե վերակազմակերպումն ազդում է իրենց տնտեսական շահերի վրա և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող ընկերությունները կարող են պատշաճ կարգով կատարելու պարտավորությունը:

Տեսաբանների կարծիքով նման իրավիճակը ստեղծում է որոշակի անհավասարակշռություն և վերակազմակերպվող իրավաբանական անձի և վերջինիս պարտատերերի շահերի միջև¹⁵⁶: Այդ կապակցությամբ որոշ տեսաբաններ մշակել են քննարկվող խնդրի լուծման տարաբնույթ տարբերակներ, որոնց մեջ կարելի է տեսնել նաև այնպիսի տարբերակներ, երբ առաջարկվում է իրավաբանական անձի պարտատերերին ծանուցել ոչ թե իրական վերակազմակերպման, այլ միայն հնարավոր վերակազմակերպման մասին՝ պարզելու համար այն պարտատերերին, որոնք կարող են ներկայացնել իրենց պահանջները վաղաժամկետ բավարարելու պահանջ, ինչպես նաև հաշվարկելու այն գումարի կամ գույքի մոտավոր արժեքը, որն անհրաժեշտ է այդ պահանջները բավարարելու համար¹⁵⁷:

Նման մոտեցումը չի կարելի համարել արդարացված, տրամաբանական և արդյունավետ ու չի կարող ապահովագրել վերակազմակերպվող իրավաբանական անձին պարտատերերի կողմից իրենց պահանջների վաղաժամկետ կատարման պահանջի բավարարման հետ կապված ֆինանսական խնդիրներից: Առաջին հերթին, նման

¹⁵⁵ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Учебник торгового права (по изданию 1914 года) - М., Спарк, 1994, էջ 165:

¹⁵⁶ Տե՛ս **Кулешов А.В.** Защита прав и интересов кредиторов в процессе укрупнения акционерного общества // Законодательство и экономика. 2010. № 10 (318), էջ 36:

¹⁵⁷ Տե՛ս **Зайцев О.Р.** К вопросу об обоснованности признания преобразования формой реорганизации // Цивилист. 2005. № 2, էջ 85:

պարագայ ու մ որևէ երաշխիք չկա, որ այսպես կոչված «նախնական» վերակազմակերպման ժամանակ պահանջներ չներկայացրած պարտատերերը նման պահանջներ չեն ներկայացնի հենց վերակազմակերպման ժամանակ: Բացի այդ, իրավաբանական անձի նման գործողությունները կարող են բացասաբար անդրադառնալ վերջինիս մասնագիտական գործունեության վրա, մանավանդ այն դեպքում, երբ իրավաբանական անձը իրականում չվերակազմակերպվի: Նման տեղեկատվությունը իրավաբանական անձի պարտատերի, ինչպես նաև պրտենցիալ կոնտրագենտների մոտ կարող է առաջացնել պարտապան իրավաբանական անձի ներքին կորպորատիվ հարաբերությունների անկայունության և ֆինանսական խնդիրների առկայության տպավորություն: Եվ բնական է, որ նման պայմաններում պրտենցիալ կոնտրագենտները չեն ցանկանա կառուցել գործնական կապեր նման կազմակերպության հետ, իսկ առկա կոնտրագենտները կձգտեն խզել ձևավորված գործնական կապերը:

Ընդհանրապես, պարտատերերին իրենց պահանջերի վաղաժամկետ կատարում պահանջելու իրավունքը կարելի է համարել արդարացված, քանի որ ցանկացած պարտատեր, մտնելով պարտավորական հարաբերությունների մեջ, ենթադրում է նման հարաբերությունների կայունություն, քանի որ պարտապանի փոփոխությունը մեկ այլ անձով կարող է եականորեն ազդել իր օրինական շահերի բավարարման մակարդակի վրա: Պարտատիրոջ համար պարտապանի անձը կրում է կարևոր նշանակություն, քանի որ մեկ պարտապանից կարող են ակնկալել պարտավորությունների ժամանակին և պառչած կատարում, մեկ այլնից ընդհակառակը նման ակնկալիքներ չունեն, քանի որ նա ոչ մեկ անգամ խախտել է պարտավորությունը¹⁵⁸: Ուստի գտնում ենք, որ արդարացի է, երբ պարտատերը, ստանալով պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպման մասին ծանուցումը, չցանկանալով շարունակել հարաբերությունները անհայտ կոնտրագենտների հետ, հնարավորություն ունենա դադարեցնելու այդ պարտավորությունները: Եվ պարտապանը ստանալով նման պահանջ

¹⁵⁸ Ст ́у Общее учение об обязательстве / Лунц Л.А., Новицкий И.Б. - М.: Госюриздат, 1950, էջ 228:

իրավունք չունի առաջարկելու իրավիճակի լուծման այլ տարբերակներ:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ օրենսդիրը վերակազմակերպող ընկերության պարտատերերին տալով բավականին լայն իրավունքներ, հաշվի չի առել վերակազմակերպող ընկերության շահերը, քանի որ, օրինակ, այն դեպքերում, երբ պարտատիրոջ պահանջը ապահովված է գրավով, ապա հարց է ծագում, թե ինչու պետք է պարտատիրոջը իրավունք տալ ընկերության իր պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում¹⁵⁹:

Կարևոր է մատնանշել, որ քննարկվող իրավունքի առավել արդյունավետ, նպատակային և վերակազմակերպող իրավաբանական անձին հնարավորինս քիչ ծանրաբեռնելու տեսանկյունից կարևոր կարգավորում է պարունակում Նախագծի 16-րդ հոդվածը: Մասնավորապես, սահմանվում է, որ պարտատիրոջ վերը թվարկված իրավունքներից չեն կարող օգտվել այն պարտատերերը, որոնց տրամադրվել է բավարար համարվող պարտավորության կատարման ապահովում կամ պարտավորությունը ապահովված է գրավով: Ընդ որում, ապահովումը համարվում է բավարար, եթե պարտատերը համաձայնվել է ընդունել նման ապահովումը կամ պարտատիրոջը տրամադրվել է անհետկանչելի բանկային երաշխիք, որի վճարունակությունը հիմնավոր կասկածներ չի առաջացնում:

Նման կարգավորումը նախ կանխում է անխտիր բոլոր պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու հնարավորությունը, բացի այդ նվազագույնի է հասցնում նաև նման պահանջների ներկայացման արդյունքում վերակազմակերպող իրավաբանական անձի մոտ հնարավոր ֆինանսական ռիսկերի առաջացումը, ընդհուլմ` հնարավոր սնանկությունը: Գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող այս կարգավորումները կապահովեն ողջամիտ հավասարակշռություն և վերակազմակերպող իրավաբանական անձի և վերջինիս պարտատերերի շահերի միջև:

¹⁵⁹ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ իրավունքի որոշ հիմնահարցեր», Դատական իշխանություն, հունիս 2013 թ (167), էջ 63:

Պարտատերերի շահերի երաշխավորման իրավական կարգավորումների ուսումնասիրության շրջանակներում ու շարժումներն է արժանի նաև այն հանգամանքը, որ պարտատերերը իրավունք են ստանում նաև պարտապանից պահանջել ու պարտավորությունների վաղաժամկետ կատարման արդյունքում առաջացված վնասների հատուցում:

Այս հարցի կապակցությամբ տեսություն մեջ առկա են իրարամերժ տեսակետներ: Այսպես, հեղինակների մի խումբ գտնում է, որ վնասների հատուցում պահանջելու պարտադրոջ իրավունքը հակասում է քաղաքացիական դրամային, քանի որ վնասները իրավախախտման արդյունք են և դրանք վերականգնելու պայմանավորված պահանջելը կասկած է հարուցում, բացի այդ նշվում է, որ վերականգնելու չի համարվում իրավախախտում և հետևապես չի կարող հիմք հանդիսանալ հարկադրանքի միջոցների, այդ թվում՝ վնասների հատուցում պահանջելու համար¹⁶⁰:

Յեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ ընդհակառակը պարտադրոջ նման իրավունքն ամբողջությամբ համապատասխանում է քաղաքացիական իրավունքի տրամաբանությանը, մասնավորապես՝ պարտատերերի շահերի պաշտպանության տեսանկյունից¹⁶¹:

Նշված հարցին պատասխանելու համար նախ փորձենք հասկանալ ինչ է օրենսդիրը հասկանում վնաս ասելով:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Յայաստանի Յանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը: Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոցների շարքում առանձնացնում է նաև վնասների հատուցում պահանջելը:

¹⁶⁰ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Карлин А.А.** Նշված աշխատությունը էջ 135, **Коровайко А.В.** Реорганизация хозяйственных обществ. Теория, законодательство, практика: Учебное пособие, - М.: Издательство НОРМА (Издательская группа - ИНФРА-М), 2001, էջ 38:

¹⁶¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Дивер Е.П.** Правовое регулирование реорганизации коммерческих организаций: дис. ... канд. юрид. наук. - М., 2002. էջ 175, **Тарасенко Ю.А.** Кредиторы: защита их имущественных прав: Учебно-практическое пособие. - М.: ЮрКнига, 2004, էջ 78:

Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Այսինքն, օրենքը վնասի հատուցումը որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոց կիրառելը կապում է իրավունքի խախտման հետ, քանի դեռ անձի իրավունքը չի խախտվել, վնասի հատուցում պահանջելու իրավունք չի ծագում:

Պարզելու համար իրավաչափ է արդյոք, որ պարտատերը կարող է պահանջել վերականգնման երկու իրավաբանական անձ-պարտապանից վնասների հատուցում, պետք է նախևառաջ հասկանանք, թե պարտատիրոջ որ իրավունք է խախտվում վերականգնման արդյունքում:

Այն հանգամանքը, որ վերականգնման արդյունքում վերականգնման երկու իրավաբանական անձի պարտատերերը իրենց պահանջների վաղաժամկետ կատարում կամ պարտավորության դադարեցում պահանջելիս կարող են կրել վնասներ, անհերքելի է: Որպես օրինակ կարելի է բերել այն դեպքը, երբ վարկի գումարի վաղաժամկետ մարումը հանգեցնում է նրան, որ բանկը կամ վարկային կազմակերպությունը ստանում են ավելի քիչ տոկոսներ, քան ակնկալում էին պայմանագիրը կնքելիս:

Ընդհանրապես, իրավունքների պաշտպանությունն ասելով գիտնականները հասկանում են օրենսդրությամբ նախատեսված միջոցների ամբողջությունն, որոնցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտները հասնում են իրենց իրավունքների խախտումները կանխելուն, վերացնելուն, իրավունքը վերականգնելուն և

իրավունքի խախտման արդյունքում առաջացած վնասները ծածկելու¹⁶²:

Իրավունքների պաշտպանության միջոցների տակ հասկանում են նաև օրենքով նախատեսված հարկադրական բնույթի միջոցներ, որոնցով իրականացվում է խախտված (վիճարկվող) իրավունքների վերականգնումը, պաշտպանությունը և վնասների վերականգնումը¹⁶³:

Իրավունքների պաշտպանության միջոցները մարմնավորում են նաև այն անմիջական նպատակը, որը իրավունքի պաշտպանության սուբյեկտը հետապնդում է՝ ենթադրելով, որ դրանց միջոցով կարող է հասնել իր իրավունքների խախտումները կանխելու, վնասները հատուցելու կամ իրավախախտման հետևանքները որևէ այլ կերպով վերացնելու¹⁶⁴:

Այսպիսով, օրենսդրական կարգավորումների և տեսության մեջ ներկայացված տեսակետների համադրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ վնասների հատուցման իրավունքը կապվում է իրավունքի խախտման հետ: Ինչպես արդեն նշվեց, անհերքելի է, որ վերակազմակերպման գործընթացում վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերը կարող են կրել վնասներ, միաժամանակ նշված վնասները չեն հանդիսանում պարտապանի ոչ իրավաչափ վարքագծի արդյունք, քանի որ վերակազմակերպումը չի համարվում օրենքով արգելված արարք, այլ ընդհակառակը, օրենքով նախատեսված բացառություններով հանդերձ, լիովին օրինահպատակ գործողությունների ամբողջություն է ենթադրում:

Նման պարագայում առաջանում է պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռման խնդիր, քանի որ օրենսդրական թերի կարգավորումների պարագայում, երբ բոլոր պարտատերերն, ըստ էության, կարող են պահանջել պարտավորությունների վաղաժամկետ կատարում և դրա հետ կապված վնասների հատուցում

¹⁶² Տե՛ս **Брагинский М.И., Витрянский В.В.** Договорное право. Книга первая: Общие положения, М., 2001. Էջ 776:

¹⁶³ Տե՛ս **Гражданское право: учебник: в 4 т. / отв. ред. Е.А.Суханов.** Т. 1: Общая часть. М., 2005., Էջ 557, **Гражданское право / под ред. Б.М. Гонгало, Т.И.Илларионовой, В.А. Плетнева.** М., 2001. Էջ 54:

¹⁶⁴ Տե՛ս **Рожкова М.А.,** Средства и способы правовой защиты сторон коммерческого спора., М., 2006, Էջ 84:

միաժամանակ, վերակազմակերպվող իրավաբանական անձի համար կարող են առաջանալ լուրջ ֆինանսական խնդիրներ:

Բացի այդ, գործող օրենսդրությունը չի նախատեսում որոշակի չափանիշներ կամ պայմաններ, որոնք դատարանը կարող է հաշվի առնել վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի կողմից վնասների հատուցման պահանջները քննելիս՝ դրանք բավարարելու կամ մերժելու համար: Այսինքն, այն դեպքերում, երբ վերակազմակերպմամբ պայմանավորված պարտատերերը կրում են վնասներ, նրանք կարող են պահանջել այդ վնասների հատուցում՝ միայն դրանց առկայությունն ապացուցելու պայմանով: Քննարկվող հարցի վերաբերյալ դատական պրակտիկայի բացակայությունն էլ հնարավորություն չի տալիս հասկանալու, թե օրենսդրական թերի կարգավորման պայմաններում ինչպես են դատարանները լուծում տալիս նշված խնդիրներին:

Նշված խնդրի վերաբերյալ հետաքրքիր կարգավորումներ է պարունակում գերմանական իրավունքը: Մասնավորապես, սահմանվում է, որ վերակազմակերպման դեպքում վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերը ծանուցումը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում կարող են պահանջել պարտավորությունների կատարման երաշխիքներ դրանց չկատարման ռիսկերը վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու դեպքում¹⁶⁵: Այսինքն, գերմանական օրենսդրությունը, ի տարբերություն հայաստանյանի, նախատեսում է պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու որոշակի պայմաններ:

Անգլիական իրավունքում, ընդհակառակը, պարտատերերն ունեն վերակազմակերպման գործընթացի վրա ազդելու էական հնարավորություններ: Մասնավորապես, վերակազմակերպման, հիմնականում միացումների և միանումների դեպքում անհրաժեշտ է ստանալ վերակազմակերպման նախագծի վերաբերյալ պարտատերերի համաձայնությունը¹⁶⁶:

¹⁶⁵ St 'u Umwandlungsgesetz vom 28.Oktober, 1994 (BGB1. I S. 3210, (1995, 428)), das zuletzt durch Artikel 22 des Gesetzes vom 24 April 2015 (BGBl. I S. 642), **Thomas Bachner** Creditor Protection in Private Companies: Anglo-German Perspectives for a European Legal Discourse (International Corporate Law and Financial Market Regulation), Cambridge University Press, 2009, էջ 154:

¹⁶⁶ St 'u UK Companies Act, http://www.legislation.gov.uk/ukpga/2006/46/pdfs/ukpga_20060046_en.pdf:

Ընդհանրապես, երբ խոսքը գնում է գործարարական հարաբերությունների մասին, ապա անխուսափելիորեն մենք գործ ենք ունենում նաև գործարարական ռիսկի հետ, որը գործարարական գործունեության էական հատկանիշներից մեկն է:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տեսության մեջ գոյություն ունի ռիսկի բնութագրման երեք կառուցակարգ՝ օբյեկտիվ, սուբյեկտիվ և դուալ իստական:

Օբյեկտիվ տեսության համաձայն ռիսկը օբյեկտիվ իրականության երևույթ է¹⁶⁷:

Սուբյեկտիվ տեսությունը ռիսկը բնութագրում է որպես անձի հոգեբանական վերաբերմունքը իր գործողությունների կամ վարքագծի պատահական հետևանքների նկատմամբ¹⁶⁸: Դուալ իստական տեսությունը միավորում է այս երկու կառուցակարգերը և ռիսկը բնութագրում է որպես հնարավոր վնաս, իսկ դրա առաջանալու հնարավորության սպասումը սուբյեկտիվ կատեգորիա, այն դեպքում երբ ռիսկը օբյեկտիվ իրականության երևույթ է¹⁶⁹:

Պրոֆեսոր Բարսեղյանը գործարարական ռիսկը բնութագրում է որպես տնտեսվարման առանձնահատկություններով պայմանավորված և դրավրա ազդող տարաբնույթ հանգամանքների ներգործության հետևանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հնարավորության անորոշություն¹⁷⁰:

¹⁶⁷ Տե՛ս **Малеин Н.С.** Гражданско-правовое положение личности в СССР. - М.: Наука, 1975. - էջ 184, **Кабышев О.А.** Правомерность предпринимательского риска // Хозяйствои право. - 1994. - № 3. - էջ 50, **Собчак А.А.** О некоторых спорных вопросах юридической ответственности // Правоведение. - 1968. - № 1, էջ 55:

¹⁶⁸ Տե՛ս **Ойгензихт В.А.** Категория риска в советском гражданском праве / В.А.Ойгензихт // Правоведение. - 1971. - № 5. - էջ 68, **Копылов В.А.** О категории риска в гражданском праве // Защита субъективных прав: История и современные проблемы. - Волгоград: ВолГУ, 2000. - էջ 53:

¹⁶⁹ Տե՛ս **Мезрин Б.Н.** О юридической природе риска в советском гражданском праве // Гражданское право и способы его защиты: Сб. науч. тр. - Свердловск: СГУ, 1974. - էջ 48:

¹⁷⁰ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.** Գործարարական իրավունք, դատախիռք, եր., ԵՊՀ իրատ., 2009, էջ 37:

Այս ափսոսով, «ռիսկ» կատեգորիան կարելի է բնութագրել այն ափսի հասկացությունների միջոցով ինչ ափսիս են վտանգը, սպառնալիքը, հնարավորությունը: Ռիսկը միշտ այն ափսի անբարենպաստ կամ բարենպաստ հետևանքների առաջացման հնարավորությունն է, որոնք հայտնի չէ երբ տեղի կունենան¹⁷¹:

Կարելի է եզրակացնել, որ ռիսկն, ընդհանուր առմամբ, վնասներ կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ տարաբնույթ ներքին և արտաքին գործոնների ազդեցության արդյունքում:

Նման ռիսկեր առաջանում են նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացում: Ընդ որում, այդ ռիսկերը վերաբերում են ինչպես վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերին, այնպես էլ հենց վերակազմակերպվող սուբյեկտին:

Վերակազմակերպվող իրավաբանական անձը կայացնելով վերակազմակերպման մասին որոշում՝ պետք է գիտակցի, որ նման քայլը կարող է պարտատերերի մոտ առաջացնել անվստահության տարավորություն կամ որ ավելի վատ՝ պարտավորությունները կատարելուց խուսափելու հնարավորություն: Եվ, բնական է, որ պարտատերերը կցանկանան դադարեցնել իրենց հարաբերությունները տվյալ սուբյեկտի հետ:

Այսինքն, իրավաբանական անձը պետք է կանխատեսի իր որոշման հնարավոր բացասական հետևանքները կրելու ռիսկը:

Գործարարական հարաբերություններում պարտավորության պատշաճ կատարումը համարվում է գերակա նպատակ և ցանկացած պարտատիրոջ համար ամենակարևորը իր պահանջների բավարարում ստանալն է:

Իհարկե, վերակազմակերպմամբ պայմանավորված ռիսկեր առաջանում են նաև հենց պարտատերերի համար, սակայն դրանք ավելի քիչ կանխատեսելի են, քանի հենց վերակազմակերպվող իրավաբանական անձի համար սեփական վերակազմակերպմամբ պայմանավորված ռիսկերը:

¹⁷¹ Տե՛ս **Собчак А.А.** О некоторых спорных вопросах юридической ответственности // Правоведение. - 1968. - № 1, էջ 55:

Ուստի գտնում ենք, որ իրավաբանական անձի վերականգնման գործում չի կարող հանգեցնել քաղաքացիաիրավական, մասնավորապես՝ պարտավորական հարաբերությունների բնականոն ընթացքի խաթարմանը և պարտավորությունների կատարումը պետք է գերակալինի սեփական բիզնեսի զարգացման կամ վերականգնման ցանկությունից:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ իրավաբանական անձի վերականգնման քաղաքացիական կամ քիմիական ազատարտահայտման արդյունք է, այդ թվում՝ պայմանավորված որոշակի տնտեսական պայմանների փոփոխությամբ, ապա այդ վերականգնման գործը պարտավորված է ավարտվել այնքան ժամանակ, քանի դեռ պարտատերերի պահանջները բավարարված չեն: Այսինքն, կամ այդ պարտատերերին պետք է տարամարդվեն այնպիսի երաշխիքներ, որոնք պարտատերերն ընդունելով կհամաձայնվեն պարտքի փոխանցմանը կամ վերականգնմանը պետք է կասեցվի մինչև պարտավորության պատշաճ կատարումը:

Քաղաքացիական օրենսգիրքը և Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը չեն առանձնացնում պարտատերերի իրավունքների պաշտպանության մեխանիզմները կամավոր և հարկադիր վերականգնման դեպքերում, որպիսի մոտեցումը համարում ենք չարդարացված հետևյալ հանգամանքների հաշվառմամբ:

Հարկադիր վերականգնման իրականացում է իրավաբանական անձի կամ քիմիական կախստի հանդիսանում է պետություն վերաբերմունք կատարված իրավախախտմանը, հետևապես ինչպես ցանկացած իրավախախտման դեպքում, այս պարագայում էլ հետապնդում է հանրային շահերի պաշտպանության նպատակ¹⁷²:

Ֆրանսիայում, օրինակ, որտեղ առկա են իրավաբանական անձի վերականգնման դեպքում պարտատերերի իրավունքների երաշխավորման գործուն համակարգեր, վերջիններս չունեն իրենց պահանջներով վերականգնման իրականացման գործընթացին խոչընդոտելու էական հնարավորություն: Մասնավորապես, երբ

¹⁷² Նշված մասին առավել մանրամասն տե՛ս սույն աշխատանքի 2-րդ գլխի 2-րդ պարագրաֆում:

պարտաւերերը ներկայացնում են իրենց առարկութեան ներքին վերակազմակերպման վերաբերյալ, դա դեռ չի նշանակում, որ առաջադրված պահանջները անպայմանորեն պետք է անմիջապէս կատարվեն, եթե դա կարող է հանգեցնել կազմակերպութեան ֆինանսական վիճակի վատթարացմանը և սահմանափակել կազմակերպութեան արդյունավետ վերակազմակերպում կատարելու հնարավորութեանը¹⁷³:

Գտնում ենք, որ օրենսդրութեամբ պետք է նախատեսել հարկադիր վերակազմակերպման դեպքում պարտաւերերի շահերի երաշխավորման այլ կարողակարգեր՝ հարկադիր վերակազմակերպման արդյունավետ իրականացումը և այդ գործընթացում պարտաւերերի իրավունքների պաշտպանութեան նախահովելու համար:

Մասնավորապէս, պարտաւերերը չպետք է իրավունք ստանան պահանջելու վերակազմակերպման դադարեցում, իսկ բոլոր այն դեպքերում, երբ իրենց պահանջները մինչև վերակազմակերպման ավարտը չեն բավարարվում, ապա չպետք է իրավունք ստանան դատական կարգով պահանջելու վերակազմակերպման կասեցում կամ այլ կերպ խոչընդոտելու դրա ավարտին: Հակառակ, պարագայում, երբ օրինակ, պարտաւերը պահանջում է դադարեցնել վերակազմակերպումը կամ մինչև իր պահանջների բավարարումը արգելել պարտապան իրավաբանական անձին վերակազմակերպվել (նման պահանջ կարող է ներկայացվել հայցի ապահովման միջոցների շրջանակում), կարող են առաջանալ հարադիր վերակազմակերպման ողջամիտ ժամկետում իրականացման ռիսկեր, որի արդյունքում հարկադիր վերակազմակերպումը չի հասնի նախանշված նպատակին: Այսինքն, երբ որևէ իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպումն անհրաժեշտ է իրականացնել որոշակի ժամկետում Սահմանադրութեամբ և օրենքով ամրագրված հանրային շահերի ապահովման նպատակով և վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտաւերերի կողմից իրենց իրավունքների իրացումն ապահովելը բացառում է նախանշված ժամկետում և կարգով իրականացնել հարկադիր վերակազմակերպումը, վտանգվում է հանրային շահերի ապահովման սահմանադրաիրավական կարողակարգը:

¹⁷³ Տե՛ս https://www.legifrance.gouv.fr/telecharger_pdf.do?cidTexte=LEGITEXT000005634379:

Մյուս կողմից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրության ընթացքում տալիս, որ պահանջի իրավունքը որոշ դեպքերում կարող է դիտարկվել նաև սեփականության իրավունքի համատեքստում, այն դեպքերում, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար: «Օրինական սպասելիքը» առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքի¹⁷⁴:

Ուստի գտնում ենք, որ հարկադիր վերակազմակերպման գործընթացի անխաթար իրականացման և պարտատերերի իրավունքների ապահովման միջև ողջամիտ հավասարակշռություն և ապահովելու նպատակով անհրաժեշտ է քաղաքացիական օրենսգրքով առանձնացել պարտատերերի իրավունքների շրջանակը հարկադիր վերակազմակերպման դեպքում: Մասնավորապես, պարտատերերը պետք է իրավունք ստանան պահանջելու միայն պարտավորությունների վաղաժամկետ կատարում, պարտավորության դադարում և դրանց հետ կապված վնասների հատուցում, պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, ինչպես նաև երաշխիքներ առայն, որ վերակազմակերպման արդյունքներից անկախ նրանց՝ վերակազմակերպման գործընթացի ժամանակ ներկայացված վերը նշված և չբավարարված պահանջները ապագայում կբավարարվեն՝ առանց վերակազմակերպման գործընթացի դադարեցնելու կամ կասեցնելու հնարավորության: Իսկ այն դեպքերում, երբ վերակազմակերպման գործընթացում պարտատերերի պահանջները չեն բավարարվի, ապա այդ պահանջները բավարարելու պարտավորությունը պետք է անցնի վերակազմակերպված սուբյեկտի իրավահաջորդներին՝ բաժանիչ հաշվեկշռի հիման վրա, իսկ եթե

¹⁷⁴ Նշվածի մասին առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի նոյեմբերի 20-ի Պրեսոնս Կոմփանի Նավեյրան ընդդեմ Բելգիայի գործով վճիռը, ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. թիվ ԳԴ/0171/02/08, 29.07.2011թ. թիվ ԳԴ1/0145/02/10, 19.10.2012թ. թիվ ԵԾԴ/0177/02/11 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումը:

որոշակի պարտավորության մասով հնարավոր չի լինի որոշել իրավահաջորդին, ապա բոլոր իրավահաջորդները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն:

§ 2. Վերականգնման պարտավորությունը իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերականգնման գործընթացում շոշափվում են տարբեր անձանց շահեր և իրավունքներ, որոնց շարքում նաև՝ հենց վերականգնման պարտավորությունը իրավաբանական անձի մասնակիցների շահերը և իրավունքները:

Վերականգնման պարտավորությունը հանդիսանում է կոմպլեքս ինստիտուտ, որն առաջացնում կամ կարող է առաջացնել տարաբնույթ հետևանքներ: Մի դեպքում՝ տեղի է ունենում կազմակերպության ընդլայնում, այլ դեպքում՝ գործունեության բաժանում կամ դիվերսիֆիկացում և այդ ամենը շատ հաճախ ուղեկցվում է վերականգնման պարտավորություն իրավաբանական անձի դադարմամբ: Ինչպես արդեն նշել ենք սույն աշխատանքում՝ վերականգնման պարտավորություն իմաստով իրավաբանական անձի ստեղծման և դադարման գործընթացների համալիր ինստիտուտ է: Եվ թվարկված բոլոր դեպքերում առաջ է գալիս վերականգնման պարտավորություն մասնակիցների շահերը երաշխավորելու անհրաժեշտություն, որը կարող է պայմանավորված լինել տարաբնույթ հանգամանքներով:

Այսպես, կարող են լինել իրավիճակներ, երբ կազմակերպության մասնակիցները չեն մասնակցում վերականգնման հարցի քննարկման համար հրավիրված ընդհանուր ժողովին, դեմ են քվեարկում այդ որոշմանը կամ վերականգնման պարտավորություն կատարվող արժեթղթերի փոխարկման ընթացքում խախտվում են արժեթղթերի սեփականատերերի իրավունքները:

Նման իրավիճակներում կազմակերպության մասնակիցների շահերն ապահովելու համար օրենսդրությամբ նախատեսվում են որոշակի երաշխիքներ:

Տեսություն մեջ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերականգնման ընթացքում կազմակերպության մասնակցի մոտ

ծագող իրավունքներն իրենց էությունը ամբ համարվում են կորպորատիվ իրավունքներ: Տեսություն մեջ չկա հստակ մոտեցում կորպորատիվ իրավունքների հասկացության և շրջանակների վերաբերյալ, իսկ օրենսդրությունն ընդհանրապես չի բանաձևում այդ հասկացությունը: Հեղինակների մի խումբ կորպորատիվ իրավունքները բնութագրում է որպես կորպորացիայի մասնակից հանդիսանալու և այդ մասնակցի՝ իրավաբանական անձի կազմակերպչական ձևով պայմանավորված իրավական հնարավորությունների ամբողջություն¹⁷⁵: Հեղինակների այլ խումբ նման իրավունքները բնութագրում է որպես մասնակցի՝ պետության կողմից պահպանվող հնարավորությունը օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով ամրագրված սահմաներում և կարգով կատարվող գործողությունների ամբողջություն¹⁷⁶:

Կորպորատիվ իրավունքների առավել ընդգրկուն և ամբողջական հասկացություն է առաջարկում պրոֆեսոր Վ. Ավետիսյանը: Վերջինս մասնավորապես, նշում է, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մասնակցի կորպորատիվ իրավունքներն այն իրավագործությունների ամբողջությունն են, որոնք օրենքով, այլ իրավական ակտերով և կորպորացիայի հիմնադիր փաստաթղթերով վերապահվում են մասնակցին՝ որպես կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի կրողի¹⁷⁷:

Սույն պարագրաֆում ուսումնասիրության առարկան են կազմում կորպորացիայի մասնակցի կորպորատիվ այն իրավունքները, որոնց իրացումը պայմանավորված է վերակազմակերպման գործընթացով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ կապված վերակազմակերպվող իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների ապահովման երաշխիքների հետ:

¹⁷⁵ Տե՛ս **Васильева В.А.** Проблемы развития корпоративного права, Частное право, 2013, No1/13, էջ 151: **Кравчук В.М.** Корпоративное право, К.: Истина, 2005, էջ 527:

¹⁷⁶ Տե՛ս **Могилевский С.Д.** Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջ 101:

¹⁷⁷ Տե՛ս **Ավետիսյան Վ. Ռ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնադրամբ Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ իրատ., Եր., 2013, էջ 186:

Նախ պետք է նշել, որ Քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված դրամասնակիցների իրավունքների շրջանակում դրանց ապահովման և պաշտպանության մեխանիզմներ, բացի Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված իրավունքների պաշտպանության եղանակներից:

Նշվածը իր հերթին փաստում է, որ օրենսդիրը վերակազմակերպվող իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների երաշխիքները սահմանել է կամ պետք է սահմանի դրանց առանձին տեսակները կարգավորող հատուկ օրենքներով:

Այսպես, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության վերակազմակերպման որոշմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերև իրավունք ունի պահանջել բաժնետոմսերի շուկայական արժեքի սահմանում և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում՝ նույն օրենքի 57-րդ և 58-րդ հոդվածներով սահմանված կարգով: Ընդ որում, նման պահանջը ներկայացվում է վերակազմակերպվող կազմակերպությանը, որը այն ուղարկում է վերակազմակերպման մասին որոշմամբ իրավահաջորդ ճանաչված կազմակերպությանը հետգնումն իրականացնելու նպատակով:

Միաժամանակ, պետք է նշել, որ բաժնետոմսերի հետգնման իրավունքի իրացումը՝ այդ բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման մասով ենթարկվում է որոշակի սահմանափակումների: Մասնավորապես, նշվում է, որ բաժնետերը չի կարող պահանջել բաժնետոմսերի շուկայական արժեքի սահմանում, եթե նույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով ուղարկված ծանուցումը պարունակում է դրույթ՝ նույն օրենքով սահմանված կարգով որոշված հետգնման գնի վերաբերյալ:

Նշված իրավակարգավորումը ենթադրում է, որ եթե վերակազմակերպվող կազմակերպության որևէ մասնակից չի ցանկանում շարունակել մնալ վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կամ ընդլայնվող կազմակերպության մասնակից, կարող է դադարեցնել իր մասնակցությունը՝ վերակազմակերպվող

ընկերությունում ունեցած իր բաժնետոմսերը տվյալ
ընկերությանը վաճառելու միջոցով:

Վերականգնողական անձի մասնակիցների
իրավունքների ապահովման կարևոր երաշխիքներ է պարունակում
ևսև Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի այն
կարգավորումը, որի համաձայն վերականգնողական միջոցով
ստեղծվող կամ միացման հետևանքով ընդլայնվող ընկերության
բաժնետոմսերը փոխարկման եղանակով համամասնորեն
ստեղծաբաշխվում են վերականգնողական մասին որոշումն
ընդունելու պահին այդ որոշումն ընդունած իրավականական
անձանց բոլոր մասնակիցների միջև՝ բաժնետոմսերի շուկայական
արժեքով: Ընդ որում, փոխարկման հարաբերակցությունը պետք է
նույնը լինի տվյալ տեսակի (դասի) յուրաքանչյուր բաժնետոմսի
համար:

Վերականգնողական անձի մասնակիցների
իրավունքների ապահովման երաշխիքներ է պարունակում
ևսև Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով սահմանված
ընկերության ընդհանուր ժողովի որոշումները դատական կարգով
վիճարկելու հնարավորությունը, որը իրացնելու համար, սակայն,
նախատեսված է իմպերատիվ պայման, այն է՝ դատարանն իրավունք
ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ
քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության
արդյունքների վրա և թույլ տված խախտումներն էական չեն: Ընդ
որում, պետք է նշել, որ Բաժնետիրական ընկերությունների մասին
օրենքը չի բացահայտում, թե ինչ ասել է մասնակցի իրավունքների
էական խախտում, և այդ հարցի լուծումն, ըստ էության, դարձել է
իրավակիրառ, մասնավորապես դատական պրակտիկայի խնդիրը: Բացի
այդ, օրենսդրությամբ բացակայում են ընդհանուր ժողովի
որոշման բողոքարկման ժամկետները և դրա իրավական
հետևանքները:

Նշված իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս
եզրակացնել, որ ժողովի որոշումները (այդ թվում՝
վերականգնողական մասին) կարող են բողոքարկվել
կազմակերպության մասնակիցների կողմից նման որոշման

կայացման օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով սահմանված կարգը խախտելու, այդ որոշման կայացմանը նախորդող կամ հաջորդող և դրա հետ կապված ընթացակարգային կանոնները չպահպանելու դեպքում: Ընդ որում, կարևոր է նկատել, որ կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումը կարող վերացվել կամ անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ թույլ տրված խախտումները էական են և եթե բողոքարկող մասնակցի ձայնը կազդեր քվեարկության արդյունքների վրա: Սա էլ իր հերթին նշանակում է միայն, որ վերակազմակերպման մասին որոշման կայացման օրենքով սահմանված կարգի խախտումը բավարար չէ նման որոշումը վերացնելու համար:

Օրենքի նման կարգավորումները դրանց մեջ պարունակվող անորոշ ձևակերպումների պայմաններում, պարունակում են մեծամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների չարաչափման և փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների խախտման իրական ռիսկեր՝ հաշվի առնելով նաև քննարկվող իրավադրույթի՝ դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով քննելով «Ինժեզլոբալ» ԲԲԸ-ի բաժնետերեր Համլետ Յովակիմյանի, Գագիկ Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը (վերջիններս պահանջել են անվավեր ճանաչել Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 06.02.2009 թվականի թիվ 1 արձանագրությամբ ընդունված որոշումները, Ընկերության տնօրենների խորհրդի 06.02.2009 թվականի թիվ 1 արձանագրությամբ ընդունված որոշումները, դրանց հիման վրա Գործակալության կողմից 17.06.2009 թվականին կատարված պետական գրանցումը և կանխել Ընկերության կողմից իրականացվող այն գործողությունները, որոնք խոչընդոտելու են «Կադապար» ԲԲԸ-ի, «Մետաղակոնստրուկցիա» ԲԲԸ-ի և Ընկերության փաստացի միաձուլմանը՝ սեփական կապիտալների և բաժնետերերի կազմով) եկել է հետևյալ եզրակացության, մեջբերվում է ուղղակիորեն. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ

հողվածի 13-րդ կետի համաձայն՝ բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել սույն օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, և թույլ տված խախտումներն էական չեն:

Նշված հողվածի վերլուծության հետևում է, որ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը, բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը կարող է ազդել քվեարկության արդյունքների վրա և որոշումն ընդունելիս Բաժնետիրական ընկերության նստի օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտումը պետք է լինի էական:

«Բաժնետիրական ընկերության նստի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հողվածի 1-ին կետի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

«Բաժնետիրական ընկերության նստի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հողվածի 4-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի 67-րդ հողվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն գործով Ընկերության արտահերթ ժողովը հրավիրվել է դրա մասնակցի՝ Ընկերության 51,33 տոկոսի բաժնետոմսերի սեփականատեր Արթուր Կարապետյանի պահանջով, իսկ ժողովին մասնակցել են 6.442 ձայն ունեցող բաժնետերեր, որոնք օրակարգում ընդգրկված 5-րդ հարցի վերաբերյալ միաձայն կողմ են քվեարկել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժողովն ունեցել է քվորում, իսկ որոշումներն ընդունվել են «Բաժնետիրական ընկերության նստի մասին» ՀՀ օրենքի 68-րդ

հոդվածի 4-րդ կետի պահանջի պահպանմամբ: Յետևաբար, Շնկերության բաժնետերեր Գագիկ Կիրակոսյանի և Յամլետ Յովակիմյանի ժողովին չմասնակցելը չի ազդել քվեարկութան արդյունքների վրա, ուստի ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչման ենթակա չէ:»¹⁷⁸:

Փաստորեն, ստացվում է մի իրավիճակ, երբ փոքրամասնությունն կազմող բաժնետերերը կազմակերպության վերակազմակերպման մասին որոշմանը դեմ քվեարկելու դեպքում, եթե թույլ չեն տրվել այդ որոշման կայացման ըստ էության ընթացակարգային խախտումներ, ունեն միայն մեկ իրավունք՝ դադարեցնել իրենց մասնակցությունը բաժնետոմսի կամ բաժնեմասի շուկայական արժեքը ստանալու միջոցով, ինչը չի կարելի համարել բավարարանց իրավունքների արդյունավետ իրացման համար:

Նման իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ կորպորացիայի շահը շատ հաճախ նույնացվում է խոշոր մասնակցի շահի հետ, որի արդյունքում խոշոր բաժնետերերը իրենց անձնական ցանկությունները ներկայացնում են որպես կորպորացիայի շահ, չարաչափում են իրենց իրավունքները, ինչն էլ ստեղծում է ոչ միայն փոքրամասնությունն կազմող բաժնետերերի, այլ նաև կազմակերպության շահերի ոտնահարման հնարավորությունն¹⁷⁹:

Յամեմատական անցկացնելով արտասահմանյան երկրների համանման կարգավորումների հետ՝ պետք է փաստել, որ քննարկվող խնդրի դեպքում փոքրամասնությունն կազմող բաժնետերերն ունեն իրավունքների երաշխավորման ավելի տեսանելի հնարավորություններ:

Գերմանիայում, օրինակ, դատարանները քննելով վերակազմակերպման վերաբերյալ որոշումները վիճարկելու մասին գործերը՝ անպայմանորեն անդրադառնում են օրենքի նորմի խախտման և քվեարկութան արդյունքների փոխկապակցվածութանը: Դատարանը վեճը լուծելիս քննարկում է այն հարցը, թե ինչպիսին կլինեն օբյեկտիվորեն մտածող մասնակցի որոշումը քվեարկութան ժամանակ, եթե իրավունքի խախտում տեղի չունենար:

¹⁷⁸ Տե՛ս թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով Յայաստանի Յանրապետության վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 27-ի որոշումը, ՅՅՊՏ 2011.07.28/45(848).1 Յոդ.1131.10:

¹⁷⁹ Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Յայաստանի Յանրապետության կորպորատիվ իրավունքի որոշ հիմնահարցեր, Դատական իշխանություն, 2013, 6 (163), էջ 69:

Այսինքն, դատարանը գնահատում է, թե օրենքի խախտումը որքանով է անդրադարձել ընդհանուր ժողովի որոշման կայացման վրա¹⁸⁰:

Ընդհանուր առմամբ դատական պրակտիկայի գերմանական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կազմակերպության մասնակիցները վերակազմակերպման մասին որոշումը կարող են վիճարկել անկախ այն հանգամանքից խախտվել են նրանց շահերը, թե ոչ, բավական է միայն որոշման կայացման ընթացքում թույլ տրված օրենքի օբյեկտիվ խախտումը: Իրերի նման վիճակը ընկալվում է որպես կազմակերպության մարմինների գործողությունների լեգալությունն ապահովելու և իրավունքի չարաչափումները գուպելու մեխանիզմ¹⁸¹:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով սահմանված ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է նշված նորմի կիրառման ընթացքում ցուցաբերել համակարգային մոտեցում և անպայմանորեն անդրադառնալ երկու կարևոր հարցերի պարզամասնաճան՝ թույլ տրված խախտումների բնույթին, այդ խախտումների ազդեցությունը ընդհանուր ժողովում քվեարկության արդյունքների և մասնակիցների՝ որևէ կերպ քվեարկելու վրա:

Ինչպես արդեն նշվեց օրենսդրությունը չի նախատեսում ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար դիմելու ժամկետներ և անվավեր ճանաչելու հետևանքներ, ինչը պրակտիկայում առաջացնում է տարբեր խնդիրներ՝ ոչ միայն վերակազմակերպվող ընկերության մասնակիցների իրավունքների ապահովման, այլ նաև տվյալ կազմակերպության պարտատերերի, ինչպես նաև վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կամ ընդլայնվող կազմակերպության և դրա մասնակիցների իրավունքների պաշտպանության համատեքստում:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ, օրինակ, արդեն իսկ պետական գրանցում ստացած և ավարտված

¹⁸⁰ Տե՛ս **Bork**. Beschlussverfahren und Beschlusskontrolle nach dem Referentenentwurf eines Gesetzes zur

Bereinigung des Umwandlungsrechts//ZGR. 1993. էջ 343:

¹⁸¹ Տե՛ս Գերմանիայի Բաժնետիրական ընկերության դաշնային դատարանի 1989 թվականի մայիսի 22-ի որոշումը, Zivilsenat, Urt. vom 22. Mai 1989 // BGHZ. 1989. 107. Band, էջ 307:

վերակազմակերպման մասին որոշումը դատական կարգով անվավեր է ճանաչվում, հարց է առաջանում ինչ իրավական հետևանքներ պետք է առաջանան: Եթե որպես անվավերության հետևանք վերացվելու է նաև վերակազմակերպման պետական գրանցումը, ապա դա անխուսափելիորեն առաջացելու է բացասական հետևանքներ վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպության, դրամասնակիցների շահերի և այդ կազմակերպության արժեթղթերի շրջանառության համար, մասավանդ, որ օրենքով սահմանված չեն նման դեպքերում նշված սուբյեկտների իրավունքների պաշտպանության և քաղաքացիական շրջանառության օբյեկտների շրջանառության կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ երաշխիքներ:

Պրոֆեսոր Ավետիսյանը իր «Կորպորատիվ իրավունքի որոշ հիմնահարցեր Յայաստանի Յանրապետությանում» վերտառությամբ աշխատանքում անդրադառնալով քննարկվող խնդրին՝ նշել է, որ նման իրավիճակներում անհրաժեշտ է պաշտպանել ոչ միայն կորպորատիվ իրավահարաբերության ներքին կողմին առնչվող անձանց շահերը, այլև քաղաքացիական իրավահարաբերությանն ենթին կայունությունն հաղորդելու տեսանկյունից, երրորդ անձանց շահերը, որոնք կարող են խախտվել նման որոշումներն անվավեր ճանաչելիս: Յեղիական առաջարկել է նշված խնդրի լուծման հետևյալ տարբերակը. նախ առաջարկել է սահմանել վերակազմակերպման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի եռամսյա ժամկետ և այդ ժամկետում ժողովի որոշումն անվավեր ճանաչելու դեպքում դրա անվավերության հետևանքներ: Մասնավորապես, թույլ տալ մինչև վերակազմակերպման մասին որոշումը կայացնելը գոյություն ունեցած վիճակի վերականգնում և նախատեսել նաև նոր ստեղծված ընկերության և դրամասնակիցների իրավունքների ապահովման երաշխիքներ¹⁸²:

Պետք է նշել, որ պրոֆեսոր Ավետիսյանի այս առաջարկներն ընդհանուր առմամբ տեղ են գտել Նախագծում: Մասնավորապես, Նախագծի 17-րդ հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձի

¹⁸² Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** նշված աշխատությունը, էջ 60:

վերակազմակերպման մասին որոշումը կարող է անվավեր ճանաչվել վերակազմակերպող իրավաբանական անձի մասնակցի, ինչպես նաև այլ անձանց պահանջով, եթե նրանց նման իրավունքը վերապահված է օրենքով: Այդպիսի պահանջով դատարան դիմելու ժամկետ սահմանված է պետական գրանցամատյանում վերակազմակերպման մասին գրառում կատարելու պահից երեք ամիսը, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով: Նախագծով սահմանվում են նաև ժողովի որոշման անվավերության հետևանքները, մասնավորապես՝ իրավահաջորդության մասով:

Ընդհանուր առմամբ համաձայնվելով տեսության մեջ արտահայտված դիրքորոշմանը և Նախագծում տեղ գտած ձևակերպումներին՝ պետք է նշել, որ մի շարք երկրներում նախատեսված են ժողովի որոշումն անվավեր ճանաչելու ավելի կարճ ժամկետներ: Օրինակ, Վերակազմակերպումների մասին Գերմանայի օրենքի համաձայն վերակազմակերպման մասին ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի իրավունքի իրացման ժամկետը սահմանափակվում է մեկ ամսով¹⁸³:

Տեսաբանները այդ մոտեցումը բացատրում են վերակազմակերպման վերջնական արդյունքները չուշացնելու անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ, այս հարցում ցուցաբերվում է նաև որոշակի զգուշավորություն կապված այն հարց հետ, որ նման կարճ ժամկետը կարող է խոչընդոտել փոքր բաժնետերերի այդ իրավունքի արդյունավետ իրացմանը, մանավանդ այն դեպքերում, երբ վերակազմակերպման որոշումները կընդունվեն խոշոր բաժնետերերի կողմից գաղտնի կարգով¹⁸⁴:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող լուծումներին՝ գտնում ենք, որ դրանք դրական քայլ են վերակազմակերպման գործընթացն ավելի դյուրին և պարզ դարձնելու հարցում, ապահովում են որոշակիություն և ոչ միայն գուտ օրենսդրական մակարդակում, այլ նաև օրենքի պրակտիկ կիրառման համար

¹⁸³ Տե՛ս **Bork**. Նշված աշխատությունը, էջ 343; Schmidt K. Zur gesetzlichen Befstung der Nichtigkeitsklage gegen Verschmelzungs- und Umwandlungsbeschlusse // DB. 1995. Heft 37. էջ 1849; **Kallmeyer H.** Umwandlungsgesetz: Kommentar. Koeln, 1997, S. 142; **SchoeneT.** Die Klagefht des § 14 Abs. 1 UmwG: **Teils Rechtsfortschritt**, teils "Aufforderung" zu sanktionslosen Gcheimbeschlussen? // DB. 1995 Heft 26. էջ 1321:

¹⁸⁴ Տե՛ս **Schoene T.** Die KJagefrist des § 14 Abs. 1 UmwG: **Teils Rechtsfortschritt**, teils "Aufforderung" zusanktionslosen Geheimbeschlussen// DB. 1995. Heft 26. էջ 1321:

սահմանում են որոշակի ուղենիշներ և չափանիշներ, հատկապես ժողովի որոշման անվավերության իրավական հետևանքների մասով՝ ստեղծելով այդ հարցում միասնական և էֆեկտիվ պրակտիկա ձևավորելու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել նաև վերակազմակերպման մասին ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի քննության ընթացքում վերակազմակերպման գործընթացի հետագա ճակատագրի հարցը, մասնավորապես այն, թե մինչև վերակազմակերպման ավարտը դրա մասին ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դեռևս միայն դատարան դիմելը արդյոք որևէ կերպ ազդում է վերակազմակերպման հետագա ընթացքի վրա:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹⁸⁵ 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայցի ապահովման միջոցներից է նաև պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը, ինչը նշանակում է, որ ընկերության մասնակիցը վերակազմակերպման մասին ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի հետ միասին կարող է մինչև դատական կարգով գործի լուծումը հասնել վերակազմակերպման գործընթացի կասեցմանը:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումները բավարար չեն խնդրի համակարգային լուծման համար:

Այսպես, եթե մենք կրկին համեմատական անցկացնենք գերմանական օրենսդրության հետ, ապա կտեսնենք հետևյալ պատկերը. վերակազմակերպման գործընթացը չի կարող ավարտվել այնքան ժամանակ, քանի դեռ ըստ էության չեն քննարկվել և լուծում ստացել վերակազմակերպմանը վերաբերող բոլոր հայցերը և դրանց հետ կապված դատական գործերը¹⁸⁶:

Գտնում ենք, որ վերակազմակերպման գործընթացում կազմակերպությունների մասնակիցների իրավունքի առավել

¹⁸⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրք, ընդունվել է 17.06.1998թ, ուժի մեջ մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

¹⁸⁶ Տե՛ս **Priester H.-J.** Das neue Verschmelzungsrecht // NJW, 1983. -Heft 27., էջ 974:

արդյունավետ պաշտպանության, իրավական որոշակիության և իրավական ակտի կանխատեսելիության սահմանադրաիրավական սկզբունքների ապահովման համար անհրաժեշտ է օրենքով սահմանել, որ մինչև վերակազմակերպման ավարտը (պետական գրանցումը) վերակազմակերպման մասին ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելը կատարվում է վերակազմակերպման հետագա ընթացքը մինչև տվյալ հարցով դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Սույն պարագրաֆում ցանկանում ենք անդրադառնալ նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց տեսակ համարվող բանկերի միացման գործընթացում դրանց մասնակիցների իրավունքների պաշտպանության որոշ հիմնախնդիրների:

Այսպես, Բանկերի մասին օրենքի 68-րդ հոդվածի համաձայն բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր՝ ստանալով Կենտրոնական բանկի նախնական հավանության թուղթ: Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնությունն ստանալու համար բանկը Կենտրոնական բանկի սահմանած ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 19-ի «Բանկերի միացման կարգը հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ¹⁸⁷ (այսուհետ՝ թիվ 190-Ն որոշում) սահմանվում են բանկերի կողմից միացման պայմանագրի կնքման նախնական հավանության ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, միացման պայմանագրի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները և այլ հարաբերություններ:

Միաժամանակ, Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 19-ի թիվ 190-Ն որոշման մեջ

¹⁸⁷ Ընդունվել է 2011 թվականի հունիսի 19-ին, ուժի մեջ մտել՝ 2011 թվականի սեպտեմբերի 11-ին, ՀՀԳՏ 2011.09.01/21(404) Հոդ.331:

փոփոխության ունակության կատարելության մասին» թիվ 193-Ն որոշմամբ¹⁸⁸ Կենտրոնական բանկը սահմանել է որ բանկի միացման ձևով վերականգնվելու դեպքում բացի բաժնետոմսերի փոխարկման դասական եղանակներ կիրառելուց, միացող բանկի բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց կարող են տրամադրվել ինչպես պահպանվող բանկի բաժնետոմսեր կամ այլ արժեթղթեր, այնպես էլ դրաման հատուցում:

Նոր փոփոխությանը նշանակում է, որ բանկերի միացման դեպքում կարող է տեղի ունենալ ոչ միայն բաժնետոմսերի փոխարկում, որի արդյունքում միացող բանկի բաժնետերերը դառնում են պահպանվող բանկի բաժնետեր, այլ նաև այդ նույն բաժնետերերին կարող են տրամադրվել իրենց բաժնետոմսերին համարժեք դրամական հատուցում, որի արդյունքում այդ բաժնետերերը այլևս կորցնում են իրենց մասնակցության իրավունքը պահպանվող բանկում:

Յետաքրքրական է, որ թիվ 193-Ն որոշմամբ որպես նման փոփոխության հիմնավորում առաջին հերթին մատնանշվում է միջազգային իրավական փորձը: Մասնավորապես, նշվում է, որ զարգացած կորպորատիվ իրավունք ունեցող երկրների օրենսդրությունները (օրինակ՝ Delaware General Corporation Law (Title 8, Chapter 1 of the Delaware Code), UK Companies Act 2006) միացման իրականացման տարբերակներ չեն պարտադրում կողմերին, ընդհակառակը, վերջիններս թույլատրում կամ սահմանում են կորպորատիվ միացումների և ձեռքբերումների հնարավոր բազմաթիվ եղանակներ: Բացի այդ, որպես հիմնավորում նշվում է, որ ներպետական իրավական կարգավորումները չեն սահմանափակում թե ինչ եղանակով կամ ինչ բիզնես կառուցակարգերի կիրառմամբ կողմերը պետք է իրականացնեն միացումը, այդ թվում՝ դրա դիմաց վճարումները, իսկ օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը կայանում է նրանում, որ եթե գործարքը համապատասխանում է պատշաճ ընթացակարգի (Due Process) և արդար գնի (Fair Price) միջազգային պրակտիկայում ճանաչված սկզբունքներին, և եթե բավարարվել են վերահսկող մարմնի կողմից ներկայացված

¹⁸⁸ Ընդունվել է 2016 թվականի նոյեմբերի 8-ին, ուժի մեջ մտել՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, ՅՅԳՏ 2016.11.15/23(566) Հոդ.299:

պահանջները, ապա գործարքի պայմանները, այդ թվում՝ միացող բանկի բաժնետերերին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցման եղանակը կամ միջոցները, կարող են ազատորեն որոշել միացման կողմերը:

Այսինքն, բանկերի միացման ձևով վերակազմակերպման գործընթացում բանկերին տրվել է գրեթե բացարձակ ազատություն որոշելու պահպանվող բանկի բաժնետերերի շրջանակը:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները, կորպորատիվ տիպի իրավաբանական անձ համարվող բանկերի միացման ձևով վերակազմակերպման գործընթացում դրանց մասնակիցների իրավունքների պաշտպանության և երաշխավորման գործող իրավակարգավորումների համատեքստում, ապահովում են արդյոք ողջամիտ հավասարակշռություն բանկերի (միացող և պահպանվող) կորպորատիվ շահերի, խոշոր և փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների միջև:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերակազմակերպման միջոցով ստեղծվող կամ միացման հետևանքով ընդլայնվող ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը) փոխարկման եղանակով համամասնորեն տեղաբաշխվում են վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու պահին այդ որոշումն ընդունած իրավաբանական անձանց բոլոր մասնակիցների միջև՝ բաժնետոմսերի շուկայական արժեքով: Ընդ որում, փոխարկման հարաբերակցությունը պետք է նույնը լինի տվյալ տեսակի (դասի) յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) համար: Եթե վերակազմակերպվող ընկերության գործունեության մեկի միևնույն տեսակի (դասի) արժեթղթերի սեփականատերերի քանակը 50 կամ ավելի է, ապա վերակազմակերպվող յուրաքանչյուր ընկերության արժեթղթերի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է անկախ գնահատողի կողմից:

Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի այս կարգավորումը ցույց է տալիս, որ վերակազմակերպման գործընթացում, այդ թվում՝ միացման ժամանակ բաժնետոմսերի կամ բաժնեմատերի փոխարկումը պարտադիր է և բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցման կարգ չի նախատեսում:

Միաժամանակ, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային, ապահովագրական և այլ գործունեության բնագավառներում բաժնետիրական ընկերությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգի և իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով և իրավական ակտերով:

Այժմ փորձ ենք հասկանալ, թե թիվ 190-Ն որոշմամբ սահմանված բաժնետոմսերի դիմաց դրանց սեփականատերերին դրամական հատուցում տալը որքանով է տեղավորվում փոխարկման հարաբերությունների մեջ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արժեթղթերի փոխարկման միասնական հասկացություն սահմանված չէ, տեսական գրականություն մեջ ևս արժեթղթերի փոխարկման հասկացությունը չունի հստակ բանաձևում: Մասնավորապես, Սինենկոն փոխարկումը բնութագրում է որպես նոր թողարկված արժեթղթերի տեղաբաշխման միջոց հին արժեթղթերի հետ փոխանակելու և դրանք շրջանառությունից հանելու տեսքով¹⁸⁹: Այլ տեսակետի համաձայն արժեթղթերի փոխարկման գործընթացը բնութագրվում է որպես իրավաբանական անձի մեկ տեսակի արժեթղթերի փոխանակում մեկ այլ կազմակերպության նույն տեսակի կորպորատիվ արժեթղթերի հետ¹⁹⁰: Ժդանովը անդրադառնալով վերակազմակերպման դեպքում բաժնետոմսերի փոխարկման խնդիրներին՝ այդ գործընթացը բնութագրում է որպես բաժնետոմսերի տեղաբաշխման միջոց, որի արդյունքում վերակազմակերպման գործընթացում մասնակցող կազմակերպությունների արժեթղթերը փոխարկվում են

¹⁸⁹ Տե՛ս **Синенко А. Ю.** Эмиссия корпоративных ценных бумаг: правовое регулирование, теория и практика. М.: Статут, 2002, էջ 138:

¹⁹⁰ Տե՛ս **Ломакин, Д. В.** Некоторые вопросы размещения акций при реорганизации акционерных обществ// Законодательство. 2000, № 4, էջ 16:

վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների արժեթղթերի կամ շարունակում են գոյություն ունենալ և ենթակա են մարման 191: Փոխարկումը դիտարկվում է նաև որպես նովացիա, որը տեղի է ունենում արժեթղթերի թողարկման գործընթացում¹⁹²: Արժեթղթերի փոխարկումը տեսության մեջ ներկայացվում է նաև որպես բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկը¹⁹³:

Վերը նշվածը թույլ է տալիս արժեթղթերի փոխարկումը ամենալայն իմաստով բնութագրել որպես բաժնետոմսի փոխակերպում այլ անվանական արժեք ունեցող կամ մեկ այլ ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարող ենք փաստել, որ թիվ 190-Ն որոշմամբ սահմանված միացման ձևով վերակազմակերպվող բանի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելը չի կարելի դասական իմաստով դիտարկել որպես արժեթղթերի փոխարկման գործընթաց, քանի որ արժեթղթերի փոխարկումը ենթադրում է մեկ արժեթղթի, տվյալ դեպքում բաժնետոմսի (բաժնեմասի) փոխակերպում այլ արժեթղթի (բաժնետոմս, բաժնեմաս), իսկ քննարկվող դեպքում, ըստ էության, բանկի փոքրամասնություն կազմող բաժնետերերի համար տեղի է ունենում բաժնետոմսի առուվաճառքի հարկադիր գործընթաց, որի վրա ազդելու որևէ իրական հնարավորություն վերջիններս, ըստ էության, չունեն:

Նման պայմաններում է հարց է առաջանում, թե արդյոք կարելի է պահպանված համարել սեփականության իրավունքի պաշտպանության և երաշխավորման սահմանադրաիրավական դրույթները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2006 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-630 և 2010 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-903 որոշումներով անդրադառնալով քննարկվող խնդրին ընդհանուր

¹⁹¹ Տե՛ս **Жданов, Д. В.** Реорганизация акционерных обществ в Российской Федерации. М., Лекс-Книга, 2002, էջ 153:

¹⁹² Տե՛ս **Жуков, А. С. Лукьянцев, А. А.** Анализ недействительности/незаконности выпуска акций//Рынок ценных бумаг. 2004. № 5, էջ 39:

¹⁹³ Տե՛ս **Ավետիսյան Վ. Ռ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնարկերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր, 2013, էջ 166:

առմամբ նշել է, որ սեփականության իրավունքից զրկելու ինստիտուտին հատուկ են հետևյալ հատկանիշները՝

- սեփականության իրավունքից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,

- սեփականության իրավունքից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,

- սեփականության իրավունքից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ սեփականության իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը¹⁹⁴:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող են արձանագրել, որ օրենսդրական գործող կարգավորումների և դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունների համատեքստում բանկերի միացման գործընթացի քննարկվող առանձնահատկությունը չի համարվում բանկի մասնակիցների սեփականության իրավունքներից զրկում: Սակայն, մեր կարծիքով, նշված դեպքում առկա են սեփականության իրավունքի սահմանափակման տարրեր, քանի որ անձն, ըստ էության, զրկվում է իր սեփականությունն ազատորեն տնօրինելու իրավունքից:

Չաջորդ կարևոր խնդիրը կայանում է նրանում, թե միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցներին իրենց բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները որքանով են երաշխավորում փոքրամասնությունն կազմող բաժնետերերի, մասնավորապես

¹⁹⁴ Նշվածի մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 և ՍԴՈ-903 որոշումները:

վերակազմակերպման մասին որոշմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած բաժնետերերի իրավունքները:

Այսպես, Բանկերի մասին օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերը (մասնակիցները) իրավունք ունեն բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) կամ դրանց մի մասի հետգնում, եթե որոշում է ընդունվել բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ մասնակիցները քվեարկել են բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:

Բացի այդ, չնայած Բանկերի մասին օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն մեր կարծիքով այս դեպքում կգործի նաև Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքով սահմանված բանկի ընդհանուր ժողովի որոշումը վիճարկելու մասնակցի իրավունքը: Այս դեպքում ևս կգործի այն կանոնը, որի համաձայն դատարանը կարող է ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե խախտումներն էական չեն և մասնակցի ձայնը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր առևտրային բանկերի կանոնադրությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բոլոր բանկերում վերակազմակերպման մասին որոշման ընդունման համար նախատեսում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4, որը նույն օրենքով սահմանված նվազագույն շեմն է:

Միաժամանակ, օրենքով սահմանվում է, որ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Նման պայմաններում ստացվում է, որ իրավաբանական անձի

վերակազմակերպման վերաբերյալ ժողովի որոշումը կարող է ընդունվել կազմակերպության կանոնադրական կապիտալում ընդամենը 40 տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցների ձայներով: Այսինքն, կարող է առաջ գալ կազմակերպության առավելագույնը 60 տոկոս մասնակիցների և նվազագույնը 25 տոկոս մասնակցություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խնդիր:

Մեր կարծիքով, եթե բանկը միացման կարգում նախատեսում է դրամական (փողային) հատուցման տրամադրում միացող բանկի բաժնետերերին կամ դրամական հատուցում և թիվ 190-Ն որոշման նախատեսված այլ եղանակների համակցություն, ապա վերակազմակերպման վերաբերյալ որոշման քվեարկությանը չմասնակցած կամ դեմ քվեարկած մասնակիցների՝ բաժնեմասի հետգնում պահանջելու իրավունքը չի կարող համարվել բավարարելու խիք հետևյալ պատճառով:

Բանկը նախատեսում է, որ իր բաժնետերերը կամ դրանց մի մասը միացումից հետո բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկման արդյունքում ոչ թե դառնալու են պահպանվող բանկի մասնակից, այլ իրենց բաժնեմասի դիմաց ստանալու են դրամական հատուցում: Նման պարագայում իմաստազուրկ է դառնում, օրինակ, որոշմանը դեմ քվեարկած մասնակցի կողմից իր բաժնեմասի հետգնում պահանջելը, քանի որ առանց դրա էլ նաստանալու է դրամական հատուցում: Եվ, կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ բաժնետերը չցանկանալով մտնել դատական գործընթացների մեջ և գիտակցելով, որ դրամական հատուցումը քիչ թե շատ ողջամիտ է, դեմ չի քվեարկի իր իրավունքներն ըստեղծության խախտող որոշման դեմ:

Ինչ վերաբերում է վերակազմակերպման մասին ընդհանուր ժողովի որոշումը վիճարկելուն, ապա պետք է նշել, որ սույն պարագրաֆում արդեն նշել ենք, որ այն գործող կարգավորման պայմաններում չի կարելի համարել իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց:

Այսպես, եթե պահպանվել են ընդհանուր ժողովի գումարման օրենքով սահմանված կարգը, կազմակերպության բոլոր մասնակիցներին ծանուցելու պահանջը, դրամական հատուցման չափը

համապատասխանում է արդար գնի սկզբունքին և դեմ քվեարկած մասնակցի ձայնը ոչինչ չի որոշել, ապա ժողովի որոշման վիճարկումը ևս ըստեղծության ոչինչ չի տադժգոհ բաժնետիրոջը:

Բացի այդ, Բանկերի մասին օրենքով սահմանված են բաժնետոմսի հետգնման այնպիսի սահմանափակումներ, որոնք գործնականում անիրատեսական են դարձնում այդ իրավունքի իրացման հնարավորությունը:

Այսպես, Բանկերի մասին օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակցության հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնությունն տալը, եթե մասնակցության հետգնման դեպքում բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի պահանջները կամ կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները կամ էլ մասնակցության հետգնումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը:

Այսինքն, արակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ վերը նշված հիմքերից մեկով Կենտրոնական բանկը համաձայնությունն չտա մասնակցության հետգնմանը, որի արդյունքում բանկի վերակազմակերպմանը դեմ քվեարկած մասնակիցը զրկվում է իր իրավունքների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների արդյունավետ օգտագործման հնարավորությունից:

Թիվ 190-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո բանկերի միացման նախնական հավանության վերաբերյալ որոշման կայացման (ընդունման) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Բանկերի մասին օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

Բանկերի մասին օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհուրդը սույն հոդվածի 2-րդ կետում նշված համապատասխան գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, կայացնում է նույն հոդվածի 1-ին կետում նախատեսված նախնական հավանության տալու կամ չտալու մասին որոշում:

Նույն օրենքի 4-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ միացման պայմանագրի կնքմանը, եթե՝ բանկի (բանկերի) վերակազմակերպումը կամ ներկայացված փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել պատշաճ կարգով և ձևով կամ ներկայացվել են թերի կամ միացման արդյունքում պահպանվող բանկի ֆինանսական վիճակն էականորեն կվտանգվի, միացման արդյունքում բանկը բանկային շուկայում ձեռք կբերի գերիշխող կամ մենաշնորհի դիրք կամ գործարքի արդյունքում կողմերից որևէ մեկի ավանդատուների, այլ պարտատերերի շահերը կվտանգվեն:

Նշված հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ եթե թիվ 190-Ն որոշմամբ պահանջվող տեղեկությունները և այլ փաստաթղթեր (օրինակ՝ միացման կարգը, պայմաններն ու ժամկետները, համատեղ ժողովում քվեարկության և որոշումների ընդունման կարգը, միացմանը մասնակցող բանկերի համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը և այլն) համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, չեն հանգեցնում բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, մրցակցության և ավանդատուների շահերի համար չեն ունենում բացասական ազդեցություն, Կենտրոնական բանկը տալիս է նախնական համաձայնություն:

Նշվածն, իր հերթին ենթադրում է, որ Կենտրոնական բանկը իրավասու չէ բանկին պարտավորեցնել միացման կարգը սահմանել որևէ կոնկրետ ձևով, ի հարկե բացառությամբ հենց օրենքով և թիվ 190-Ն որոշմամբ սահմանված պահանջների: Դրամասին է վկայում թիվ 193-Ն որոշման հիմնավորման մեջ նշված այն դրույթը, որի համաձայն՝ եթե գործարքը համապատասխանում է Պատշաճ ընթացակարգի (Due Process) և Արդար գնի (Fair Price) միջազգային պրակտիկայում ճանաչված սկզբունքներին, ապա գործարքի պայմանները, այդ թվում՝ միացող բանկի բաժնետերերին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցման եղանակը կամ միջոցները, կարող են ազատորեն որոշել միացման կողմերը:

Պատշաճ ընթացակարգ (Due Process) և արդար գին (Fair Price) կատեգորիաները միջազգային իրավունք են մտել անգլիական ընդհանուր իրավունքից¹⁹⁵: Ամենաընդհանուր բնորոշմամբ պատշաճ ընթացակարգը անձի իրավունքները պահպանելու պետության պարտականությունն է հասարակական հարաբերություններին բոլոր ոլորտներում, որը առաջին հերթին ներառում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը և դրանց իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը (լսված լինելու, ողջամիտ ժամկետում պատասխան ստանալու, իր իրավունքներին միջամտող որոշումները բողոքարկելու և այլն)¹⁹⁶:

Բանկերի միացման գործընթացում արդեն պատշաճ ընթացակարգը ենթադրում է միացման գործարքի կնքման ժամանակ միջազգայնորեն ճանաչված բոլոր սկզբունքների, գործարար շրջանառության սովորույթների և իրավական ակտերով սահմանված պարտադիր նյութական և ընթացակարգային նորմերի պահպանում¹⁹⁷:

Ինչ վերաբերում է արդար գնին, ապա պետք է նշել, որ այն ավելի համալիր և բազմակողմանի կատեգորիա է և ընդհանուր իրավունքի տարբեր դատական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները շատ դեպքերում դժվարություններ են ունենում արդար գնի որոշման ժամանակ, քանի որ պետք է հաշվի առնեն բազմաթիվ տնտեսական գործոններ¹⁹⁸:

Ընդհանրացնելով դատական գործերի ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ արդար գինը միջազգային իրավունքում ընկալվում է որպես տնտեսական կոնցեպցիա, որի դեպքում գնի մեջ հաշվարկվում են միայն տնտեսապես հիմնավորված ծախսերը, իսկ

¹⁹⁵ Պատշաճ ընթացակարգի առաջին լեզու բնորոշումը սահմանվել է «Ազատությունների մեծ խարտիայում» (“The Magna Carta”), մասնավորապես 39-րդ բաժնում, հետևյալ ձևակերպմամբ՝ ոչ ոք չի կարող ձերբակալվել կամ բանտարկվել առանց պատշաճ իրավական և դատական ընթացակարգի: <https://www.bl.uk/magna-carta/articles/magna-carta-an-introduction:>

¹⁹⁶ Տե՛ս **Black H.C** Black's Law Dictionary, Sixth Edition, էջ 500:

¹⁹⁷ Տե՛ս Mergers and acquisitions in the new era of Companies Act, 2014, էջ 12:

¹⁹⁸ Նշվածի մասին առավել մանրամասն Տե՛ս հետևյալ դատական ակտերը՝ Rosenblatt v. Getty Oil Co., 493 A.2d 929, 942 (Del. 1985), Kahn v. Tremont Corp., No. Civ. A. 12339, 1996 WL 145452, at *9 (Del. Ch. Mar.21, 1996), Ryan v. Tad's Enters., Inc., 709 A.2d 682, 693 n.14 (Del. Ch. 1996), Coggins v. New England Patriots Football Club, Inc.:

գործարքից հասույթը չի գերազանցում միջին շուկայական արժեքը¹⁹⁹:

Արդար գնի կողքին շատ հաճախ կիրառում են նաև արդար արժեք (fair value) տերմինը, որը բնութագրվում է որպես գին, որը կվճարվեր սովորական գործարքի շրջանակներում ակտիվի, բաժնետոմսի գնահատման ժամանակ²⁰⁰:

Այս սկզբունքների պահպանումը որոշակի առումով տալիս է բանկի բաժնետերերին երաշխիքներ առայն, որ միացման այս կամ այն կարգ սահմանելիս իրենք կստանան լաված լինելու և իրենց դիրքորոշումն արտահայտելու համար, որը կարող է ապահովվել պաշտած ծանուցման և որոշումների կայացմանը մասնակից դարձվելու միջոցով: Բացի այդ, արդար գնի և արդար արժեքի սկզբունքների պահպանումն էլ բանկի մասնակիցներին հնարավորություն է տալիս սպասելու իրենց բաժնետոմսի կամ բաժնետոմսի դիմաց արդար գին ստանալուն, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համառոտում կարելի է համարել բաժնետոմսի շուկայական արժեքը:

Վերը թվարկված երաշխիքները արդյունավետ կարող են գործել այն դեպքերի համար, երբ բաժնետերերը առանց արտաքին ճնշումների և այլ կողմնակի ազդեցության կողմ են քվեարկել վերակազմակերպման մասին որոշմանը՝ չցանկանալով այլևս մնալ պահպանվող բանկի բաժնետեր և սպասում են միայն արդար հատուցում ստանալուն, իսկ այն դեպքերում, երբ բանկի մասնակիցը դեմ է քվեարկել միացման մասին որոշմանը, ապա քննարկվող երաշխիքները արդյունավետ համարել չի կարելի:

Նախ, եթե ենթադրենք, որ դատական գործընթացի արդյունքում կպարզվի, որ խախտվել է արդար գնի սկզբունքը և բաժնետիրոջը չի տրամադրվել իր բաժնետոմսին համապատասխան չափով հատուցում, ապա դրա արդյունքում բանկի վերակազմակերպման հետադարձ տեղի չի ունենա, այլ միայն պահպանվող բանկը ստիպված կլինի փոխհատուցել միացող բանկի բաժնետիրոջը:

¹⁹⁹ Նշված մասին առավել մանրամասն տե՛ս **Rutheford B. Campbell Jr.** Fair Value and Fair Price in Corporate Acquisitions, University of Kentucky, 1999, էջ 128:

²⁰⁰ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 118:

Ուստի գտնում ենք, որ պատշաճ ընթացակարգի և արդար գնի սկզբունքները ապահովում են, ըստ էության բանկի միացմանը դեմ չարտահայտված մասնակիցների՝ ողջամիտ հատուցում ստանալու իրավունքը և չեն լուծում քվեարկությանը չմասնակցած կամ դեմ քվեարկած մասնակիցների իրավունքների պաշտպանության հարցը:

Անդրադառնալով թիվ 193-Ն որոշման հիմքում դրված միջազգային իրավական փորձին, մասնավորապես Մեծ Բրիտանիայի Կոմպանիաների մասին 2006 թվականի ակտին՝ պետք է նշել հետևյալը:

Անգլիական իրավունքում նախատեսված է վերակազմակերպման գործընթացում վերակազմակերպվող կորպորացիայի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ և բազմաստիճան համակարգ, որի պայմաններում միացող բանկի բաժնետերերին իրենց բաժնեմասի դիմաց դրամական հատուցում տրամադրելը կարելի է համարել ողջամիտ և արդարացի:

Վերակազմակերպման մասին անգլիական իրավունքի հիմքը կազմում են երեք տարրեր՝ վերակազմակերպմանը մասնակցող կողմերի կշռադատված որոշումը, վերակազմակերպման մասին որոշման՝ ձայների որակյալ մեծամասնությամբ ընդունում և դատարանի վճռորոշ դերը: Վերակազմակերպման նախագիծը քննարկվում է դատարանի կողմից, որը լսելով բոլոր շահագրգիռ կողմերին, որոշում է թույլատրել վերակազմակերպումը, թե արգելել այն: Դատարանը գնահատում է այն ռիսկը, որը ողջամտորեն կարող են կրել վերակազմակերպվող իրավաբանական անձի ներդրողները: Եթե կազմակերպության մասնակիցները կամ պարտատերերը գտնում են, որ չեն ստացել վերակազմակերպման մասին բավարար տեղեկատվություն կամ համաձայն չեն միացման կարգի նախագծին, ապա կարող են դիմել դատարան: Վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կազմակերպության 3/4 քվեարկող բաժնետոմսերին տիրապետող մասնակիցների ձայներով, ընդ որում գնահատվում է ոչ թե յուրաքանչյուր մասնակցի անհատական ձայնը, այլ համանման շահեր հետապնդող խմբերի դիրքորոշումը: Բոլոր դեպքերում,

վերակազմակերպման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է դատարանը²⁰¹:

Այս ամենի արդյունքում վերակազմակերպման գործընթացը ներառում է տեղեկատվության բացահայտման, հրապարակայնության, գնահատման, հաշվապահական հաշվառման վարման և բոլոր մասնակիցների նկատմամբ հավասար վերաբերմունք ցուցաբերելու ողջամիտ մեխանիզմներ, որի պայմաններում բացի գուտ բաժնետոմսերի փոխարկումից բաժնետերերին նաև դրամական հատուցում տրամադրելու կանոնակարգումներ սահմանելը կարելի է համարել արդարացի:

Ընդհանրապես, ցանկացած օրենսդրական փոփոխություն կատարելիս անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում, չղեկավարվել իրավիճակային լուծումներ տալու մասնավոր դեպքերով²⁰², անպայմանորեն պարզել կատարվող փոփոխության արդյունքում փոփոխվող նորմերի հետ համակարգային առումով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված նորմերի իրացվելիության մակարդակի հնարավոր փոփոխությունները, կարգավորվող իրավահարաբերության մասնակիցների իրավունքների ապահովման հնարավորությունը, ինչպես նաև պրակտիկ կիրառելիության ողջամտությունն ու

²⁰¹ Տե՛ս UK Companies Act, 2006, Blackstone's Statutes on Company Law 2016-2017, Twentieth Edition, Oxford University Press, 2016, էջ 240:

²⁰² Հարկ է նշել, որ բանկերի միացման գործընթացները նորությունն չեն Հայաստանի ֆինանսական շուկայում, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 376-Ն որոշման ընդունումից հետո, երբ բանկերի համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը 5 միլիարդից բարձրացվեց 30 միլիարդի, դրանք ավելի ինտենսիվացան, որի վառ օրինակն է այն փաստը, որ նախկինում գործող 21 առևտրային բանկերից 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացել են միայն 18-ը (cba.am): Այդ երկու տարիների ընթացքում Կենտրոնական բանկը որևէ փոփոխություն չի կատարել թիվ 190-Ն որոշման մեջ: Եվ միայն 2016 թվականի նոյեմբերի 8-ին Կենտրոնական բանկի խորհուրդը թիվ 193-Ն որոշմամբ սահմանեց քննարկվող իրավակարգավորումը, որի հիմնավորումների մեջ բացակայում են նախկինում նման կարգավորումների բացակայության արդյունքում առաջացած խնդիրները, որոնց լուծմանն էլ պետք է ուղղված լինի առաջակցող իրավակարգավորումը: Ընդ որում, այդ փոփոխությունն ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 25-ին, որին անմիջապես հաջորդել է «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ի և «Արարատ բանկ» ԲԲԸ-ի միացման գործընթացը: Մասնավորապես, 2016 թվականի նոյեմբերի 25-ին «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ն որոշում է միանալ «Արարատ բանկ» ԲԲԸ-ին, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 15-ին Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել և գրանցել է նշված բանկերի միացումը: Այս ամենի արդյունքում թիվ 193-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը թվում է տարօրինակ և տպավորություն է ստեղծում, որ այն, ըստ էության, նպատակ է հետապնդել ապահովելու «Հայկական զարգացման բանկ» ԲԲԸ-ի և «Արարատ բանկ» ԲԲԸ-ի միացման գործընթացը:

նպատակահարմարությունը: Ցանկացած միջազգային կամ արտասահմանյան փորձի իմպլեմենտացում կատարելիս պետք է դիտարկել ոչ միայն հենց իմպլեմենտացվող նորմը կամ կանոնը դիսկրետ, այլ համակարգային կապի մեջ տվյալ պետության իրավական համակարգի, իրավական մշակույթի, իրավական նորմերի պրակտիկ իրացման և ընկալման առանձնահատկությունների հետ, վերհանել համապատասխան իրավական կանոնը սահմանող մարմնի կամքը և նպատակը, ինչպես նաև անպայմանորեն ուսումնասիրել տվյալ նորմի կիրառման վիճակագրությունը: Միայն այդ դեպքում միջազգային փորձի ներառումը կարելի է համարել արդարացված:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Կենտրոնական բանկի կողմից թիվ 193-Ն որոշմամբ առաջարկվող փոփոխությունները, որոնց համաձայն միացման ձևով վերակազմակերպվող բանկի բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց կարող է տրամադրվել դրամական հատուցում, որի արդյունքում նրանք այլևս չեն կարող լինել պահպանվող բանկի բաժնետեր, համարվում են ռիսկային և անարդյունավետ կազմակերպության մասնակիցների իրավունքների պաշտպանության գործող իրավակարգավորումների պայմաններում, չեն ապահովում բանկի կորպորատիվ շահերի և դրամասնակիցների իրավունքների պաշտպանության միջև ողջամիտ հավասարակշռություն, ինչպես նաև իրական հնարավորություն են ստեղծում պահպանվող բանկի բաժնետերերի (ինչու չէ նաև հենց միացող բանկի որոշ բաժնետերերի) համար միացող բանկի բաժնետոմսերը ձեռքբերելու միջոցով զրկելու «անցանկալի բաժնետերերին» պահպանվող բանկի կանոնադրական կապիտալում հետագա մասնակցության իրավունքից՝ առանց վերջիններիս էական հակազդեցությանը հանդիպելու: Ուստի, առաջարկում ենք Կենտրոնական բանկի խորհրդի թիվ 190-Ն որոշմամբ սահմանել, որ միացման պայմանագիրը պետք է պարունակի միացող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման (դրանց դիմաց հատուցման) կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով, որի համաձայն կարող է նախատեսվել միացող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց պահպանվող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) տրամադրում, այլ արժեթղթերի

տրամադրում՝ բացառելով միացող բանկի բաժնետերերին դրամական հատուցում տրամադրելու հնարավորությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պահանջ չի ներկայացրել հենց միացող բանկի մասնակիցը:

ԵՁՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Այս պիսով, ուսումնասիրելով կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձնահատկությունները, բացահայտելով դրանց վերակազմակերպման իրավական էությունն ու բովանդակությունը, քննարկելով և վերհանելով վերակազմակերպման առանձին ձևերի իրավական կարգավորման և վերակազմակերպման գործընթացում շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման որոշ հիմնահարցեր և ամփոփելով կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունը՝ ներկայացնում ենք հետևյալ հիմնական առաջարկություններն ու եզրահանգումները:

1. Վերակազմակերպման իրավական բովանդակության, գիտություն մեջ առկա տարբեր տեսություններին, ինչպես նաև արտասահմանյան իրավական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերակազմակերպումը հանդիսանում է համալիր իրավական ինստիտուտ, որի հատուկ են ինչպես իրավաբանական անձի ստեղծման, այնպես էլ դադարման գործընթացները: Բազմաթիվ գիտնականներ են անդրադարձել վերակազմակերպման իրավական բնույթի բացահայտման հիմնախնդիրներին, որի արդյունքում տեսական գրականության մեջ վերակազմակերպումը ստացել է տարաբնույթ բանաձևումներ: Գիտություն մեջ առկա հայեցակարգերի և տարբեր օրենսդրական դրույթների ուսումնասիրության և համադրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ վերակազմակերպումը հանդիսանում է իրավաբանական անձի ստեղծման և (կամ) դադարման ընթացակարգ, որի արդյունքում իրավանախորդ իրավաբանական անձի իրավունքներն ու պարտավորությունները համապարփակ իրավաաջորդություն անցնում են վերակազմակերպման արդյունքում ստեղծված (պահպանված) իրավաբանական անձին և (կամ) անձանց:

2. Տեսական գրականության մեջ առկա վերակազմակերպման մասին բազմաթիվ իրարամերժ կամ փոխընդդեմ կարծիքների

